19385

# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՐՐՈՐԴ ՍԵՍԻԱՆ

ՍՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

40

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

328(47.925)
Հ-25
ար

27 SEP 2006
15 JAN 2010

# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՐՐՈՐԴ ՍԵՍԻԱՆ

*1939 թ. սեպտեմբերի 1—2-ը*

★

## Ս Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն
## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1940

7 NOV 2013
19383
1615
40

# ТРЕТЬЯ СЕССИЯ ВЕРХОВНОГО СОВЕТА АРМЯНСКОЙ ССР

## СТЕНОГРАФИЧЕСКИЙ ОТЧЕТ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

# ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 1-ին)

---

Խ. Մ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ (Նախագահ)։ Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիան հայտարարում եմ բացված։ (Ծափահարություններ)։

Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննության են ներկայացվում հետևյալ հարցերը.

Առաջին հարց՝ «Հայկական ԽՍՀ աշխատավորության դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության» նախագծի հաստատումը։

Այս հարցը մտցվում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդին կից Որենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից։

Յերկրորդ հարց՝ «Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Որենքի) 116-րդ հոդվածը փոփոխելու և լրացնելու մասին» որենագծի հաստատումը։

Այդ հարցը նույնպես մտցվում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդին կից Որենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից։

Յերրորդ հարց՝ Յերկրորդ և Յերրորդ սեսիաների միջև ընկած ժամանակամիջոցում Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության ընդունած և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի հաստատմանը յենթակա հրամանագրերի մասին։

Ահա այն հարցերի թվարկումը, վորոնք ներկայացվում են Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննության։

Դեպուտատներից ո՞վ է ցանկանում Երրորդ սեսիայի որակարգի առթիվ խոսք վերցնել:

Ս. Ա. ՍԻԱԲԱՆԴՈՎ: Թույլ տվեք ինձ:

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Սիաբանդովին:

Ս. Ա. ՍԻԱԲԱՆԴՈՎ (Կոնդախսազի № 103 ոկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ: Ավագների Խորհրդի անունից առաջարկում եմ Գերագույն Խորհրդի Երրորդ սեսիայի քննությանը ներկայացված ու Նախագահի կողմից հայտարարված հարցերը մտցնել որակարգի մեջ՝ քննելու համար:

ՆԱԽԱԳԱՀ: Ուրիշ ի՞նչ առաջարկներ կան: Չկան: Թույլ տվեք քվեարկելու դեպուտատ Սիաբանդովի առաջարկը՝ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի որակարգի՝ իմ թվարկած հարցերի հաստատման մասին:

Ով կողմնակից է վորպես Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի սեսիայի որակարգ թվարկած հարցերի հաստատմանը, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա: Եվ այսպես, որակարգը հաստատվում է միաձայն:

Անցնում ենք որակարգի առաջին հարցին՝ «Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության» նախագծին:

Զեկուցման համար խոսքը տրվում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդին կից Որենսդրական Ենթադրությունների Հանձնաժողովի նախագահ ընկ. Հ. Թ. Աբաջյանին:

Հ. Թ. ԱԲԱՋՅԱՆ: Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Մոտ ժամանակներս մեր հանրապետությունը ձեռնարկելու յե կարևորագույն քաղաքական կամպանիայի՝ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրություններին:

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Որենսդրական Ենթադրությունների Հանձնաժողովը մշակել է Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը և այն ներկայացնում է ձեր քննությանը:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների կանոնադրությունը կազմված է Ստալինյան Սահմանադրության մեծ սկզբունքների հիման վրա, վորը սոցիալիստական դեմո-



կրատիզմի ծաղկման նոր դարագլուխ բաց արեց, դեմոկրատիզմ, վորի հիմքերը հաստատված եյին դեռ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջին որերին:

Հիմնված լինելով պետական և հասարակական բոլոր վոլորտներում սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքների հետևողական կենսագործման վրա, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները հանդիսանում են ավարտումն Հայկական ԽՍՀ պետական իշխանության բոլոր որգանների վերակառուցման՝ Ստալինյան Սահմանադրության հիման վրա, վորը խորհրդային մարդուն տվել և նրա վրա հաստատել է աշխարհում ամենադեմոկրատիկ իրավունքները: Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը ելնում է պետական իշխանության տեղական որգաններն է՛լ ավելի ամրապնդելու, նրանց աշխատանքի վորակը բարելավելու և այդ որգաններն է՛լ ավելի դեմոկրատականացնելու անհրաժեշտությունից:

Ստալինյան Սահմանադրության հիման վրա առաջին անգամ անցկացվող՝ տեղական խորհուրդների ընտրություններն իրենց թափով, ընտրություններին մասնակցողների և ժողովրդի ընտրյալների թվով ամենախոշոր քաղաքական կամպանիան կլինեն: Պետությունը կառավարելու կկոչվեն Լենինի—Ստալինի կուսակցության աճեցրած ու դաստիարակած հազարավոր նոր մարդիկ: ԽՍՀՄ կյանքում կատարված մեծագույն փոփոխությունները պետական իշխանության տեղական որգանների առաջ հարուցում են նոր խնդիրներ, վորոնք մեր մեծ ու յերջանիկ հայրենիքին առաջադրված են կուսակցության XVIII համագումարի և ընկեր Ստալինի կողմից:

Առաջին անգամ Ստալինյան Սահմանադրության հիման վրա կատարվող՝ պետական իշխանության տեղական որգանների ընտրություններն է՛լ ավելի կամրապնդեն բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության հզորությունը և ուժը, խորհրդային ժողովրդի բարոյական-քաղաքական անխորտակելի միասնությունը և բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի բարեկամական համագործակցությունը, կամրապնդեն ԽՍՀՄ ժողովուրդների մեծ բարեկամությունը և մեր հայրենիքն է՛լ ավելի անհարկու կդարձնեն սոցիալիզմի բոլոր թշնամիների համար:

Մոսկվայի Ստալինյան ընտրական ոկրուգի նախընտրական ժողովում իր արտասանած ճառում ընկեր Ստալինն ասաց.

«Մեզանում, մեր յերկրում, ընդհակառակը, ընտրությունները անցնում են միանգամայն այլ պայմաններում։ Մեզանում չկան կապիտալիստներ, չկան կալվածատերեր, հետևաբար, չկա նաև ճնշում ունևոր դասակարգերի կողմից չունևորների նկատմամբ։ Մեզանում ընտրությունները անցնում են բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի համագործակցության պայմաններում, նրանց փոխադարձ վստահության պայմաններում, յես կասեյի՝ փոխադարձ բարեկամության պայմաններում, վորովհետև մեզանում չկան կապիտալիստներ, չկան կալվածատերեր, չկա շահագործում և չկա, ըստ եության, վոր ճնշում գործադրի ժողովրդի վրա՝ նրա կամքը խեղաթյուրելու համար։

Ահա թե ինչու մեր ընտրությունները հանդիսանում են միակ, իսկապես ազատ և իսկապես դեմոկրատիկն ամբողջ աշխարհում։

Այսպիսի ազատ ու իսկական դեմոկրատիկ ընտրություններ կարող եյին առաջ գալ միայն սոցիալիստական կարգերի հաղթանակի հողի վրա, միայն այն բանի բազայի վրա, վոր մեզանում սոցիալիզմը վոչ թե հենց այնպես կառուցվում է, այլ արդեն մտել է կենցաղի մեջ, ժողովրդի առօրյա կենցաղի մեջ»։

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 3-րդ հոդվածն ասում է՝

«Հայկական ԽՍՀ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների դեպուտատների խորհուրդների»։

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 5-րդ գլուխն ամբողջովին նվիրված է Հայկական ԽՍՀ պետական իշխանության տեղական որգանների կազմակերպմանն ու գործունեյությանը։

Ստալինյան Սահմանադրությունը և նրա վրա հիմնված Հայկական ԽՍՀ Սահմանադրությունը ճշտությամբ վորոշում է այդ որգանների տեղը խորհրդային իշխանության ամբողջ սիստեմում։ Նրանք եյապես ընդլայնում և ճշտորոշում են տեղական խորհուրդների իրավասության սահմանները։ Հայկական ԽՍՀ պետական իշխանության տեղական որգանների ողակային կազմակերպությունը կազմված է 3 հիմնական ողակներից, վորոնք թվարկված են Հայկական ԽՍՀ Սահմանադրության մեջ, այն է՝ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային և գյուղական խորհուրդներ։ Այդ ողակների հետ միասին,



Սահմանադրությունը խոսում է նաև 2 լրացուցիչ ողակների մասին—ռայոնական խորհուրդներ՝ քաղաքներում և ավանային խորհուրդներ։

Քաղաքային խորհուրդներն իրենց հերթին բաժանվում են քաղաքային խորհուրդների՝ ռայոնական յենթակայությամբ և ինքնուրույն վարչական միավոր դարձված քաղաքային խորհուրդներ, վորոնք անմիջաբար յենթարկվում են հանրապետական որգաններին։

Կանոնադրության նախագիծը նախատեսում է Հայկական ԽՍՀ պետական իշխանության տեղական բոլոր որգանների՝ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կարգը։

Ընկե՛ր դեպուտատներ։

Դուք արդեն ստացել եք և, անկասկած, ծանոթացած կլինեք Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրությանը, այդ իսկ պատճառով, կարծում եմ, վոր կարիք չկա նախագծի մանրամասնությունների վրա կանգ առնելու։

Յես կանգ կառնեմ նախագծի հիմնական հարցերի վրա։

## ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի քննությանն առաջադրված կանոնադրության նախագիծն ամբողջապես կառուցված է Հայկական ԽՍՀ Սահմանադրության հիման վրա և բղխում է՝

ա) Ստալինյան Սահմանադրության պահանջներին ճիշտ համապատասխան՝ պետական իշխանության տեղական որգաններն է՛լ ավելի ամրապնդելու և դեմոկրատականացնելու անհրաժեշտությունից.

բ) աշխատավորների դեպուտատների ընտրություններին խորհրդային ամբողջ ժողովրդի գլխովին մասնակցությունն ապահովելու անհրաժեշտությունից։

Հայկական ԽՍՀ Սահմանադրությամբ ամրապնդված սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքներն ամբողջությամբ արտացոլված են պետական իշխանության տեղական որգանների ընտրությունների կանոնադրության մեջ։

Խորհրդային ընտրական իրավունքն իր արտահայտությունն է գտել Հայկական ԽՍՀ Սահմանադրության 109-րդ հոդվածում։

Հայկական ՍՍՀ Սահմանադրության 109-րդ հոդվածին լրիվին համապատասխան, կանոնադրության նախագծի 1-ին հոդվածում ասված է՝ «Հայկական ՍՍՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի հիման վրա, աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների դեպուտատների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ»:

Կանոնադրության նախագծի 2-րդ հոդվածում ասված է.

«Հայկական ՍՍՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի հիման վրա, դեպուտատների ընտրություններն ընդհանուր են. Հայկական ՍՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու աշխատավորների դեպուտատների խորհուրդներում, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով»:

ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարում արտասանած իր ճառում ընկ. Կալինինն ասաց.

«Ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունք մտցնելը գաղտնի քվեարկությամբ՝ յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու մեջ խթանում է այն բանի գիտակցության զարգացումը, թե նա վոչ միայն իրավունքներ, այլ և պարտականություններ ունի, վոր նա պետք է պատասխանատվություն զգա իր ընտրած խորհուրդների համար, վերից վար: Այսպիսով ամբողջ խորհրդային ժողովուրդն անմիջականորեն ներգրավվում է պետական կառավարմանը, և դրանով իսկ հսկայական չափով ամրապնդվում է նաև սոցիալիստական պետականությունը»:

Այսպիսով, մինչև վերջը հետևողականորեն արտահայտելով Ստալինյան Սահմանադրության սոցիալիստական դեմոկրատիզմը, կանոնադրությունը չի թույլ տալիս բուրժուական ընտրական իրավունքին հատուկ վորևէ սահմանափակում, վոր բխում է ռասայական և ազգային հատկանիշներից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից, կրթական ցենզից, անցյալ գործունեությունից, նստակեցությունից և այլն,



վորոնց միջոցով սահմանափակվում են կապիտալիստական յերկրների աշխատավորների ընտրական իրավունքները:

Այնուհետև, համապատասխան Հայկական ՍՍՀ Սահմանադրության 111, 112, 113, 114 և 115 հոդվածներին, կանոնադրությունը նախատեսում է, վոր դեպուտատների ընտրությունները հավասար են, կանայք ընտրելու և ընտրվելու իրավունք են վայելում տղամարդկանց հետ հավասար, Կարմիր բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունք են վայելում բոլոր քաղաքացիների հետ հավասար, ընտրողները աշխատավորների դեպուտատների ընտրությունը կատարում են անմիջականորեն՝ ուղղակի ընտրությունների միջոցով:

Հայկական ՍՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածին լրիվին համապատասխան, կանոնադրության 8-րդ հոդվածը սահմանում է, վոր աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական ոկրուգների: Յուրաքանչյուր ընտրական ոկրուգ համապատասխան խորհուրդն է ուղարկում մեկ դեպուտատ:

«Հայկական ՍՍՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի հիման վրա—ասված է կանոնադրության նախագծի 9-րդ հոդվածում—Հայկական ՍՍՀ տերիտորիայում մյուս բոլոր միութենական հանրապետությունների քաղաքացիները վայելում են Հայկական ՍՍՀ քաղաքացիների հետ հավասար ընտրական իրավունքներ»: Կանոնադրության 9-րդ հոդվածը հանդիսանում է մեր բազմազգ մեծ հայրենիքի ժողովուրդների բարեկամության ու յեղբայրության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության մեծ սկզբունքների արտահայտությունը:

## ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ընտրական ոկրուգների ճիշտ կազմակերպումը և ներկայացուցչության նորմաների սահմանումն ունի մեկ նպատակ՝ իրականացնել իսկական խորհրդային դեմոկրատիան: Կանոնադրության 8-րդ հոդվածում ասված է. «Հայկական ՍՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիման վրա, Հայկական ՍՍՀ աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական ոկրուգների:

Յուրաքանչյուր ընտրական ոկրուգ աշխատավորների դեպուտատների համապատասխան խորհուրդն է ուղարկում մեկ դեպուտատ»: Այսպիսով, խորհուրդների համար աշխատավորների

դեպուտատներ ընտրելու ժամանակ,—լինեն այդ խորհուրդները շրջանային, քաղաքային, ռայոնական՝ քաղաքներում, գյուղական և ավանային,—առանձին ինքնուրույն ընտրական օկրուգներ են կազմվում՝ սահմանված ընտրական նորմաներին համապատասխան:

Աշխատավորների դեպուտատների շրջանային խորհուրդների ընտրության համար ընտրական օկրուգներ են կազմում շրջանային խորհուրդները՝ քաղաքներում, քաղաքային և ռայոնական խորհուրդների ընտրությունների համար՝ համապատասխանորեն քաղաքային և ռայոնական խորհուրդները, իսկ գյուղական ու ավանային խորհուրդների ընտրության համար՝ աշխատավորների դեպուտատների գյուղական ու ավանային խորհուրդները:

Պետք է նշել, որ ներկայացուցչության՝ կանոնադրությամբ նախատեսված նորմաները քիչ տարբերվում են ներկայացուցչության այն նորմաներից, որոնք սահմանված են Հայկական ՍՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածով:

Մի շարք շրջանների ապախոշորացման կապակցությամբ, փոփոխություններ և ճշտումներ են մտցված աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների ներկայացուցչության նորմաների մեջ: Այս կապակցությամբ, Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովը միաժամանակ ձեր քննության է ներկայացնում Հայկական ՍՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի փոփոխման ու լրացման օրինագիծը: Սահմանադրության այդ հոդվածը նվիրված է ներկայացուցչության այն նորմաներին, որոնք սահմանված են Հայկական ՍՍՀ աշխատավորության խորհուրդների ընտրության համար:

Կանոնադրության մեջ ներկայացուցչության նորմաներին են նվիրված 25, 33 և 41 հոդվածները:

Աշխատավորների դեպուտատների շրջանային խորհուրդները, նայած շրջանի բնակչության թվին, կունենան 25-ից մինչև 60 դեպուտատ:

Շրջխորհուրդների մեծ մասը կունենա 25-ական դեպուտատ:

Կանոնադրությամբ սահմանված՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային խորհուրդների ներկայացուցչության նորմաներով, Հայկական ՍՍՀ քաղաքային խորհուրդները կունենան մոտավորապես հետևյալ թվով դեպուտատներ՝ Յերևանը 333, Լենինականը 194, Կիրովականը 50: Մնացած քաղաքները կունե-



նան 35-ական դեպուտատ, քանի որ այդ քաղաքների բնակչությունը 12 հազար հոգուց պակաս է:

Յերևան քաղաքի ռայոնական խորհուրդները կունենան մոտավորապես հետևյալ թվով դեպուտատներ՝ Ստալինյան ռայխորհուրդը՝ 88, Մոլոտովյան ռայխորհուրդը՝ 95, Կիրովյան ռայխորհուրդը՝ 107, Սպանդարյան ռայխորհուրդը՝ 110:

Կանոնադրության 41-րդ հոդվածի հիման վրա, աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգները կազմվում են հետևյալ նորմաներով՝ հազարից ավելի բնակիչ ունեցող գյուղական խորհուրդների ավանների տերիտորիայում բնակչության յուրաքանչյուր 100 հոգուն մեկ ընտրական օկրուգ, սակայն 25 օկրուգից ոչ ավելի· մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղխորհուրդներում և ավաններում կազմվում է 9 ընտրական օկրուգ:

Այսպիսով, մինչև 1000 հոգի բնակիչ ունեցող գյուղխորհուրդը կունենա 9 դեպուտատ, ավելի քան 1000 հոգի բնակիչ ունեցող գյուղխորհուրդը՝ յուրաքանչյուր 100 հոգուց մեկ դեպուտատ, սակայն 25 դեպուտատից ոչ ավելի: Հանրապետության գյուղխորհուրդների մոտ 60%-ը կունենա 9-ական դեպուտատ, որովհետև դրանց բնակչությունը 1000-ից պակաս է: Մնացած գյուղխորհուրդները կունենան 10-ից մինչև 25 դեպուտատ, նայած գյուղխորհուրդների բնակչության թվին:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԸՆՏՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների իսկական դեմոկրատական ընտրություններ անցկացնելու, այդ ընտրությունների ընթացքի վրա իսկական ժողովրդական վերահսկողություն իրագործելու համար՝ հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների ներկայացուցիչներից կազմվում են ընտրական հանձնաժողովներ:

Կանոնադրության 27-րդ և 31-րդ հոդվածների հիման վրա, աշխատավորների դեպուտատների շրջանային խորհրդի ընտրությունների համար ստեղծվում են շրջանային և օկրուգային ընտրական հանձնաժողովներ: Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 4—6 անդամից, իսկ օկրուգային ընտրական հանձնաժողովը կազմվում է՝ նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 2—4 անդամից: Կանոնադրության 35 և 38-րդ

հոդվածների համաձայն, քաղաքներում աշխատավորների դեպուտատների քաղաքային և ռայոնական խորհրդի ընտրությունների համար ստեղծվում են քաղաքներում քաղաքային ու ռայոնական և օկրուգային ընտրական հանձնաժողովներ: Քաղաքներում քաղաքային և ռայոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6—10 անդամից:

Քաղաքներում քաղաքային և ռայոնական խորհրդի ընտրությունների օկրուգային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 2—4 անդամից:

Կանոնադրության V գլխում խոսվում է աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային խորհրդի ընտրությունների, ընտրական օկրուգների և ընտրական հանձնաժողովների մասին: 43–րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր գյուղխորհրդում և ավանում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի ընտրությունների գյուղական, ավանային ընտրական հանձնաժողով: Բացի գյուղական, ավանային ընտրական հանձնաժողովից, կանոնադրության 46–րդ հոդվածի համաձայն, գյուղական, ավանային խորհուրդների ընտրությունների յուրաքանչյուր ընտրական օկրուգում ստեղծվում է օկրուգային ընտրական հանձնաժողով:

Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքներում՝ քաղաքային ու ռայոնական, գյուղական ու ավանային խորհուրդների ընտրության օկրուգային ընտրական հանձնաժողովներ ստեղծելով, մենք դրանով հենց ընտրողների լայն մասսաներ ենք ներգրավում ընտրությունների ակտիվ աշխատանքին:

Ընտրողի՝ իր ընտրական իրավունքներն իրագործելու համար առավելագույն հարմարություններ ստեղծելու նպատակով, ընտրական տեղամասեր են ստեղծվում: Աշխատավորների դեպուտատների ռայոնական, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրության համար ստեղծվում են ընտրական ընդհանուր տեղամասեր: Ընտրական տեղամասերի ճիշտ կազմակերպումը մոտեցնում է ընտրությունների վայրն ընտրողին և ապահովում է իսկապես ընդհանուր ընտրությունների իրագործումը:

Դրանով է ղեկավարվել Օրենսդրական Ենթադրությունների Հանձնաժողովը կանոնադրության նախագիծը մշակելիս:

Ըստ կանոնադրության, ընտրական տեղամասի մեծությունը



սահմանում է խորհուրդը, որպես կանոն, 1500–ից մինչև 2500 բնակչով:

Այնուհետև, կանոնադրության մեջ մատնանշված է, որ 500–ից մինչև 2000 բնակիչ ունեցող գյուղերում կազմակերպվում է առանձին ընտրական տեղամաս, իսկ 500–ից պակաս, բայց 300–ից ոչ քիչ բնակիչ ունեցող գյուղում կամ գյուղախմբերում, այն դեպքերում, երբ այդպիսի գյուղերի հեռավորությունը ընտրական տեղամասի կենտրոնից ավելի յե 10 կիլոմետրից, կարող են առանձին ընտրական տեղամասեր կազմվել: Զորամասերում և զորական միավորումներում քվեարկման առավելագույն հարմարություններ ապահովելու համար ստեղծվում են առանձին ընտրական տեղամասեր՝ ոչ պակաս, քան 50 և ոչ ավելի, քան 1500 ընտրողներով:

Կանոնադրության 56–րդ և 57–րդ հոդվածների հիման վրա, յուրաքանչյուր ընտրական տեղամասում ստեղծվում է տեղամասային ընտրական հանձնաժողով՝ նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6—10 անդամներից: Տեղամասային ընտրական հանձնաժողովների վրա կանոնադրությունը մեծ աշխատանք է դնում ընտրական բյուլետեններն ընդունելու, աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհրդի դեպուտատության յուրաքանչյուր թեկնածուի քվեները հաշվելու ուղղությամբ: Դրանով էլ հենց բացատրվում է այն, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմը սահմանված է 9–ից մինչև 13 անդամից:

Պետք է նկատի առնել, որ ներկայացված կանոնադրությամբ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ զգալի չափով ավելի շատ ընտրողներ կներգրավվեն ընտրական մարմիններում աշխատանք տանելու, քան նախորդ ընտրությունների ժամանակ: Դրանով հենց մեր հայրենիքի միքանի տասնյակ հազարավոր լավագույն մարդիկ կներգրավվեն պետական կարևորագույն աշխատանքի: Սրանք են աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության այն նախագծի հիմնական դրույթները, որ ներկայացված է ձեզ ի քննություն:

## ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵՆՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկե՛ր դեպուտատներ, ընտրական այն օրենքը, որ ներկայացված է ձեզ քննելու, բացառիկ կարևոր նշանակություն

ունի: Մեր առաջ մեծ խնդիրներ են ծառացած տեղական խորհուրդների ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու ուղղությամբ: Ընկեր Ստալինը սովորեցնում է մեզ, թե բանը միայն լավ վորոշում, լավ որենք ընդունելը չէ: Դա գործի սկիզբն է միայն: Իսկ գործի հաջողությունը կախված է կազմակերպական և քաղաքական այն աշխատանքից, վոր մենք պիտի կատարենք այդ որենքն ամբողջովին և լրիվ իրականացնելու համար:

Տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության հաստատումը հզոր միջոց կհանդիսանա պետական իշխանության տեղական մարմինների ամբողջ աշխատանքը բարձրացնելու ու ակտիվացնելու և Ստալինյան 3-րդ հնգամյակի խնդիրների իրականացման գործում այդ մարմինների դերն ուժեղացնելու համար:

Ընկեր Ստալինը Մոսկվայի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների ժողովում ասաց, թե դեպուտատը ժողովրդի ծառան է, և նրա աշխատանքի մասին ընտրողը դատում է նրա պրակտիկ գործերից:

Մեր ընտրողը հենց այդ պահանջներն է առաջադրում իր ընտրյալներին:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդները պետական իշխանության այն մարմիններն են, վորոնք ամենից մոտիկ են բնակչությանը: Խորհուրդների ուսերին խոշոր խնդիր է ծանրացած՝ մոբիլիզացիայի յենթարկել մասսային—իրագործելու այն վիթխարի խնդիրները, վոր նշված են 3-րդ հնգամյակի պլանում:

Տեղերում կուսակցության և Կառավարության վորոշումների պրակտիկ կենսագործման հաջողությունը կախված է տեղական խորհուրդների գործունեյությունից: Մեր Սահմանադրությունը տեղական խորհուրդների վրա մեծ խնդիրներ է դնում:

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն, «Աշխատավորների դեպուտատների խորհուրդները (շրջանի, քաղաքի, քաղաքային ռայոնի, ավանի, գյուղի) ղեկավարում են իրենց տերիտորիայի կուլտուր-քաղաքական և տնտեսական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն, ղեկավարում են իրենց յենթակա կառավարման մարմինների գործունեյությունը, ապահովում են պետական կարգի պահպանումը, աջակցում են յերկրի պաշտպանունակության ուժեղացմանը, ապահովում են որենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը»:



Ընկե՛ր դեպուտատներ: Հայ ժողովուրդը, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների յեղբայրական բարեկամակցությամբ, իր մեծ առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ, դուրս յեկավ ուրախ ու յերջանիկ կյանքի լայն, լուսավոր ուղին:

Աշխատավորության դեպուտատների խորհուրդների առաջիկա ընտրություններն ե՛լ ավելի մեծ ուժով ամբողջ աշխարհի առաջ կցուցադրեն բազմամիլիոն խորհրդային ժողովրդի սերտ համախմբվածությունը բանվորա-գյուղացիական կառավարության շուրջը, Լենինի—Ստալինի կուսակցության շուրջը, մեր մեծ առաջնորդ, հայր և բարեկամ մեծ Ստալինի շուրջը:

Կեցցե՛ Ստալինյան մեծ Սահմանադրությունը:

Կեցցե՛ Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամությունը:

Կեցցե՛ Լենինի—Ստալինի մեր հարազատ կուսակցությունը:

Կեցցե՛ կոմունիզմի մեծ նավավար, մեր սիրելի առաջնորդ, բարեկամ և ուսուցիչ մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Անցնում ենք «Հայկական ԽՍՀ աշխատավորության դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագծի մասին» զեկուցման վերաբերյալ վիճաբանություններին:

Խոսքը տրվում է դեպուտատ Թունյանին:

Ս. Ա. ԹՈՒՆՅԱՆ (Նոր Բութանիայի № 7 օկրուգ):

Ընկե՛ր դեպուտատներ, ամենից առաջ պետք է նշել, վոր Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննությանը և հաստատմանը ներկայացված Հայկ. ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծն ամբողջապես և լիովին համապատասխանում է Ստալինյան մեծ Սահմանադրության սկզբունքներին:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների դեպուտատների ընտրությունների կանոնադրության նախագիծը միանգամայն պարզ ցուցանիշ է այն բանի, թե ինչպես Խորհրդային հզոր Միությունը լրիվ կերպով ապահովում է սոցիալիստական դեմոկրատիզմի կենսագործումը: Դե-

մոկրատիզմ, վոր հայ ժողովուրդը նվաճել է միության ժողովուրդների հետ միասին: Դեմոկրատիզմ, վոր անխախտ կերպով արձանագրված է Ստալինյան մեծ Սահմանադրության մեջ: Դեմոկրատիզմ, վորը Խորհրդային Միության ազատ ժողովուրդը ձեռք է բերել Լենինի—Ստալինի պանծալի կուսակցության և համայն աշխարհի աշխատավորության հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինի ղեկավարությամբ:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի ներկա Սեսիայում քննարկվող ընտրությունների կանոնադրության նախագիծը քաղաքական մի փաստաթուղթ է, վորը մի անգամ ևս ցույց է տալիս ամբողջ աշխարհին խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի մեծ նշանակությունը և խորհրդային սոցիալիստական ընտրական օրենքի միանգամայն դեմոկրատական սիստեմը:

Ընկե՛ր դեպուտատներ, ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայում քննարկվող՝ ընտրությունների կանոնադրության նախագիծը հետապնդում է այն նպատակը, վոր մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացուն հնարավորություն տրվի լրիվ չափով օգտագործելու Ստալինյան Սահմանադրությամբ նախատեսված իր իրավունքները, մասնակցելու ընտրություններին՝ գաղտնի քվեարկությամբ, ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրության կատարելու իրավունքի հիման վրա:

Այսպիսի դեմոկրատիզմի իրականացումը հնարավոր է միայն մեզ մոտ, վորտեղ ինքը ժողովուրդն է յերկրի տերն ու տնօրենը և վորտեղ ինքն է, մեր մեծ կուսակցության ղեկավարությամբ, ստեղծում իր մեծ ապագան, իսկ դրա համար հայ ժողովուրդը, մեր մեծ Միության 170 միլիոն ժողովրդի հետ միասին, պարտական է բոլշևիկների փառապանծ կուսակցությանը և նրա մեծ առաջնորդ ընկեր Ստալինին:

Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունները պետք է դառնան համաժողովրդական տոն, վորը սոցիալիզմի հաղթանակների և Լենինի—Ստալինի ազգային քաղաքականության հաղթանակի մեծ տոնն է լինելու:

Համկ(բ)Կ XVIII պատմական համագումարում մարդկության հանճար, մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը բացառիկ հստակությամբ խոսեց սոցիալիստական պետության դերի և պրոլետարական դիկտատուրայի խնդիրների մասին, սոցիալիստական հասարակակարգից կոմունիստական հասարակակարգին



անցնելու և այդ ժամանակամիջոցում բանվոր դասակարգի դիկտատուրայի հետագա ամրապնդման հարցերի մասին:

Ընկե՛ր դեպուտատներ, Ստալինյան դարաշրջանի մեծ Սահմանադրության կենսագործումը պահանջում է մինչև վերջին իրականացնել մեր յերկրի քաղաքական կյանքի դեմոկրատիզացիան, իսկ այդ նշանակում է հոգատար լինել մասսաների կարիքների նկատմամբ, ունկնդրել նրանց ձայնին, ծառայել նրանց:

Ստալինյան Սահմանադրության կենսագործումը պահանջում է խորհրդային իշխանության օրգանների աշխատանքի այնպիսի վերակառուցում, վորպեսզի այդ վերակառուցումը բխի XVIII համագումարի վորոշումներից, վորպեսզի ընկեր Ստալինի ցուցումների համաձայն ապահովվի համաժողովրդական պրոպագանդայի խնդրի իրագործումը, ժողովրդական տնտեսության զարգացումը և Ստալինյան յերրորդ հնգամյա պլանի կատարումը:

Ընկե՛ր դեպուտատներ, տեղական խորհրդային օրգանների ընտրությունների կապակցությամբ, մեր առաջ դրվում են լուրջ և պատասխանատու խնդիրներ: Աշխատանքի հաջողությունը կախված է մեր ձեռնարկած կազմակերպական և քաղաքական աշխատանքներից, վորպիսի աշխատանքների կազմակերպումով միայն հնարավոր է ներկա Սեսիայում քննության առնվող՝ ընտրությունների կանոնադրության լրիվ կենսագործումը:

Ընկե՛ր դեպուտատներ, հարկավոր է նշել, վոր տեղական խորհրդային օրգանների ընտրության ժամանակ պետք է ունենալ ավելի շատ ընտրական օրգաններ, քան ունեցել ենք ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ, մենք պետք է գործ ունենանք հազարավոր դեպուտատության թեկնածուների հետ, ավելի, քան ունեցել ենք Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ: Յերևան քաղաքի Ստալինյան ռայոնը վորպես կոնկրետ օրինակ պարզ ցույց է տալիս աշխատանքի ծավալը: Յեթե Ստալինյան ռայոնի ընտրող աշխատավորությունը ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ քվեարկել է յերկու, իսկ ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրության ժամանակ 15 դեպուտատների օգտին, ապա քաղաքային և ռայոնական խորհուրդների ընտրության ժամանակ յերկու բյուլետենով պետք է քվեարկի 150-ից ավելի դեպուտատների օգտին: Այստեղ ել յերևում է ագիտացիայի և պրոպագանդայի աշխատանքի ծավալը: Այդ հանգամանքը խնդիր է դնում

ինչպես կուսակցական, կոմյերիտական, պրոֆեսիոնալ և հասա-
րակական կազմակերպությունների առաջ, այնպես և մեր առաջ,
վորապես դեպուտատների, սկսել խորացված բացատրական, մաս-
սայական—ագիտացիոն—պրոպագանդիստական աշխատանք աշխա-
տավորության մեջ, ընտրությունների կանոնադրությունը յու-
րաքանչյուր աշխատավորի և ընտրողի գիտակցությանը հասցնե-
լու համար:

Առանձնապես լուրջ նշանակություն տալով ընտրությունների
կազմակերպման աշխատանքին, մեր բոլոր կազմակերպություն-
ները պետք է անմիջապես ձեռնամուխ լինեն այդ կարևոր աշխա-
տանքի կազմակերպմանը, նկատի ունենալով ընտրողների ցու-
ցակները կազմելու բարդ և պատասխանատու աշխատանքը.
ընտրական տեղամասերի և օկրուգների կազմակերպումը: Մենք
պետք է Ստալինյան ռայոնի օկրուգային և տեղամասային հանձ-
նաժողովների աշխատանքին մասնակից դարձնենք 1000-ից ավելի
լավագույն և ստուգված մարդիկ, վորոնք կարողանան ղեկավա-
րել այդ կարևորագույն գործը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-
թյան Գերագույն Խորհրդի և Հայկական Խորհրդային Սոցիա-
լիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի ընտրու-
թյունների ժամանակամիջոցում կոմունիստական կուսակցությու-
նը աճեցրել է տասնյակ-հազարավոր լավագույն հայրենասերներ,
վորոնք գործնականում ապացուցեցին իրենց անսահման նվիր-
վածությունը Լենինի—Ստալինի մեծ գործին, բանվոր դասա-
կարգի դիկտատուրային և կոմունիզմի վեհ գաղափարներին:

Ընկե՛ր դեպուտատներ, կասկած չկա, վոր ԽՍՀՄ-ի և
ՀԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանա-
կամիջոցում կուտակված հրաշալի փորձով մենք հաջողությամբ
կկատարենք տեղական խորհրդային օրգանների ընտրությունը:

Պետք է վստահորեն հայտարարել, վոր Հայկական Խորհր-
դային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի
Յերրորդ սեսիայի կողմից հաստատված կանոնադրությունը հա-
վանության կարժանանա հայ ժողովրդի կողմից և մեր մեծ կու-
սակցության ղեկավարությամբ պատվով կկատարվի նաև տե-
ղական օրգանների ընտրության այդ կարևորագույն խնդիրը:

Հայ ժողովուրդը, Խորհրդային մեծ Միության ժողովուրդ-
ների հետ միասին, տեղական խորհուրդների ընտրությունների
օրն ամբողջ աշխարհի առաջ կրկին ու կրկին կցուցաբերի իր հա-
մախմբվածությունը բոլշևիկների մեծ կուսակցության և հա-



մայն աշխարհի պրոլետարիատի առաջնորդ մեծ Ստալինի շուրջը:
(Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Ստեփանյանին:

Գ. Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ (Վաղարշապատի № 243 օկ-
րուգ): Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական Խորհրդային Սո-
ցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Յերրորդ
սեսիայի քննությանը ներկայացված՝ Հայկական Խորհրդային Սո-
ցիալիստական Հանրապետության աշխատավորների դեպուտատ-
ների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրու-
թյունն իր ամբողջ բովանդակությամբ համապատասխանում է
ինչպես Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի, այնպես էլ Խոր-
հրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության
Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության վո-
գուն:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների
ընտրության ներկա կանոնադրությունը մի փաստաթուղթ է, վո-
րը մի անգամ ևս ցույց է տալիս հաղթանակած սոցիալիզմի յեր-
կրի Ստալինյան Սահմանադրության մինչև վերջը հետևողական
դեմոկրատիզմը, վորը հիմք է հանդիսանում մեր մեծ հայրենի-
քի բոլոր ժողովուրդների յերջանկության ու բարեկեցության:

Հայ ժողովուրդը, Խորհրդային Միության ժողովուրդների
սերտ ընտանիքում, Լենինի—Ստալինի կուսակցության ղեկա-
վարությամբ, վայելելով աշխատավորների համար մարդկության
պատմության մեջ առաջին անգամ նվաճված լիակատար իրա-
վունքներ, վորոնք իրենց կոնկրետ մարմնացումն են գտել Մեծ
խարտիա հանդիսացող Ստալինյան Սահմանադրության մեջ,
սոցիալիզմի յերկրում կընտրի իր տեղական խորհուրդները: Մեր ընտրու-
թյուններին խորթ են ամեն տեսակ սահմանափակումներ ու ար-
տոնություններ, վորոնք գոյություն ունեն կապիտալի աշխար-
հում. այնտեղ աշխատավոր մարդը զուրկ է քաղաքական և անձ-
նական իրավունքներից, զուրկ է պետության կառավարմանը
մասնակցելու իրավունքից:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների
ընտրությունները կանցնեն լենինյան-ստալինյան ազգային քա-
ղաքականության փայլուն հաղթանակի պայմաններում, Լենինի—
Ստալինի գաղափարների դրոշի ներքո, այն հայրական հոգատա-
րության պայմաններում, վոր ցույց է տալիս մեր մեծ Միության
յեղբայրական ընտանիքում ապրող բոլոր ժողովուրդներին աշ-

խատավոր մարդկության մեծագույն հանճար, Լենինի նավի փորձված ղեկավար մեր մեծ Ստալինը:

Ընկե՛ր դեպուտատներ, քաղաքական ու պետական խոշոր նշանակություն ունեցող խնդիր է աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունը: Մենք պետք է հասնենք այն բանին, վոր Խորհրդային Հայաստանի բոլոր աշխատավորները, կոլտնտեսականները, բանվորները, ծառայողները, վողջ ինտելիգենցիան գլխովին մասնակցեն այդ պետական մեծ նշանակություն ունեցող քաղաքական կամպանիային:

Ունենալով ինչպես ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի, այնպես և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների հարուստ փորձը, մեր կուսակցական, խորհրդային, կոմյերիտական կազմակերպությունները պետք է ավելի քան ուժեղացնեն քաղաքական մասսայական-ագիտացիոն աշխատանքը, ներգրավելով ագիտացիայի աշխատանքին անկուսակցական ակտիվը, յուրաքանչյուր ընտրողին հասցնեն ներկա կանոնադրության յուրաքանչյուր կետը, ապահովեն բոլոր ընտրողների ակտիվ մասնակցությունը, հասնեն այն բանին, վոր ընտրողները լրիվ օգտագործեն տեղական խորհուրդներ ընտրելու իրենց իրավունքները:

Մեծ պարտականություններ են դրված տեղամասային հանձնաժողովների վրա, վորոնց աշխատանքին պետք է ներգրավել Լենինի—Ստալինի կուսակցության գործին մինչև վերջը նվիրված լավագույն ընկերներին:

Այս ընտրությունների կամպանիան ամենամեծ և ամենամասսայական կամպանիան է: Աշխարհը դեռ չգիտե այսպիսի մասսայական, ժողովրդական ընտրություն: Ահա թե ինչու մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է անել ամեն բան, վորպեսզի այս ընտրություններն անցկացվեն մասսաների քաղաքական ակտիվության ավելի բարձր նշանաբանով:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները պետք է ընթանան աշխատավորների լայն մասսաների մոբիլիզացիայի նշանաբանով՝ լրիվ կերպով կատարելու Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության XVIII համագումարի պատմական վորոշումները. այդ ընտրությունները պետք է խթան հանդիսանան ավելի լայն կերպով ծավալելու Ստալինյան յերրորդ հնգամյակի անվան սոցիալիստական մրցակցության և հարվածայնության աշխատանքը, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, ամրաց-



նելու աշխատանքային կարգապահությունը, բոլոր միջոցներով ապահովելու ժողովրդական տնտեսության պլանների անշեղ կատարումը:

Կասկածից վեր է, վոր մեր կուսակցական, խորհրդային, կոմյերիտական կազմակերպությունները, ե՛լ ավելի բարձրացնելով իրենց շարքերի մարքսիստական-լենինյան գաղափարական կոփվածությունը և դասակարգային-հեղափոխական զգաստությունը, ավելի բարձր կպահեն խորհրդային հայրենասիրության դրոշը բազմամիլիոն աշխատավոր մասսաների մեջ, և դասակարգային թշնամուն յերբեք չի հաջողվի այս կամ այն կերպ արգելակելու սոցիալիզմի յերկրի աշխատավորների հզոր յերթը դեպի կոմունիզմի գագաթները:

Հայաստանի աշխատավորները, բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, պողպատե շարքերով համախմբված Ստալինյան Կենտրոնական կոմիտեյի և ժողովուրդների հանճարեղ առաջնորդ, մեր հայր՝ մեծ Ստալինի շուրջը, կգնան դեպի աշխատավորների խորհուրդների ընտրությունները, ձայն տալով մեր յերկրի անվանի մարդկանց՝ Լենինի—Ստալինի կուսակցության գործին անսահման նվիրված կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին: (Ծափահարություններ):

Կեցցե՛ մեր յերջանկության արև մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Սիմոնյանին:

Գ. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ (Քաղսիի № 71 օկրուգ): Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննությանը ներկայացված՝ Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը կառուցված է Ստալինյան Մեծ Սահմանադրությանը միանգամայն համապատասխան, գաղտնի քվեարկությամբ, ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի անսասան սկզբունքների բազայի վրա:

Նախագծի 2-րդ հոդվածում ասված է.

«Հայկական ԽՍՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի հիման վրա„ դեպուտատների ընտրություններն ընդհանուր են. Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությու-

նից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու աշխատավորների դեպուտատների խորհուրդներում, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով»:

Կանոնադրության Նախագիծն ամբողջովին ապահովում է սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքների գործնական իրականացումը: Նրա մեջ սպառիչ ճշտորոշությամբ ու պարզությամբ շարադրված է ընտրական սիստեմը, վորը լիովին հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին իրականացնելու իրենց ընտրական իրավունքները:

Ընկե՛ր դեպուտատներ, Ստալինյան մեծ Սահմանադրությունը օրենսդրական կարգով ամրապնդել է մեր յերկրի տնտեսական ու քաղաքական նվաճումները, սահմանելով մեր յերկրում սոցիալիստական, միակ դեմոկրատական ընտրական սիստեմ, վորի հիման վրա կատարվեցին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունները: Յերկու ամիս առաջ, այս տարվա հունիսի 12-ին, մենք նշեցինք Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների առաջին տարեդարձը: Այդ ընտրություններն ամբողջ աշխարհին ցույց տվին սոցիալիզմի յերկրի քաղաքացիների բարոյական-քաղաքական միասնությունը, վորի մեջ վորպես մի ամբողջություն միաձուլվել է յերկու մեծ ուժ՝ ժողովուրդն ու կոմունիզմը:

Հայկական ԽՍՀ ժողովուրդները, ինչպես և անծայրածիր ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդները, քվեատուփերին մոտենալով, ցուցադրեցին իրենց անսահման սերն ու նվիրվածությունը Լենինի—Ստալինի կուսակցության գործին, միահամուռ կերպով քվեարկեցին կոմունիստների ու անկուսակցականների բլոկի օգտին: Հայ ժողովուրդը, ինչպես մեր ամբողջ Միության ժողովուրդները, առաջին դեպուտատ ընտրեց նրան, ում անունը նորանոր հաղթանակների վոգեշնչող է հանդիսանում, նրան, ով յերկիրը տարավ դեպի ունևոր, կուլտուրական և ուրախ կյանք—մեծ Ստալինին և նրա մերձավորագույն զինակիցներ՝ Վ. Մ. Մոլոտովին ու Ա. Ի. Միկոյանին:

Ընկե՛ր դեպուտատներ: Ընկեր Ստալինը XVIII համագումարին արած իր զեկուցման մեջ խնդիր դրեց՝ «Անշեղորեն կիրառել կյանքում մեր սոցիալիստական Սահմանադրությունը, մինչև վերջն իրականացնել յերկրի քաղաքական կյանքի դեմոկրատիզացիան, ամրապնդել խորհրդային հասարակության բարոյական-



քաղաքական միասնությունը և բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի բարեկամական համագործակցությունը, ամեն կերպ ամրապնդել ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, զարգացնել և արմատավորել խորհրդային հայրենասիրությունը:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները կհանդիսանան յերկրի հետագա դեմոկրատիզացիայի խնդրի իրականացումը:

Լուծելով այդ կարևորագույն խնդիրը, օգտագործելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություններին մեր ձեռք բերած հարուստ փորձը, մենք պետք է հիշենք ընկեր Ստալինի այն ցուցումը, թե չպետք է հանգստանալ ձեռք բերածով, դեմոբիլիզացիայի չենթարկվել, այլ բոլշևիկորեն պատրաստվել տեղական խորհուրդների ընտրություններին: Մենք պետք է ե՛լ ավելի կազմակերպված ձևով անցկացնենք ընտրությունների նախապատրաստական աշխատանքը, շատ ավելի ուժեղացնենք նոր ուժերի մոբիլիզացիան՝ նախընտրական աշխատանքը ծավալելու համար, ամենալուրջ ուշադրություն նվիրենք դեպուտատության թեկնածուների առաջադրմանը: Տեղական խորհուրդների համար պիտի ընտրել այնպիսի մարդիկ, վորոնք իրենց ազնիվ ու նվիրված աշխատանքով արժանացել են ժողովրդի վստահությանը:

Ընկե՛ր դեպուտատներ. Ներկայացված նախագծում նախատեսված են Հայաստանի աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրությունները:

Նախագծով նախատեսված նորմաների համաձայն, մենք Յերևանի Սպանդարյան ռայոնում պիտի կազմակերպենք մոտավորապես 200 ընտրական ոկրուգ և տեղամաս: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի ունենալ ընտրական հանձնաժողովների հազարից ավելի անդամ և մինչև 2500 ագիտատոր:

Մենք միշտ պետք է հիշենք մեծ Ստալինի այն խոսքերը, թե՝

«... Իսկ յեթե մեր ագիտացիոն աշխատանքը բոլշևիկորեն ընթանա, ապա ժողովուրդը չի թողնի, վոր գերագույն մարմինների մեջ թշնամի մարդիկ մտնեն: Նշանակում է՝ հարկավոր է աշխատել, և վոչ թե նվնվալ, հարկավոր է աշխատել, և վոչ թե սպասել, վոր ամեն ինչ տրամադրվի պատրաստի ձևով, վարչական կարգադրությունների կարգով»:

Մենք, դեպուտատներս, չափազանց շատ աշխատանք ունենք

կատարելու տեղական խորհուրդների ընտրություններին օգնելու և դրանք բոլշևիկորեն անցկացնելու գործում, և մենք, Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի դեպուտատներս, պետք է աշխատենք այնպես, ինչպես պահանջում են մեր կուսակցությունն ու մեր ժողովուրդը, մեր մեծ Ստալինը:

Ընկե՛ր դեպուտատներ, լիովին հավանություն տալով Հայկական ՍՍՀ աշխատավորների տեղական խորհուրդների ընտրությունների վերաբերյալ ներկայացված կանոնադրության նախագծին և առաջարկելով հաստատել այն, կարծում եմ, արտահայտած կլինեմ ընդհանուրի կարծիքը:

Ներկայացված նախագիծը Սեսիայի կողմից հաստատվելուց հետո անհրաժեշտ է անմիջապես անցնել գործնական աշխատանքի, վորոշել և կազմակերպել ընտրական օկրուգներ, ընտրական տեղամասեր, համալրել օկրուգային ու տեղամասային հանձնաժողովները, նախապատրաստել տեղամասային շենքերը, կահավորել դրանք, պատրաստել քվեատուփերը և այլն:

Մեր ամբողջ նախնական ու ագիտացիոն աշխատանքը պետք է կառուցենք այնպես, վոր ընտրությունները մի անգամ ևս ցուցադրեն խորհրդային հասարակության մեծ ուժը, նրա բարոյական-քաղաքական միասնությունը, խորհրդային ժողովրդի ուժն ու հզորությունը, կոմունիստների ու անկուսակցականների Ստալինյան բլոկի անպարտելիությունը:

«Ընտրական կամպանիան բարձրացնում է խորհրդային ժողովրդի քաղաքական ու արտադրական ակտիվության նոր ալիք: Պետական կառավարման ղեկի մոտ կկանգնեն իրենց հայրենիքի հարյուր-հազարավոր նոր հայրենասերներ: Սոցիալիստական պետությունն ու նրա տեղական օրգանները կդառնան էլ ավելի միաձույլ ու ամուր:

Խորհրդային ժողովուրդն ավելի մեծ խանդավառությամբ կշարունակի պայքարը՝ Լենինի—Ստալինի կուսակցության կողմից դրված պատմական խնդիրների լուծման համար, Ստալինյան յերրորդ հնգամյակի կատարման ու գերակատարման համար, կոմունիզմի լիակատար հաղթանակի համար» («Известия»):

Կեցցե՛ խորհրդային հզոր ժողովուրդը:

Կեցցե՛ յերկրի ղեկավար ՀամԿ(բ)Կ:

Կեցցե՛ կոմունիզմի ղեկավար; մեր ուսուցիչ և հայր մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Սավադյանին:

Ա. Հ. ՍԱՎԱԴՅԱՆ (Գյամրեզի № 155 օկրուգ):



Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից սեսիայի քննությանն ու հաստատմանը ներկայացված՝ աշխատավորների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների դեպուտատների ընտրությունների կանոնադրության նախագիծը լիովին համապատասխանում է ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրության և նրա ծնունդ՝ Հայկական ՍՍՀ Սահմանադրության պահանջներին:

Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը լիակատար կերպով իր մեջ արտացոլում է մեր ազատ հայրենիքի և նրա միլիոնավոր աշխատավորների ձեռք բերած դեմոկրատական իրավունքները, իրավունքներ, վորոնք նվաճվել են Լենինի—Ստալինի մեր պանծալի կուսակցության ղեկավարությամբ, Ստալինյան յերկու հնգամյակների հաջող կատարման և տնտեսական ու քաղաքական բնագավառներում ձեռք բերված հսկայական նվաճումների հետևանքով:

ԽՍՀՄ-ի միլիոնավոր աշխատավորները, Ստալինյան Սահմանադրության հիման վրա, մոտ անցյալում, մեծ վոգևորությամբ ու անասելի համախմբվածությամբ կոմունիստների ու անկուսակցականների անխորտակելի բլոկ կազմած, առաջին անգամ ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկությամբ ընտրեցին ԽՍՀՄ-ի գերագույն մարմինը՝ Խորհրդային պառլամենտը, միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդները:

Այդ ընտրությունները հանդիսացան մեր աշխատավորության դեպի իրենց հայրենիքը տածած սիրո արտահայտությունը, Լենինի—Ստալինի կուսակցության շուրջը համախմբված միլիոնավոր աշխատավորների հաղթանակի արտահայտությունը, մեր նվաճումները և մեր հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողը պաշտպանելու համար նրանց մշտական պատրաստակամության արտահայտությունը: Այդ ընտրությունները քաղաքական-դաստիարակչական դպրոց հանդիսացան մեր յերկրի բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի համար:

Առաջիկա ընտրությունները իրենց մասշտաբով ավելի լայն են, ավելի մասսայական: Ստալինյան Սահմանադրության համաձայն, աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությամբ կավարտվի Հայկական ՍՍՀ պետական իշխանության բոլոր օր-

դամների վերակառուցումը: Այդ նշանակում ե, վոր հազարավոր նոր աշխատավորներ հաղորդակից կլինեն վոչ միայն ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը, այլև յերկրի կառավարման պատասխանատու գործին:

Ջախջախելով տրոցկիստական, բուխարինական, բուրժուական-նացիոնալիստական թշնամիների վերջին մնացորդները, մեր մեծ ուսուցիչ և հայր Ստալինի փայփայանքով աճած ու ծաղկած մեր հանրապետության բանվորներն ու բանվորուհիները, կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները, մեր հարազատ ինտելիգենցիան աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրություններին հանդես կգան ե՛լ ավելի միաձույլ ու մարտական շարքերով և բարձր պահած Լենինի—Ստալինի կուսակցության դրոշը, ապահովելով կոմունիստների և անկուսակցականների բլոկի հաղթանակը, մեր հանրապետության տեղական խորհուրդների համար կընտրեն կոմունիզմի վեհ գաղափարներին մինչև վերջը նվիրված հայրենասերներ:

Աշխատավորների դեպուտատների խորհուրդների առաջիկա ընտրությունները մեկ անգամ ևս ամբողջ աշխարհին ցույց կտան, վոր անբաժանելի յեն մեր ժողովուրդն ու նրա առաջավոր ջոկատ, ամեն փորձություններից հաջողությամբ դուրս յեկած կոմունիստական կուսակցությունը, վոր անխորտակելի յե ՍՍՀՄ-ի յեղբայրական ժողովուրդների ստալինյան բարեկամությունը, վոր մեր սրբազան հայրենիքի սահմանների վրա ձեռք բարձրացնող ամեն մի թշնամի մահացու հարված կստանա:

Հայկական ՍՍՀ-ում մեզանից յուրաքանչյուրն ականատես է յեղել այն վերաբերմունքին, վոր ցույց տվեց ՍՍՀՄ-ի կառավարության վորոշմանը՝ չհարձակվելու մասին դեռ վերջերս կնքված գերմանո-խորհրդային պայմանագրի առթիվ: Մեր բանվորներն ու բանվորուհիները, արդյունաբերության առաջավորները, ստախանովյան շարժման 4-րդ տարեդարձի կապակցությամբ, աշխատանքի արտադրողականության բարձրացման և վորակի բարելավման նոր որինակներ են ցույց տալիս: Մեր կոլտնտեսային աշխատավորությունը, վոգեշնչված ՍՍՀՄ-ի գյուղատնտեսության փայլուն հաջողություններով, վորոնք արտացոլված են ՍՍՀՄ-ի գյուղատնտեսական ցուցահանդեսում, մրցության նոր թափով լծվել ե սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացման և անասնաբուծության հետագա վերելքի գործին: Այդ վոգևորությունը կրկնապատկվելու և յեռապատկ-



վելու յե աշխատավորների շրջանային, գյուղական և ավանային խորհուրդների դեպուտատների առաջիկա ընտրությունների նախապատրաստման և անցկացման շրջանում:

Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրության կանոնադրությունն արտացոլում ե խորհրդային քաղաքացու իրավունքները, վորոնք ամրագրված են Ստալինյան Սահմանադրությամբ:

Այդ կանոնադրությունը չգիտե գույքային, կրթական, ռասայական և այլ սահմանափակումներ, վորոնք հատուկ են բուրժուական հասարակությանը:

Դրա հետ միասին, առանձնապես ցուցանշական ե այն, վոր ՍՍՀՄ-ի մնացած բոլոր հանրապետությունների քաղաքացիները Հայկական ՍՍՀ-ի տերիտորիայում վայելում են Հայկական ՍՍՀ քաղաքացիների հետ համահավասար ընտրական իրավունքներ:

Այդ բանի մեջ արտացոլված ե ՍՍՀՄ-ի ժողովուրդների բարոյական-քաղաքական միասնությունը: Այդ միասնության աղբյուրն ե հանդիսացել, հանդիսանում ե և հանդիսանալու յե մեր հարազատ կոմունիստական կուսակցությունը և ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների դեպուտատների ընտրությունները մեկ անգամ ևս ցույց կտան այդ միասնությունը ու վերջինս վոգեշնչող մեր անպարտելի կուսակցության ուժը:

Առաջիկա ընտրությունների կապակցությամբ, խորհրդային կազմակերպությունների վրա մեծ պատասխանատվություն ե ընկնում ընտրական հանձնաժողովների կազմում հարյուրավոր և հազարավոր մարդկանց առաջադրելու, այժմվանից ընտրական շենքեր հատկացնելու և նախապատրաստական աշխատանքները կատարելու գործում:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ ե ամենուրեք ծավալել ընտրությունների կանոնադրության մասսայականացման աշխատանքը, վորպեսզի յուրաքանչյուր ընտրող պարզ հասկանա, վոր ինքը միաժամանակ քվեարկելու յե թե՛ շրջանային և թե՛ գյուղական խորհուրդների դեպուտատների ոգտին:

Հավանություն տալով ընտրությունների կանոնադրության նախագծին և հաստատելով այն, չպետք ե մոռանալ, վոր ընտրությունները—ինչպես ասել ե ընկեր Ստալինը—ընտրողների ձեռքում հզոր միջոց են հանդիսանում ընդդեմ վատ աշխատող որգանների:

Ընկե՛ր պատգամավորներ, նախապատրաստվելով աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրություններին, անհրաժեշտ է ամենուրեք ամրապնդել իշխանության տեղական մարմինների աշխատանքը, մոբիլիզացիայի յենթարկել աշխատավորության ակտիվությունը՝ կուսակցության XVIII համագումարի կողմից հաստատված Ստալինյան յերրորդ հնգամյակի վիթխարի խնդիրները և Հայաստանի աշխատավորության թանգագին, սիրելի բարեկամ մեծ Ստալինի ցուցումները լիովին կենսագործելու համար: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է պատգամավոր Աբրահամյանին:

Ռ. Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (Արշալույսի № 246 ոկրուգ): Ընկե՛ր պատգամավորներ, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննարկմանը և հաստատմանն է ներկայացված «Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրության կանոնադրության» նախագիծը:

Աշխատավորների պատգամավորների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության հաստատումով մեր յերկրում կկենսագործվի միակ դեմոկրատական սոցիալիստական ընտրական սիստեմը, վորն ընդունված է աշխարհում ամենադեմոկրատիկ Ստալինյան Սահմանադրության հիման վրա, մի Սահմանադրություն, վորն արտացոլում է իր մեջ մեր կարգերի տնտեսական ու քաղաքական կյանքի հզորությունը, վորով վոչ միայն ամրապնդվեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության նվաճումները, այլև սահմանվեց սոցիալիստական ընտրության այնպիսի սիստեմ, վորի նմանը չի տեսել վոչ մի հասարակակարգ: Նման դեմոկրատական ընտրություններ կարող են լինել միայն սոցիալիզմի յերկրում: (Ծափահարություններ):

Ընկե՛ր պատգամավորներ, մեր Սեսիայի քննությանը ներկայացված կանոնադրությունը մի անգամ ևս ապահովում է Ստալինյան Սահմանադրությամբ ամրապնդված դեմոկրատիզմը, վորն արտահայտվում է ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության սկզբունքով: Կանոնադրության նախագծի ընդունումն ու կենսագործումն ապահովում է խորհրդային քաղաքացիների ստալինյան ընտրական իրավունքների իրականացումը. այդ իսկ պատճառով, կարծում եմ, սխալված չեմ լինի և ձեր բոլորի ցանկությունն արտահայտած կլինեմ՝ առաջարկություն



մտցնելով լիովին ու ամբողջովին ընդունել ընտրությունների ներկա կանոնադրությունը:

Մեր մեծ, լայնածավալ յերկրի բազմամիլիոն ժողովուրդները ընտրությունների նախընթաց յերկու փորձով են դիմավորում աշխատավորների պատգամավորների տեղական խորհուրդների ներկա ընտրությունները:

1937 թ. դեկտեմբերի 12-ին յերկիրն ընտրեց իր գերագույն մարմինը. դրան հաջորդեցին 1938 թ. ընթացքում տեղի ունեցած՝ միութենական 11 հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունները:

Այդ ընտրությունների ժամանակ մեր մեծ Միության բոլոր ժողովուրդները ցույց տվին իրենց անհուն նվիրվածությունն ու համախմբվածությունը Լենինի—Ստալինի կուսակցության շուրջը: Ընտրողները, կոմունիստների և անկուսակցականների անխախտ բլոկում, ամենուրեք ձայն տվին ժողովրդի արժանավոր զավակներին, Լենինի—Ստալինի գործին մինչև վերջը նվիրված մարդկանց:

Վորպես մեր ժողովրդի սիրո արտահայտություն, թե Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի և թե միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների առաջին պատգամավոր ընտրվեց մեծ Ստալինը:

Այն հոյակապ հաջողությունները, վոր մենք ձեռք բերինք Գերագույն Խորհուրդների ընտրությունների ընթացքում, արդյունք են կուսակցության կազմակերպական, քաղաքական և ագիտացիոն աշխատանքի, մեր սոցիալիստական դեմոկրատական Սահմանադրության շուրջը տարված ագիտացիոն աշխատանքի, մեր կուսակցության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման:

Ընկե՛ր պատգամավորներ, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների առաջիկա ընտրությունները մեզանից պահանջում են ավելի քան լուրջ նախապատրաստական աշխատանք, մասսայական-քաղաքական բացատրական աշխատանքի նոր թափ, պահանջում են՝ ավելի ծավալել մեր բանվորների, մեր կոլտնտեսային գյուղացիության, մեր ինտելիգենցիայի մեջ այնպիսի աշխատանք, վորպեսզի ընտրական այս օրենքը դառնա յուրաքանչյուր ընտրողի սեփականությունը, վորով և լիովին ապահոված կլինենք աշխատավորների պատգամավորների տեղական խորհուրդների ընտրությունների

կանոնադրության կենսագործումը։ Յես կարծում եմ՝ աշխատանքի հաջող կազմակերպմամբ Հայաստանի աշխատավորությունը կհասնի այն արդյունքին, որին հասել է մեր հանրապետության Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ, և աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների համար կընտրի ժողովրդի արժանավոր զավակներին, Լենինի—Ստալինի գործին մինչև վերջը նվիրված մարդկանց։

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածով սահմանված են աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների ներկայացուցչության նորմաները, որի համաձայն Հայկական ԽՍՀ-ում պետք է ստեղծել քաղաքային խորհուրդների գծով մոտավորապես 787 օկրուգներ, քաղաքային-ռայոնական խորհուրդների գծով մոտավորապես 400 օկրուգներ, շրջանային խորհուրդների գծով մոտավորապես 1051 օկրուգներ, գյուղական խորհուրդների գծով մոտավորապես 9330 օկրուգներ։

Այս բոլոր օկրուգներում և հանձնաժողովներում աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու համար պահանջվում է թվով մոտավորապես 50·000 մարդ։ Վաղարշապատում մենք կունենանք մոտավորապես 622 օկրուգ։ Ուստի անհրաժեշտ է, որ մենք աշխատենք լրջորեն, որպեսզի օկրուգային հանձնաժողովների համար ընտրվեն լավագույն ու ստուգված մարդիկ։ Անհրաժեշտ է հենց այժմվանից լավ նախապատրաստել տեղամասերը և կազմակերպել բոլոր աշխատանքներն այնպես, որ մեր աշխատավորությունը լիովին կազմ ու պատրաստ դիմավորի ընտրությունները։ Յես գտնում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը, որպես ժողովրդի ընտրյալ, ակտիվ կերպով պետք է լծված լինի այդ աշխատանքին, որպեսզի դրանով իսկ կենսագործենք կուսակցության և կառավարության պահանջը՝ կազմակերպված ու հաջող անցկացնել ընտրությունները։

Ընկե՛ր դեպուտատներ, առաջիկա ընտրություններն ե՛լ ավելի պատասխանատու և բարդ են, նկատի ունենալով, որ մենք խորհուրդների համար ընտրելու յենք հազարավոր մարդկանց, որոնք ղեկավարելու յեն մեր սոցիալիստական արդյունաբերությունը և կազմակերպելու յեն մեր գյուղատնտեսությունը։ Առաջիկա ընտրությունները պետք է ընթանան Համկոմկուսի XVIII համագումարի որոշումների և մեծ Ստալինի ցուցումների լիակատար ու անթերի կենսագործման նշանաբանով։ Մեր նախըն-



տրական կազմակերպական և ագիտացիոն աշխատանքը պետք է կազմակերպենք այնպես, որ մեր ամբողջ աշխատավորությունը ցույց տա իր միասնությունը և կոմունիստների ու անկուսակցականների բլոկի անխախտելիությունը, մեր ժողովրդի համախմբվածությունը Լենինի—Ստալինի կուսակցության շուրջը։

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները հանդիսանալու յեն խոշոր դեմոնստրացիա, ժողովրդական խոշոր տոն, որը արտահայտելու յե սոցիալիզմի յերկրի ժողովրդի անհուն սերն ու նվիրվածությունը Լենինի—Ստալինի կուսակցությանը, մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեյին և մեր բոլորիս սիրելի մեծ Ստալինին։ (Ծափահարություններ)։

ՆԱԽԱԳԱՀ։ Խոսքը տրվում է դեպուտատ Աբասովին։

ԱԲԱՍՈՎ ԻԲԻՇ ՎԱԼԻ ՈՂԼԻ (Զանախչիի № 160 օկրուգ)։ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ, շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային աշխատավորների դեպուտատների ընտրության կանոնադրության նախագիծը, որը ներկայացված է մեր Սեսիային ի հաստատություն, կազմված է Ստալինյան Սահմանադրության հիման վրա։

Համաձայն սույն կանոնադրության նախագծի, հայ ժողովուրդը աշխատավորության դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների իր դեպուտատներին ընտրում է գաղտնի քվեարկությամբ։

Մեր յերկրում, Ստալինյան Սահմանադրության դրոշի տակ, խորհրդային դեմոկրատիան օրըստօրե զարգանում ու ծաղկում է։

Ընկե՛ր դեպուտատներ, անցյալ տարի հունիսի 12-ին հայ ժողովուրդը մեր հայրենիքի հավատարիմ զավակներին ընտրեց Գերագույն Խորհրդի դեպուտատ։ Այդ ընտրությունները սոցիալիստական դեմոկրատիայի և լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության փայլուն ցուցադրումն եյին։

Կարմիր գծից դուրս կապիտալիստները վոչնչից չեն խորշում ժողովրդական լայն մասսաներին պետական գործերից հեռու պահելու համար։ Այդ է բուրժուական ընտրական օրենքի իսկական նպատակը։

Մեր հզոր խորհրդային պետական սիստեմում, խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի սիստեմում, մեր հզոր և անպարտելի հայրենիք ԽՍՀՄ-ում, Լենինի—Ստալինի կուսակցության և մեծ Ստալինի ղեկավարությամբ, ապահովված է բոլոր

կանոնադրության կենսագործումը: Ես կարծում եմ՝ աշխատանքի հաջող կազմակերպմամբ Հայաստանի աշխատավորությունը կհասնի այն արդյունքին, վորին հասել է մեր Հանրապետության Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ, և աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների համար կընտրի ժողովրդի արժանավոր զավակներին, Լենինի—Ստալինի գործին մինչև վերջը նվիրված մարդկանց:

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածով սահմանված են աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների ներկայացուցչության նորմաները, վորի համաձայն Հայկական ԽՍՀ-ում պետք է ստեղծել քաղաքային խորհուրդների գծով մոտավորապես 787 ոկրուգներ, քաղաքային-ռայոնական խորհուրդների գծով մոտավորապես 400 ոկրուգներ, շրջանային խորհուրդների գծով մոտավորապես 1051 ոկրուգներ, գյուղական խորհուրդների գծով մոտավորապես 9330 ոկրուգներ:

Այս բոլոր ոկրուգներում և հանձնաժողովներում աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու համար պահանջվում է թվով մոտավորապես 50·000 մարդ: Վաղարշապատում մենք կունենանք մոտավորապես 622 ոկրուգ: Ուստի անհրաժեշտ է, վոր մենք աշխատենք լրջորեն, վորպեսզի ոկրուգային հանձնաժողովների համար ընտրվեն լավագույն ու ստուգված մարդիկ: Անհրաժեշտ է հենց այժմվանից լավ նախապատրաստել տեղամասերը և կազմակերպել բոլոր աշխատանքներն այնպես, վոր մեր աշխատավորությունը լիովին կազմ ու պատրաստ դիմավորի ընտրությունները: Ես գտնում եմ, վոր մեզանից յուրաքանչյուրը, վորպես ժողովրդի ընտրյալ, ակտիվ կերպով պետք է լծված լինի այդ աշխատանքին, վորպեսզի դրանով իսկ կենսագործենք կուսակցության և կառավարության պահանջը՝ կազմակերպված ու հաջող անցկացնել ընտրությունները:

Ընկե՛ր դեպուտատներ, առաջիկա ընտրություններն ե՛լ ավելի պատասխանատու և բարդ են, նկատի ունենալով, վոր մենք խորհուրդների համար ընտրելու յենք հազարավոր մարդկանց, վորոնք ղեկավարելու յեն մեր սոցիալիստական արդյունաբերությունը և կազմակերպելու յեն մեր գյուղատնտեսությունը: Առաջիկա ընտրությունները պետք է ընթանան Համկոմկուսի XVIII համագումարի վորոշումների և մեծ Ստալինի ցուցումների լիակատար ու անթերի կենսագործման նշանաբանով: Մեր նախընտրական կազմակերպական և ագիտացիոն աշխատանքը պետք է կազմակերպենք այնպես, վոր մեր ամբողջ աշխատավորությունը ցույց տա իր միասնությունը և կոմունիստների ու անկուսակցականների բլոկի անխախտելիությունը, մեր ժողովրդի համախմբվածությունը Լենինի—Ստալինի կուսակցության շուրջը:



Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները հանդիսանալու յեն խոշոր դեմոնստրացիա, ժողովրդական խոշոր տոն, վորը արտահայտելու յե սոցիալիզմի յերկրի ժողովրդի անհուն սերն ու նվիրվածությունը Լենինի—Ստալինի կուսակցությանը, մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեյին և մեր բոլորիս սիրելի մեծ Ստալինին: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: *Խոսքը տրվում է դեպուտատ Աբասովին:*

ԱԲԱՍՈՎ ԻԲԻՇ ՎԱԼԻ ՈՂԼԻ (*Զանախչիի № 160 ոկրուգ*): Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ, շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային աշխատավորների դեպուտատների ընտրության կանոնադրության նախագիծը, վորը ներկայացված է մեր Սեսիային ի հաստատություն, կազմված է Ստալինյան Սահմանադրության հիման վրա:

Համաձայն սույն կանոնադրության նախագծի, հայ ժողովուրդը աշխատավորության դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների իր դեպուտատներին ընտրում է գաղտնի քվեարկությամբ:

Մեր յերկրում, Ստալինյան Սահմանադրության դրոշի տակ, խորհրդային դեմոկրատիան որըստորե զարգանում ու ծաղկում է:

Ընկե՛ր դեպուտատներ, անցյալ տարի հունիսի 12-ին հայ ժողովուրդը մեր հայրենիքի հավատարիմ զավակներին ընտրեց Գերագույն Խորհրդի դեպուտատ: Այդ ընտրությունները սոցիալիստական դեմոկրատիայի և լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության փայլուն ցուցադրումն եյին:

Կարմիր գծից դուրս կապիտալիստները վոչնչից չեն խորշում ժողովրդական լայն մասսաներին պետական գործերից հեռու պահելու համար: Այդ է բուրժուական ընտրական որենքի իսկական նպատակը:

Մեր հզոր խորհրդային պետական սիստեմում, խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի սիստեմում, մեր հզոր և անպարտելի հայրենիք ԽՍՀՄ-ում, Լենինի—Ստալինի կուսակցության և մեծ Ստալինի ղեկավարությամբ, ապահովված է բոլոր

քաղաքացիների մասնակցությունը պետական իշխանության մարմինների կառավարման գործում:

Խորհրդային քաղաքացու ընտրական իրավունքները վոսկե տառերով են արձանագրված Ստալինյան Սահմանադրության մեջ:

Ընկե՛ր դեպուտատներ, շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունները մի անգամ ևս ցույց են տալու ամբողջ աշխարհին խորհրդային իշխանության անսասան ուժը, ԽՍՀՄ-ի ժողովուրդների ստալինյան անխախտ բարեկամությունն ու նրանց բարոյական-քաղաքական միասնությունը:

Աշխատավորների դեպուտատների խորհուրդների առաջիկա ընտրությունը քաղաքական խոշոր կամպանիա յե: Մեր կազմակերպությունների պարտականությունն ե՝ անցկացնել այդ կամպանիան կազմակերպված ձևով: Մենք տեղական խորհուրդների դեպուտատների ընտրական կամպանիան դիմավորում ենք շատ հարուստ փորձով, վորը ձեռք ենք բերել ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրության շրջանում:

Ընկե՛ր դեպուտատներ, անցյալ ընտրությունների շրջանում ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես ել միութենական և ավտոնոմ հանրապետություններում, նույնպես և մեզ մոտ, ստեղծվել ե ագիտատորների մի մեծ բանակ, վորը կարողացել ե քաղաքներում և շրջաններում ընտրական գործը կազմակերպել բոլշևիկորեն, բոլշևիկյան ագիտացիա տանել և բացատրել ժողովրդին այն բոլոր նվաճումները, վորոնք ձեռք են բերվել Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարության շնորհիվ: Ներկա ընտրական կամպանիայի ժամանակ նույն այդ բանակը նորից կկատարի իր վրա դրված պարտականությունները: Ինչպես ԽՍՀՄ-ի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրության անմոռաց որերին, այնպես ել այժմ, ագիտացիոն աշխատանքը պետք ե փոխադրվի ընտրական տեղամասերը: Յես, ինքնաքննադատության կարգով, պետք ե ասեմ, վոր ինչպես մի շարք այլ շրջաններում, Ղարաբաղլարի շրջանում ևս հարյուրավոր կուսակցական և անկուսակցական ընտրողներ դեռևս չեն ներգրավված ագիտացիոն աշխատանքի:

Առաջիկա ընտրությունների կազմակերպական աշխատանքները մենք պետք ե տանենք անկուսակցական բոլշևիկների հետ ձեռք-ձեռքի տված, վորովհետև՝



«Բոլշևիկների ուժը, կոմունիստների ուժը նրանումն ե, վոր նրանք կարողանում են մեր կուսակցությանը շրջապատել միլիոնավոր անկուսակցական ակտիվով: Մենք, բոլշևիկներս, չեյինք ունենա այն հաջողությունները, վոր ունենք այժմ, յեթե չկարողանայինք կուսակցության կողմը նվաճել միլիոնավոր անկուսակցական բանվորների և գյուղացիների վստահությունը» (Ստալին):

Այժմ մեր պարտականությունն ե՝ ապահովել տեղական խորհուրդների ընտրությունները:

Համաձայն Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայում ընկ. Արաջյանի տված զեկուցման՝ տեղական խորհուրդների ընտրության առանձնահատկությունն այն ե, վոր յուրաքանչյուր ընտրող իր ընտրական տեղամասում ձայն ե տալու մի քանի ընտրական ոկրուգի թեկնածուներին:

Ներկա ընտրությունների ժամանակ զգալի թվով մարդիկ են ներգրավվելու ագիտացիոն և կազմակերպական աշխատանքներին: Ներկա ընտրությունների ժամանակ 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները մասնակցելու յեն ընտրություններին: Այժմ մեր պարտականությունն ե՝ ոգտագործել այն հարուստ փորձը, վոր ձեռք ե բերված ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ, և լայն ծավալել գործարաններում, ֆաբրիկաներում, խորհտնտեսային ու կոլտնտեսային դաշտերում մասսայական-քաղաքական ագիտացիոն աշխատանքը:

Խորհուրդների աշխատանքում ընտրությունների ժամանակ յերևան բերված թերությունները լայնորեն պետք ե քննադատության յենթարկվեն:

Տեղական խորհուրդների ընտրական կամպանիայի ժամանակ անհրաժեշտ ե նկատի առնել յուրաքանչյուր խորհրդի և դեպուտատի գործունեյությունը, ինչպես նաև յուրաքանչյուր առաջադրված թեկնածուի գործունեյությունը: Անցյալ ընտրությունների ժամանակ նրանց տրված հանձնարարությունների կենսագործումը պետք ե ստուգման յենթարկվի: Բյուրոկրատները և անկարողները չեն կարող ընտրվել խորհրդի դեպուտատ:

Այն բոլոր մարդիկ, վորոնք պատրաստ են իրենց կյանքը զոհելու Լենինի—Ստալինի մեծ գործի համար, պետք ե ընտրվեն իշխանության տեղական մարմինների անդամ:

Տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունների ժամանակ կոմունիստների և անկուսակցականների ստալինյան ան-

խախտ բլոկը նոր և պատմության մեջ չտեսնված հաջողություններ է ձեռք բերելու: Հայ ժողովուրդը, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, ավելի սերտորեն կհամախմբվի Լենինի—Ստալինի մեծ ու անպարտելի կուսակցության շուրջը, մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Մելքոնյանին:

Լ. Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ (Կիրովականի Մերձքաղաքային № 50 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորության դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը, վորը Հայաստանի Գերագույն Խորհրդի Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից ներկայացված է Յերրորդ սեսիայի քննությանը և հաստատությանը, ամբողջապես բխում է Ստալինյան Սահմանադրության վոգուց: Ներկա ընտրությունների ծավալը, նրա քաղաքական նշանակությունը չափազանց մեծ է:

Նախնական տվյալների համաձայն, շրջանային, քաղաքային, քաղաքային-ռայոնական, գյուղական և ավանային խորհուրդների համար պետք է ընտրվի մոտ 10.887 դեպուտատ:

Ընտրությունների կանոնադրության նախագիծը հագեցված է Ստալինյան Սահմանադրության դեմոկրատիզմով, նա ապահովում է ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության հիման վրա բոլոր աշխատավորների գլխովին մասնակցությունը տեղական խորհուրդների ընտրություններին:

Մեր կուսակցությունը մեծագույն հաջողությունների յե հասել պետական ապարատի բոլոր ողակների ամրապնդման գործում: Այս տարիների ընթացքում դաստիարակվել են տասնյակ-հազարավոր անվանի մարդիկ, վորոնք ցույց են տալիս պրոլետարական պետական գործչի հիանալի տիպարը:

Մեր կուսակցության XVIII համագումարում աշխատավորության սիրելի առաջնորդ մեծ Ստալինը Խորհրդային Միության աշխատավորության առաջ դրեց համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող մի խնդիր՝ իրականացնել սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելը:

Յերրորդ հնգամյա պլանի կատարումը հանդիսանում է սոցիալիզմից կոմունիզմին անցնելու հերթական, առաջնակարգ խնդիրը: Հայաստանի աշխատավորությունը, Խորհրդային Միության վողջ աշխատավորության հետ միասին, խոշոր հաղթա-





նակներ է տարել պատմական նշանակություն ունեցող այդ պլանի իրականացման գործում:

Հայ ժողովուրդը, ընկեր Ստալինի ցուցումներով, հսկայական նվաճումներ է ձեռք բերել գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում, աշխատավորներին սոցիալիզմի վոգով դաստիարակելու բնագավառում, մեր արդյունաբերության պլանների կատարման, գիտության և արվեստի զարգացման բնագավառում:

Վերջին տարիներում Հայաստանի մի շարք շրջաններում ընդլայնվում է տեխնիկական կուլտուրաների տարածությունը, ստեղծվում են արդյունաբերական նորանոր ճյուղեր: Մի շարք շրջանների կենտրոններ վերանվանվեցին քաղաքներ, վորը խոշոր խթան կհանդիսանա մեր յերկրի կուլտուրական և տնտեսական զարգացման գործում:

Ընկե՛ր դեպուտատներ, վորքան էլ մեծ լինեն մեր ձեռք բերած նվաճումները և նրանց համաշխարհային նշանակությունը, ավելի մեծ են մեր առաջ դրված նոր խնդիրները և այդ իսկ պատճառով չպետք է հանգստանալ ձեռք բերված նվաճումներով:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ ընտրական մեծ պայքար է ծավալվելու:

Մեր աշխատավորությունը նոր ընտրված դեպուտատներին հսկայական պահանջներ է ներկայացնելու, վորպեսզի նրանք անշեղ կերպով կենսագործեն ընկեր Ստալինի ցուցումները՝ անողոք լինեն դեպի թշնամիները, կապված լինեն մասսաների հետ, ապահովեն մեր աշխատավորության որեցոր աճող պահանջները:

Մեր կուսակցությունը ստալինյան հնգամյակների ընթացքում դաստիարակել է տասնյակ-հազարավոր անվանի մարդիկ, վորոնք այսոր հանդիսանում են սոցիալիստական պետության պետական գործչի իսկական, հիանալի տիպարը, վորոնք անհունորեն սիրում են իրենց հայրենիքը, իրենց ժողովրդին և իրենց առաջնորդ մեծ Ստալինին: Դրանք մեր շինարարներն են, գիտության և տեխնիկայի անվանի մարդիկն են, բժիշկները, կոլտնտեսականները, մանկավարժները, բանվորները, վորոնք հրաշքներ են գործում սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում:

Ընկեր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տե-

ղական խորհուրդների ընտրությունները մեզանից պահանջում են հսկայական ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանք:

Այդ հսկայական աշխատանքի հաջողությունը կախված է նրանից, թե որքան ճիշտ կկարողանանք մենք տեղամասերը կազմակերպել, ագիտացիոն-քաղաքական աշխատանքը պատշաճ բարձրության վրա դնել, հասցնել կանոնադրությունը յուրաքանչյուր ընտրողին, բարձրացնել նրա ակտիվությունը, հաշվի առնել ընտրողի առաջարկությունները ու նրա պահանջները դեպուտատների առաջադրման գործում:

Հայաստանի աշխատավորությունը, ղեկավարվելով ընկեր Ստալինի ցուցումներով, թե՛ Միութենական Գերագույն Խորհրդի, թե՛ Հայաստանի Գերագույն Խորհրդի ընտրությունների ընթացքում ցույց տվեց աշխատանքի ստալինյան ոճի հիանալի օրինակներ:

Նա Միության և Հայաստանի Գերագույն Խորհուրդներում ընտրեց իր լավագույն զավակներին, որոնք անհունորեն նվիրված են իրենց հայրենիքին:

Ունենալով աշխատանքի այդ հիանալի փորձը, Հայաստանի աշխատավորությունը, կոմունիստների և անկուսակցականների բլոկի հիման վրա, քաղաքային, շրջանային, գյուղական և ավանային խորհուրդների համար կընտրի իր լավագույն ներկայացուցիչներին: Նա նորից և նորից կապացուցի իր նվիրվածությունը Խորհրդային մեծ Միությանը, է՛լ ավելի կամրապնդի Խորհրդային Միության ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, լայն աշխատանք կծավալի արտադրական պլանների կատարման գործում, կամրացնի մեր յերկրի պաշտպանունակությունը, կկրկնապատկի իր նվիրվածությունը դեպի մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: *Ընկե՛ր դեպուտատներ, առաջարկություն կա 15 րոպե ընդմիջում հայտարարել, առարկություն չկա՞:*

ՁԱՅՆԵՐ: *Չկա:*

ՆԱԽԱԳԱՀ: *Հայտարարվում է 15 րոպե ընդմիջում:*

(Ընդմիջում)

ՆԱԽԱԳԱՀ: *Սեսիայի նիստը շարունակվում է: Խոսքը տրվում է դեպուտատ Ցեղխազարյանին:*

Ա. Ս. ՑԵՂԽԱԶԱՐՅԱՆ (*Հոկտեմբերյանի № 162 օկրուգ*): Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Յերրորդ



սեսիային ներկայացված՝ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը քաղաքական ամենալուրջ խնդիր է դնում մեր կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների առաջ:

Ստալինյան Սահմանադրության սկզբունքներով կառուցված ընտրությունների կանոնադրության ներկա նախագիծը մի փայլուն փաստաթուղթ է խորհրդային դեմոկրատիայի ամենալայն կենսագործման համար, որը լիակատար կերպով արտացոլում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացումը, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության անվիճելի հաղթանակը:

Շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունները կատարելը նշանակում է՝ է՛լ ավելի ամրացնել Խորհրդային պետությունը, դարձնելով այն հզոր և անպարտելի, նշանակում է՝ ամրապնդել շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային խորհուրդները, բարձրացնելով նրանց ակտիվությունը սոցիալիստական շինարարության ու հայրենիքի պաշտպանության համար մղվող պայքարում:

Այդ նշանակում է առաջ քաշել արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի, արվեստի ու գիտության բնագավառներից նոր, առաջավոր մարդկանց, որոնք մինչև վերջը նվիրված լինեն Լենինի—Ստալինի մեծ գործին, կոմունիզմի վերջնական հաղթանակի գործին: Այդ նշանակում է՝ ավելի ամրապնդել ԽՍՀՄ-ի բազմամիլիոն ժողովուրդների ստալինյան բարեկամությունը և ուժեղացնել այն՝ կենսագործելու կուսակցության XVIII համագումարի որոշումները և կոմունիզմի իմաստուն նավավար մեծ Ստալինի ցուցումները, այն է՝ անցնել կապիտալիստական ամենաառաջավոր յերկրներից նաև տնտեսական տեսակետից:

Այդ բանին մենք կարող ենք հասնել, որովհետև մեր յերկրում այլևս չկան շահագործողներ ու շահագործվողներ, որովհետև կապիտալիստները, կալվածատերերն ու կուլակները մեր յերկրից վերացել են անդառնալիորեն, որովհետև մեր յերկրում հակադիր դասակարգեր չկան: Խորհուրդների VIII Արտակարգ համագումարում ընկեր Ստալինն ասաց, որ ԽՍՀՄ-ում մնացել է բանվոր դասակարգը, գյուղացիների դասակարգը և խորհրդային ինտելիգենցիան:

Բանվոր դասակարգը և գյուղացիների դասակարգը մեր

յերկրում իրար հակադիր շահեր չունեն, ընդհակառակը, նրանց նպատակը մեկ է՝ պայքար կոմունիզմի վերջնական հաղթանակի համար, վորտեղ այլևս տարբերություն չի լինի մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև, վորտեղ կլինի մթերքների առատություն և վորտեղ ամեն մարդ կաշխատի ըստ իր ընդունակությունների և կստանա ըստ իր պահանջների:

Իսկ ինչ վերաբերում է խորհրդային ինտելիգենցիային, ապա կարելի յե ասել, վոր նա հանդիսանում է մեր լայնածավալ յերկրի տնտեսական, կուլտուրական ու գիտական աշխատանքների կազմակերպիչը՝ մի ինտելիգենցիա, վորը Լենինի—Ստալինի անպարտելի կուսակցության ու անձամբ մեր մեծ ուսուցչի՝ ընկեր Ստալինի ղեկավարությամբ, հրաշքներ է գործել ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում, առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում:

Ամրացնելով մեր հաղթանակները, վոր ձեռք ենք բերել կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ղեկավարությամբ, ժողովրդի և կուսակցության անարգ թշնամիների դեմ մղվող պայքարի հետևանքով, նույն այդ ինտելիգենցիան, անտարակույս, ավելի մեծ հրաշքներ կգործի ժողովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնգամյակի համար մղվող պայքարում և մեծ ակտիվություն կցուցաբերի աշխատավորների շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային խորհուրդների առաջիկա ընտրությունների ամենալուրջ քաղաքական կամպանիայի ընթացքում:

Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ԽՍՀ Հոկտեմբերյան շրջանի կուսակցական ու վոչ-կուսակցական բոլշևիկները նույնպես զգալի հաջողությունների հասան ժողովրդական տնտեսության, հատկապես կոլտնտեսությունների ամրապնդման ասպարեզում և նախորդ յերկու ընտրությունների ընթացքում:

Շրջանի 32 կոլտնտեսությունները, վորոնք ընդգրկում են աշխատավորների 94,3%-ը, վերջին տարիները, հատկապես Ստալինյան Սահմանադրության կենսագործման ընթացքում, զգալիորեն բարձրացրին կոլտնտեսականների աշխատանքի արտադրողականությունը, կոլտնտեսությունների յեկամուտները և կոլտնտեսականների աշխօրերի արժեքը:

Որինակ՝ յեթե 1936 թ. կոլտնտեսությունների յեկամուտը կազմել եր 10 միլիոն 105 հազար ռուբլի, մեկ աշխօրի միջին արժեքը կազմել եր 6 ռ. 20 կ. և կար միայն մեկ միլիոնատեր կոլտնտեսություն, ապա 1938 թ. այդ թվերը կրկնապատկվել ու



յեռապատկվել են: Կոլտնտեսությունների յեկամուտները հասել են 24 ու կես միլիոնի, մեկ աշխօրի միջին արժեքը հասել է 10 ռ. 16 կոպեկի և միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը հասել է 9-ի:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ շրջանում մենք ունեյինք մեկ ոկրուգ Ազգությունների Խորհրդի համար և 24 ընտրական հանձնաժողովներ, վորոնց մեջ ընդգրկված եյին սոցիալիզմի գործին նվիրված 155 կուսակցական ու վոչ-կուսակցական բոլշևիկներ: Շրջանում կազմակերպված եր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրության Կանոնադրությունն ուսումնասիրող 97 խմբակ, վորոնք ընդգրկել եյին ընտրողների 75—90%-ը, գործում եյին 275 ագիտատոր, 24 վստահելի անձեր և 24 ավագ ագիտատորներ: Նրանց բոլշևիկյան աշխատանքի շնորհիվ ապահովվեց շրջանի ընտրողների 96,4%-ի մասնակցությունն ընտրություններին, այդ ընտրողների 97,8%-ը քվեարկեց կոմունիստների և անկուսակցականների բլոկի ոգտին:

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ շրջանում կազմակերպված եր 6 ընտրական ոկրուգ 34 ընտրական տեղամասով, վորոնք ընդգրկում եյին հանձնաժողովների 255 անդամի: Կազմակերպված եր Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրությունն ուսումնասիրող 125 խմբակ, վորոնք ընդգրկել եյին ընտրողների ավելի քան 95 տոկոսը: Գործում եր 35 ագիտ-կոլեկտիվ 306 ագիտատորներով, աշխատում եյին 34 վստահելի անձ և 34 ավագ ագիտատոր, վորոնք ամրացված եյին ընտրական տեղամասերին և բոլշևիկորեն կատարում եյին աշխատավորների դեպուտատների Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության հետ ընտրողներին ծանոթացնելու աշխատանքը: Այդ լավագույն ագիտատորների ոգնությամբ, վորոնք անցյին ընտրական յերկու կամպանիաների ընթացքում, ապահովվեց շրջանի ընտրողների 98,6%-ի մասնակցությունը ընտրություններին, նրանց 98,8 տոկոսը քվեարկեց կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Այդ յերկու ընտրությունները մեկ անգամ ևս ցույց տվին մեր լայնածավալ Խորհրդային յերկրի աշխատավորների սերն ու նվիրվածությունը Լենինի—Ստալինի մեծ գործին, մեր հայրենիքի սահմանների ամրապնդման պատվավոր գործին և մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինին:

Կասկածից վեր է, վոր աշխատավորները, վորոնք միմյանց

հետ կապված են ստալինյան բարեկամության ամենաամուր կապերով, ավելի մեծ խանդավառություն ու նվիրվածություն կհայտաբերեն առաջիկա ընտրությունների ընթացքում:

Դեպուտատ Աբաջյանի զեկուցման մեջ բերված նորմաների համաձայն, մեր շրջանային խորհուրդը պետք է կազմված լինի 31 հոգուց, այդ նշանակում է՝ ունենալու յենք 31 ընտրական օկրուգ, հանձնաժողովների մոտ 217 անդամով: Նույն նորմաներով գյուղական խորհուրդների համար պետք է ընտրվի մոտավորապես 315 հոգի, տեղամասային հանձնաժողովի 1260 անդամներով:

Այս թվերը ցույց են տալիս, վոր առաջիկա ընտրությունների ժամանակ մենք գործ ենք ունենալու ավելի շատ թեկնածուների և ընտրական հանձնաժողովների անդամների հետ: Այդ միաժամանակ նշանակում է, վոր չպետք է հանդստանալ անցյալ յերկու ընտրությունների ընթացքում ձեռք բերված հաջողություններով, այլ օգտագործելով այդ ընտրությունների հարուստ փորձը, ամենայն լրջությամբ պետք է կազմակերպել և հաջող ավարտել առաջիկա ընտրությունների գործը:

Ընկե՛ր դեպուտատներ, յես կարող եմ վստահեցնել ձեզ, վոր Հոկտեմբերյան շրջանի կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները նույնպես հետ չեն մնա Հայաստանի առաջավոր շրջանների կազմակերպություններից ու բոլշևիկորեն կկազմակերպեն աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները:

Մենք ավելի լայնորեն կծավալենք սոցիալիստական մրցումն ու ստախանովյան շարժումը, ավելի բարձր կպահենք մեր աշխատավորների հեղափոխական զգաստությունը, մինչև վերջը և վճռականորեն կմերկացնենք ու կվոչնչացնենք հակահեղափոխական տարրերի ամեն մի յելույթ: Ե՛լ ավելի լայնորեն կծավալենք բոլշևիկյան ագիտացիան՝ առաջադրված թեկնածուների օգտին և կապահովենք մեր շրջանի բոլոր ընտրողների ակտիվ մասնակցությունն այս ընտրություններին: Մեր տեղական խորհուրդների համար կընտրենք Լենինի—Ստալինի գործին նվիրված, գիտակից ու առաջավոր մարդկանց, վորոնք չեն խնայի իրենց արյան վերջին կաթիլը մեր հայրենիքի պաշտպանության համար:

Այդ բանին մենք կհասնենք, վորովհետև մեզ ղեկավարում է Լենինի—Ստալինի անպարտելի կուսակցությունը, վորովհետև մեզ, նորանոր հաղթանակներով, դեպի կոմունիզմ է առաջնորդում ընկեր Ստալինը:



Կեցցե՛ Ստալինյան Սահմանադրությունը:

Կեցցե՛ ԽՍՀՄ ժողովուրդների ստալինյան բարեկամությունը:

Կեցցե՛ մեր հարազատ ուսուցիչ և բարեկամ մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Ազիզբեկյանին:

Ռ. Բ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ (Փանիկի № 37 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիային ներկայացված՝ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը քաղաքական խոշոր դոկումենտ է, վորը նպատակ ունի ե՛լ ավելի դեմոկրատիզացիայի յենթարկելու մեր յերկրի կյանքը:

Այդ կանոնադրությունը կազմված է Ստալինյան մեծ Սահմանադրության վոգով և բխում է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունից:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունները քաղաքական խոշոր կամպանիա յեն մեր յերկրի աշխատավորների կյանքում: Դա մի հսկայական, մեծ ընտրական կամպանիա յե, վորը մեր յերկրում իր թափով ամենամեծը պետք է համարել այս վերջին տարիների ընթացքում:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները համաժողովրդական մեծ տոն են հանդիսանալու մեր յերկրի աշխատավորների համար, սոցիալիզմի հաղթանակների տոնը, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի տոնը: Ընտրությունները կատարվելու յեն ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ—Ստալինյան, աշխարհի ամենադեմոկրատիկ, Սահմանադրության հիման վրա:

1937 թ. դեկտեմբերի 12-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունները ցույց տվին ամբողջ աշխարհին կոմունիստների և անկուսակցականների բլոկի փայլուն հաղթանակը:

Միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունները մի անգամ ևս ապացուցեցին այդ փայլուն հաղթանակը և ցույց տվին ամբողջ աշխարհին խորհրդային ժողովրդի հզոր ուժը, նրա անսահման սերն ու նվիրվածությունը Լենինի—Ստալինի մեծ կուսակցությանը, մեր հարազատ մեծ Ստալինին:

«Այսպիսի ազատ և իսկական դեմոկրատիկ ընտրություններ,

—ասաց ընկեր Ստալինը,—կարող էյին առաջ գալ միայն սոցիալիստական կարգերի հաղթանակի հողի վրա, միայն այն բանի բազայի վրա, որ մեզանում սոցիալիզմը ոչ թե հենց այնպես կառուցվում է, այլ արդեն մտել է կենցաղի մեջ, ժողովրդի առօրյա կենցաղի մեջ»:

Ստալինյան Սահմանադրության հիման վրա մեր հերոս ժողովուրդն ազատ, ունևոր ու յերջանիկ է ապրում. ամենուրեք հնչում է նրա ուրախ, համարձակ յերգը հարյուրավոր լեզուներով:

Մեր պանծալի ժողովուրդը գովերգում է սոցիալիզմի մեծ հայրենիքը: Մեր փառապանծ ժողովուրդը գովերգում է նրան, ով, իր հանճարեղ ու իմաստուն ղեկավարությամբ կոմունիզմի մեծ նավն անշեղորեն առաջ է տանում դեպի պայծառ ապագան, դեպի կոմունիզմի վերջնական հաղթանակը:

Ստալինյան յերկու հնգամյակների հաղթանակը աննախընթաց վերելքի հասցրեց Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդներին:

Վիթխարի հաջողությունների հասավ նաև Հայաստանի ժողովրդական տնտեսությունը: Խորհրդային Հայաստանը, 10 յեղբայրական հանրապետությունների հետ միասին, առաջ է դնում դեպի կոմունիզմի վերջնական հաղթանակը:

Ընկեր Ստալինը XVIII կուսհամագումարում ասաց. «Անշեղորեն կիրառել կյանքում մեր սոցիալիստական Սահմանադրությունը, մինչև վերջն իրականացնել յերկրի քաղաքական կյանքի դեմոկրատիզացիան, ամրապնդել խորհրդային հասարակության բարոյական–քաղաքական միասնությունը և բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի բարեկամական համագործակցությունը, ամեն կերպ ամրացնել ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, զարգացնել և ամրապնդել խորհրդային հայրենասիրությունը»:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունները մենք պետք է անցկացնենք, ղեկավարվելով ընկեր Ստալինի այս ցուցումով, նպատակ ունենալով ամեն կերպ ամրացնել կոմունիստների և անկուսակցականների բլոկի հաղթանակը, սոցիալիզմի կառուցման այդ անխորտակելի ամրոցը, ակտիվացնելով մեր ընտրողներին, բարձրացնելով նրանց ակտիվ մասնակցությունը ընտրությունների բոլոր աշխատանքներին:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների



ընտրության կարգը սահմանված է կանոնադրության նախագծի մեջ և բխում է աշխատավորության շահերից:

Կանոնադրության մեջ խոր կերպով ընդգծված է ստալինյան հոգատարությունը դեպի մարդը. նա հնարավորություն է տալիս ամեն մի ընտրողի՝ կատարելու իր քաղաքացիական պարտքը— մասնակցելու ընտրությանը:

Տեղական խորհուրդների ներկա ընտրությունները նախկին ընտրություններից տարբերվում են նրանով, որ մի քանի խորհուրդների ընտրությունները կատարվելու յեն միաժամանակ: Բացի դրանից, ներկա ընտրությունները տարբերվում են նախկինից նաև նրանով, որ ներկայումս ընտրվելու յեն անհամեմատ ավելի մեծ թվով դեպուտատներ, հետևապես, այս հանգամանքը խնդիր է դնում մեր առաջ՝ էլ ավելի ծավալելու մեր կազմակերպական, քաղաքական աշխատանքը՝ ընտրությունները հաջող նախապատրաստելու ու անցկացնելու համար:

Այս հսկայական, մեծ աշխատանքի մեջ պետք է ընդգրկել հազարավոր լավագույն մարդկանց, վորոնք ակտիվ կերպով մասնակցել են Միութենական ու Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրություններին, ինչպես նաև նրանց, ովքեր իրենց ազնիվ աշխատանքով արժանի յեն դրան: Այժմ մենք ունենք բավականին մեծ փորձ այդ աշխատանքներն ավելի լավ կազմակերպելու համար. հարկավոր է այժմվանից նախապատրաստել ընտրական տեղամասերը, օկրուգները և ընտրական հանձնաժողովներն այն նախագծի հիման վրա, վորը մեր Սեսիայի կողմից պետք է հաստատվի: Մեր հասարակական կազմակերպությունները պետք է առաջադրեն այնպիսի թեկնածուներ, վորոնք մինչև վերջը նվիրված լինեն խորհրդային իշխանությանը, Լենինի—Ստալինի մեծ գործին, գործնական կերպով ցույց են տվել իրենց ստախանովական, հարվածային աշխատանքը գործարանում, կոլտնտեսային դաշտերում, կուլտուրայի և արվեստի ֆրոնտում և պատրաստ են խորհրդային սրբազան սահմանները պաշտպանելու իրենց աչքի լույսի պես:

Մեր Միության մայրաքաղաք Մոսկվայի օրինակով անհրաժեշտ է ընտրությունների նախօրյակին կազմակերպել տեղական խորհուրդների դեպուտատների հաշվետու զեկուցումներն իրենց ընտրողների առաջ, վորպեսզի ընտրողները մանրամասն կերպով քննության առնեն դեպուտատի աշխատանքը և տան նակազներ նոր ընտրված դեպուտատներին:

Այս մեծ աշխատանքը մենք պետք է կազմակերպենք ամենա—

կարճ ժամանակամիջոցում, և այդ խնդրի լուծումը կախված է այն բանից, թե տեղական կուսակցական և խորհրդային աշխատողները ինչպիսի թափով կծավալեն մասսայական, բացատրական աշխատանքը, ինչպես կօգտագործեն այն հարուստ փորձը, վոր ձեռք է բերված անցյալ ընտրությունների ընթացքում:

Ընկե՛ր դեպուտատներ, յես հատկապես ուզում եմ սրել ձեր ուշադրությունը մի շարք խնդիրների վրա, վոր մեր կուսակցությունը դրել էր 17-րդ համագումարում, այն է՝ բարձրացնել կազմակերպական աշխատանքը խորհուրդներում — քաղաքական աշխատանքի մակարդակին:

Տեղական խորհուրդների նախընտրական կամպանիայի ժամանակ կազմակերպական-մասսայական աշխատանք պետք է սկսել դեպուտատների հաշվետվությամբ իրենց ընտրողների առաջ: Քաղաքական մեծ նշանակություն ունեցող այս գործը պետք է ղեկավարեն մեր համապատասխան կազմակերպությունները:

Այդ բանի համար, յես կարծում եմ, հենց այժմվանից պետք է կազմակերպել ու անցկացնել ամեն մի դեպուտատի հաշվետվությունն իր ընտրողների առաջ, սահմանելով այնպիսի կարգ, վոր հետագայում այդ հաշվետվությունները սիստեմատիկ բնույթ կրեն:

Կազմակերպական, մասսայական աշխատանքը բարձրացնելու գործում մեծ խնդիրներ ունեն սեկցիաները, վորոնց աշխատանքը պետք է աշխուժացնել և պատշաճ բարձրության վրա դնել:

Տեղական խորհուրդների ընտրությունների շուրջը մենք պետք է մասսայական կազմակերպական աշխատանք կատարենք սիստեմատիկաբար, ուսումնասիրելով և քննության առնելով այն հրատապ խնդիրները, վոր առաջադրում է կյանքը:

Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների այս հսկայական աշխատանքի կազմակերպումը պետք է ընթանա պլանների կատարման նշանաբանով, մեր կուսակցության ու Կառավարության առաջադրած տնտեսական ու քաղաքական խնդիրների կատարման նշանաբանով:

Մեր հանրապետության աշխատավորները, ընկեր Ստալինի՝ XVIII համագումարում տված պատմական զեկուցմամբ վոգեվորված, այդ վորոշումները կենսագործեցին, ծավալելով սոցիալիստական մրցություն՝ Ստալինյան յերրորդ հնգամյակի պլանների կատարման և գերակատարման համար:



Ընկե՛ր դեպուտատներ, ներկա ընտրություններում կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկն է՛լ ավելի կամրանա, է՛լ ավելի կհզորանա:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրություններն ավելի մեծ ուժով ցույց կտան ամբողջ աշխարհին Խորհրդային Միության բազմամիլիոն ժողովրդի համախմբվածությունը Լենինի—Ստալինի անհաղթելի դրոշի շուրջը: Այդ ընտրություններն է՛լ ավելի կհամախմբեն մեր ժողովրդին խորհրդային իշխանության ու բոլշևիկյան կուսակցության շուրջը, ամբողջ աշխարհի աշխատավորների սիրելի, իմաստուն առաջնորդ և ուսուցիչ մեծ Ստալինի շուրջը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Թույլ տվեք սրանով Սեսիայի առաջին նիստը վերջացնել: Սեսիայի հաջորդ նիստը կկայանա այսօր, յերեկոյան ժամը 7-ին:

# ՑԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 1-ին)

---

ՆԱԽԱԳԱՀ: Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Ցերրորդ սեսիայի յերկրորդ նիստը հայտարարում եմ բացված: Շարունակում ենք Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագծի վերաբերյալ զեկուցման վիճաբանությունները:

Խոսքը տրվում է դեպուտատ Աստվածատրյանին:

Բ. Ա. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ (*Գառնիի № 157 օկրուգ*): *Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի ներկա, Ցերրորդ սեսիայում քննության դրված հարցը՝ շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը բացառիկ քաղաքական նշանակություն ունեցող հարց է մեր յերկրի համար:*

*Ստալինյան Սահմանադրության հիման վրա առաջին անգամ անցկացվող՝ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները մի նոր քայլ են մեր Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և յեղբայրական մյուս խորհրդային հանրապետությունների խորհրդային պետական շինարարության պատմության մեջ:*

*Սեսիայի քննությանը ներկայացված՝ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը, վորը կազմված է Ստալինյան Սահմանադրության հիման վրա, հանդիսանում է խորհրդային սոցիալիստական դեմոկրատիզմի հետևողական կիրառումը: Նա վկայում է Խորհրդային պետության և խորհրդային ժողովրդի ան-*



*պարտելի ուժի և հզորության մասին, մի ժողովրդի, վորը անսահմանորեն նվիրված է Լենինի—Ստալինի կուսակցության մեծ գործին, կոմունիզմի համար մղվող պայքարի գործին, մարդկության մեծագույն հանճար, համայն աշխարհի աշխատավորության սիրելի առաջնորդ մեծ Ստալինին:*

*Մեր յերկրի ժողովուրդներն այս ընտրությունների ընթացքում մեկ անգամ ևս կզգան այն խոշոր, արմատական տարբերությունը, վորը գոյություն ունի խորհրդային ընտրական սիստեմի և կապիտալիստական բոլոր պետությունների ընտրական սիստեմների միջև: Մինչդեռ կապիտալիստական յերկըրներում ամեն ինչ արվում է նրա համար, վորպեսզի հեռու պահեն ժողովրդական լայն մասսաներին պետության կառավարման գործից, Խորհրդային սոցիալիստական ազատ յերկրում, մեր սոցիալիստական պետության ընտրական սիստեմը, կառուցված լինելով ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության ընտրական իրավունքի սկզբունքներով, ապահովում է բոլոր չափահաս քաղաքացիների ամենաակտիվ մասնակցությունը պետական իշխանության բոլոր մարմինների կազմակերպման գործում:*

*Մեր ընտրական օրենքի կիրառումը ապահովում է ժողովրդական լայն մասսաների քաղաքական ակտիվության հետագա ուժեղացումը, աշխատավորական լայն մասսաների ներգրավումը պետության կառավարման գործին:*

*1937 և 1938 թ. թ. անցկացված՝ ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրություններն ավարտվեցին կոմունիստների և անկուսակցականների բլոկի փայլուն հաղթանակով: Այդ ընտրությունները ավելորդ անգամ ցույց տվին այն անսահման վստահությունը, վոր տածում է խորհրդային ժողովուրդը կոմունիստական կուսակցության հանդեպ, այն սերտ կապը, վոր գոյություն ունի աշխատավորական ամենալայն մասսաների և խորհրդային պետության միջև:*

*Ընտրությունների ընթացքում առաջ յեկան հազարավոր նոր աճած կադրեր մեր գործարաններում, սոցիալիստական դաշտերում և խորհրդային աշխատանքի բոլոր բնագավառներում, վորոնք արտադրական խոշոր նվաճումներով դիմավորեցին ընտրությունները և ստախանովական աշխատանքի փայլուն օրինակներ ցուցաբերեցին:*

*Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ներկա ընտրությունները տարբերվում են անցյալ ընտրություն-*

ներից նրանով, վոր այս ընտրությունների ընթացքում նախապատրաստական աշխատանքների մեջ ներգրավվում են շատ ավելի մեծ թվով կադրեր:

Փաստորեն արդեն սկսված նախապատրաստական աշխատանքների ընթացքում հանդես է գալիս բանվորների, կոլտնտեսականների, խորհրդային ինտելիգենցիայի նոր ակտիվ, վորը ներգրավվելով ակտիվ քաղաքական աշխատանքի, խորհրդային պետական աշխատանքի բարելավման համար պայքարող հսկայական բանակ է հանդիսանում:

Ընկե՛ր դեպուտատներ, յես անհրաժեշտ եմ համարում այս կապակցությամբ հատկապես նշել խորհրդային ինտելիգենցիայի դերն առաջիկա ընտրությունների ընթացքում:

Կուսակցության, խորհրդային իշխանության և ընկեր Ստալինի անձնական հոգատար վերաբերմունքի շնորհիվ մեր յերկրում աճել են բանվոր դասակարգի և գյուղացիության ծոցից յելած խորհրդային ինտելիգենցիայի նոր, յերիտասարդ կադրեր: Մեր լայնատարած յերկրի բոլոր ծայրերում՝ քաղաքներում, բանվորական ավաններում, գյուղերում անձնվիրությամբ աշխատում են այդ ինտելիգենցիայի բազմաթիվ ներկայացուցիչները՝ ուսուցիչները, գյուղատնտեսները, բժիշկները, անասնաբույժները և այլն, վորոնք իրենց անմիջական աշխատանքի հետ միասին ակտիվ մասնակցում են մեր յերկրի քաղաքական, հասարակական կյանքին: Այդ կադրերը խոշոր դեր կատարեցին ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրությունների ընթացքում, և կասկածից դուրս է, վոր ինտելիգենցիայի այդ հզոր բանակը կուսակցության ղեկավարությամբ ե՛լ ավելի մեծ ոգնություն ցույց կտա առաջիկա ընտրությունների ընթացքում:

Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների ներկա կամպանիան մենք դիմավորում ենք նորանոր, ավելի մեծ, ավելի փայլուն հաղթանակներով մեր սոցիալիստական կյանքի բոլոր բնագավառներում:

Այդ հաղթանակների լավագույն և հոյակապ արտահայտությունն է հանդիսանում սրանից մեկ ամիս առաջ, Խորհրդային Միության կարմիր մայրաքաղաքում՝ Մոսկվայում բացված Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը, վորի նշանակությունը չի սահմանափակվում միայն խորհրդային սոցիալիստական գյուղատնտեսության նվաճումների ցուցադրումով: Ցուցահանդեսն իր մեջ արտացոլում է նաև հաղթանակած սոցիա-



լիզմի յերկրի բանվորների ու գյուղացիների յերջանիկ կյանքի բոլոր կողմերը, արտացոլում է մեր հաղթանակները արդյունաբերության, կուլտուրայի, լուսավորության, առողջապահության, արվեստի և այլ բնագավառներում: Նա վկայում է Խորհրդային պետության անսահման ամրության մասին և աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների նախորյակին մեր ագիտացիայի լավագույն, ակնառու արտահայտությունն է հանդիսանում:

Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունները, ակտիվ պետական-հասարակական աշխատանքի ներգրավելով աշխատավորության լայն մասսաներին, անկասկած հզոր խթան կհանդիսանան մեր խորհուրդների աշխատանքում նկատվող թերությունները վերացնելու և նրանց գործունեության վորակական ցուցանիշներն ե՛լ ավելի բարձրացնելու համար:

Յես ցանկանում եմ նշել հատկապես այն խոշոր դերը, վոր ունեն աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդները ժողովրդական առողջապահության բնագավառում:

Մեր կուսակցության մարտական որգան «Правда»-ն 1939 թվի ոգոստոսի 14-ի իր առաջնորդող հոդվածում առողջապահությունը համարում է «խորհուրդների աշխատանքի կարևորագույն բնագավառը»:

Մեր ժողովրդի բժշկական սպասարկման գործը և յերկրի սանիտարական պաշտպանության ամրապնդման պատասխանատու խնդիրը աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդներից պահանջում են ամենալուրջ ուշադրություն նվիրել աշխատանքի այդ բնագավառին:

«Յեթե տեղական խորհուրդները մոտ կանգնած լինեյին առողջապահության,—գրում է «Правда»-ն—յեթե նրանք չսահմանափակվելով նեղ կազմակերպական հարցերով, ամենօրյա հսկողության յենթարկեյին բժշկական հիմնարկների գործունեությունը, իրական ոգնություն ցույց տային նրանց աշխատանքում, ապա առողջապահության գործը զգալիորեն ավելի լավ հիմքերի վրա դրված կլիներ և սպասարկման վորակի դեմ գանգատներ անհամեմատ քիչ կլինեյին»: «Правда»-ն, այնուհետև, նշում է, վոր «հիվանդանոցների, պոլիկլինիկաների, բուժարանների աշխատանքի, քաղաքների և այլ բնակավայրերի սանիտարական դրության համար պատասխանատվությունն է կրում խորհուրդն ամբողջությամբ»:

Անտարակույս, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունների նախապատրաստական աշխատանքը խոշոր խթան կհանդիսանա խորհրդային առողջապահության գործի հետագա բարելավման ու զարգացման համար:

Առողջապահության գործի դրվածքը շրջանում, քաղաքում և գյուղում կլինի այն կարևորագույն չափանիշներից մեկը, վորոնցով տասնյակ և հարյուր-հազարավոր ընտրողներ կգնահատեն խորհուրդների անդամ ընտրված իրենց դեպուտատների աշխատանքը:

Դրա հետ մեկտեղ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները խթան կհանդիսանան բարելավելու նաև խորհուրդների աշխատանքի մյուս բնագավառները, մասնակից անելով այդ աշխատանքներին ստուգված և Լենինի—Ստալինի գործին նվիրված նոր, թարմ մարդկանց, մեր գործարանների ու սոցիալիստական դաշտերի ստախանովականներին, վորոնք մասնակից լինելով պրոլետարիատի դիկտատուրայի օրգան՝ խորհուրդների աշխատանքին, կդարձնեն նրանց ավելի ճկուն, ավելի օպերատիվ, հետևապես և ավելի ուժեղ ու ամուր:

Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունները ճիշտ անցկացնելու դեպքում մենք ձեռք կբերենք նոր, ավելի փայլուն հաղթանակներ կոմունիստական հասարակակարգի կառուցման գործում:

Այդ հաղթանակների լավագույն գրավականն է հանդիսանում այն, վոր մեզ ղեկավարում է Լենինի—Ստալինի փառապանծ կուսակցությունը, մեզ վոգեշնչում ու միշտ դեպի առաջ է տանում կոմունիզմի հանճարեղ նավավար՝ մտքի ու գործի տիտան—մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Մոկշանովին:

Դ. Ֆ. ՄՈԿՇԱՆՈՎ (Արարատի № 25 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, «Ներկայիս խորհրդային հասարակության առանձնահատկությունը, ի տարբերություն ամեն մի կապիտալիստական հասարակությունից,—ասաց ընկեր Ստալինը,—այն է, վոր նրանում չկան այլևս անտագոնիստական, թշնամի դասակարգեր, շահագործող դասակարգերը լիկվիդացիայի յեն յենթարկված, իսկ բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան, վորոնք կազմում են խորհրդային հասարակությունը, ապրում և աշխատում են բարեկամական համագործակցության սկզբունքներով»:



Այդ ընդհանրության հիման վրա ել ծավալվել են այնպիսի շարժիչ ուժեր, ինչպիսիք են խորհրդային հասարակության բարոյական—քաղաքական միասնությունը, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, խորհրդային հայրենասիրությունը: Այդ հիմքի վրա ել առաջացան ԽՍՀՄ Սահմանադրությունը և յերկրի գերագույն օրգանների լիովին դեմոկրատական ընտրությունները:

Յերկրի գերագույն օրգանների ընտրությունները փայլուն կերպով ցուցադրեցին խորհրդային հասարակության միասնությունը և ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններին կոմունիստների և անկուսակցականների բլոկի օգտին քվեարկեցին համարյա 90 միլիոն ընտրողներ կամ քվեարկությանը բոլոր մասնակցողների 98,6 տոկոսը, իսկ միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրություններին կոմունիստների և անկուսակցականների բլոկի օգտին քվեարկեցին 92 միլիոն ընտրող, այսինքն՝ քվեարկության բոլոր մասնակցողների 99,3%-ը:

Ընկե՛ր դեպուտատներ, այժմ մեր առաջ կանգնած են դեմոկրատական նոր ընտրությունների՝ գյուղական, շրջանային, քաղաքային խորհուրդների ընտրությունների խնդիրները: Հայկական ԽՍՀ տեղական խորհուրդների ընտրությունների կանոնակարգի նախագիծը, վոր կառուցված է մեր Սահմանադրության հիման վրա և այսոր ներկայացված է մեր ուշադրության—յես առաջարկում եմ ընդունել:

Այժմ մեր, դեպուտատներիս հերթական խնդիրն է՝ բնակչության մեջ մասսայական աշխատանք կատարել ընտրությունների հիմնական դրույթները ժողովրդականացնելու համար: Ընկե՛ր դեպուտատներ, յես կարծում եմ, յես հավատացած եմ, վոր առաջիկա ընտրությունները կանցնեն նույնպիսի միասնությամբ ու համախմբվածությամբ, կբարձրացնեն խանդավառության ու խորհրդային հայրենասիրության նույնպիսի ալիք, նույնպես կցուցադրեն ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, ինչպես այդ տեղի ունեցավ Գերագույն Խորհրդի ընտրություններին:

Ընկե՛ր դեպուտատներ, մեր Կարմիր Բանակի մարտիկներն ու հրամանատարներն ընտրություններին մասնակցում են խորհրդային մյուս քաղաքացիներին հավասար: Հայտնի յե, վոր մեր բանակն այդ տեսակետից միակ բանակն է: Կապիտալիստական յերկրներում իրենց զինվորներին ու սպաներին արգելում են քա-

ղաքականությամբ զբաղվել: Նրանք քաղաքական գիտակցությունից վախենում են: Նրանք գիտեն, որ քաղաքականապես գրագետ զինվորները կհրաժարվեն թալանչիական, զավթողական պատերազմ մղելուց: Ընդհակառակը, մեր բանակի ուժը՝ նրա քաղաքական գիտակցությունն է: Մեր մարտիկը գիտե, թե ինչու համար է նա պատերազմի գնալու, և հենց այդ է մեր բանակի հսկայական անպարտելի, բարոյական ուժը:

Մենք գիտենք, որ վերջին ժամանակներս մեր յերկիրը խոշոր հաջողություններ ունի ինչպես ներքին, նույնպես և արտաքին քաղաքականության մեջ: Վերջին օրերի դեպքերը, Գերմանիայի հետ կնքված չհարձակվելու պայմանագիրը մի անգամ ևս ցուցադրեցին մեր յերկրի ուժը և մեր միջազգային քաղաքականության ճիշտ լինելը:

Սակայն մենք գիտենք նույնպես, որ չնայած խաղաղության քաղաքականության հաջողությանը, մեր յերկրի պատերազմը կապիտալիստական յերկրների հետ անխուսափելի յե: Ապագա պատերազմում հաղթելու համար մենք պետք է շարունակենք է՛լ ավելի ամրապնդել մեր յերկրի տնտեսական հզորությունը, կատարելով յերրորդ հնգամյա պլանը: Մենք պետք է ամեն կերպ ամրապնդենք միջազգային կապը համաշխարհային պրոլետարիատի հետ, մենք պետք է ամրապնդենք մեր Կարմիր բանակի մարտական հզորությունը: Խաղաղ ժամանակ մեր Կարմիր բանակը հանդիսանում է մարտական քաղաքական ուսուցման դպրոց: Այժմ մեր Կարմիր բանակի մասերը պետական քննություններ են տալիս: Այդ մասերը, հրամանատարների, քաղաշխատողների ղեկավարությամբ, կառավարությանը խոստում են տվել, որ այդ քննությունն իրենք կտան ոչ միայն լավ, այլև գերազանց: Այդ քննությունը տալու առաջին օրը հրամանատարների ու քաղաշխատողների մեծ մասն իրենց խոստումը կատարեց: (Ծափահարություններ):

Ընկե՛ր դեպուտատներ, կուսակցության ու կառավարության և ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի կոչով մեր Կարմիր բանակը, յեթե այդ անհրաժեշտ լինի, կկարողանա մարտական քննություն տալ նաև մարտի դաշտերում: (Ծափահարություններ):

Մենք պատրաստ ենք մեր սոցիալիստական հայրենիքի համար կռվել արիաբար, հմտորեն և կոմունիզմի լիակատար հաղթանակին հասնելու համար չխնայել մեր արյունն ու կյանքը: (Ծափահարություններ):



ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Ա. Պետրոսյանին:
Ա. Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ (Տերյանի № 27 օկրուգ): Ընկե՛ր
դեպուտատներ, Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժո-
ղովը Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի
քննությանն է ներկայացրել աշխատավորների դեպուտատների
տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը:
Սեսիայի քննությանը ներկայացրած՝ տեղական խորհուրդնե-
րի ընտրությունների կանոնադրությունը փայլուն ապացույցն է
այն բանի, թե ինչպես մեր սոցիալիստական պետությունն ապա-
հովում է սոցիալիստական դեմոկրատիայի լիակատար իրակա-
նացումը, դեմոկրատիա, որ նվաճել են մեր յերկրի ժողո-
վուրդները Լենինի—Ստալինի մեծ կուսակցության ղեկավարու-
թյամբ և որը, որպես անխախտ օրենք, գրված է Ստալինյան
մեծ Սահմանադրության մեջ:

Տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրությու-
նը, համաձայն Հայկական ԽՍՀ Սահմանադրության 109-րդ հոդվա-
ծի, մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացու համար հնարավո-
րություն է ապահովում Սահմանադրությամբ նրան տրված իրա-
վունքը՝ ընտրել աշխատավորների դեպուտատների խորհուրդներ
ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման
վրա, գաղտնի քվեարկությամբ: Դեմոկրատիայի այդպիսի իրա-
գործումը հնարավոր է միայն մեզ մոտ, որտեղ ժողովուրդն
ինքն է հանդիսանում իր մեծ բախտավորության տերն ու ստեղ-
ծողը, և դրա համար մեր ժողովուրդն իր մեծ շնորհակալությունն
է հայտնում մեր կոմունիստական կուսակցությանը, մեր առաջ-
նորդ ընկեր Ստալինին: (Ծափահարություններ):

Ընկե՛ր դեպուտատներ, տեղական խորհուրդների առաջիկա
ընտրություններին Յերևանի օկրուգային և տեղամասային ընտ-
րական հանձնաժողովների անդամների թիվը շատ ավելի կմե-
ծանա:

Մարդկանց այդ մեծ բանակը, որը աշխատավորները կա-
ռաջադրեն օկրուգային և տեղամասային ընտրական հանձնաժո-
ղովների համար, մենք պետք է կանոնավոր հրահանգենք, մենք
պետք է օգնենք նրանց և ապահովենք նրանց կանոնավոր աշխա-
տանքը:

Առաջիկա ընտրական կամպանիան պետք է է՛լ ավելի բար-
ձրացնի աշխատավորների դեպուտատների խորհուրդների դե-
րը, աշխուժացնի նրանց գործունեությունը: Աշխատավորների
դեպուտատների խորհուրդների ընտրությունները հաջող անցկաց-

ղաքականությամբ զբաղվել: Նրանք քաղաքական գիտակցությունից վախենում են: Նրանք գիտեն, որ քաղաքականապես գրագետ զինվորները կհրաժարվեն Թալանչիական, զավթողական պատերազմ մղելուց: Ընդհակառակը, մեր բանակի ուժը՝ նրա քաղաքական գիտակցությունն է: Մեր մարտիկը գիտե, թե ինչու համար է նա պատերազմի գնալու, և հենց այդ է մեր բանակի հսկայական անպարտելի, բարոյական ուժը:

Մենք գիտենք, որ վերջին ժամանակներս մեր յերկիրը խոշոր հաջողություններ ունի ինչպես ներքին, նույնպես և արտաքին քաղաքականության մեջ: Վերջին օրերի դեպքերը, Գերմանիայի հետ կնքված չհարձակվելու պայմանագիրը մի անգամ ևս ցուցադրեցին մեր յերկրի ուժը և մեր միջազգային քաղաքականության ճիշտ լինելը:

Սակայն մենք գիտենք նույնպես, որ չնայած խաղաղության քաղաքականության հաջողությանը, մեր յերկրի պատերազմը կապիտալիստական յերկրների հետ անխուսափելի յե: Այդպիսի պատերազմում հաղթելու համար մենք պետք է չարունակենք է՛լ ավելի ամրապնդել մեր յերկրի տնտեսական հզորությունը, կատարելով յերրորդ հնգամյա պլանը: Մենք պետք է ամեն կերպ ամրապնդենք միջազգային կապը համաշխարհային պրոլետարիատի հետ, մենք պետք է ամրապնդենք մեր Կարմիր բանակի մարտական հզորությունը: Խաղաղ ժամանակ մեր Կարմիր բանակը հանդիսանում է մարտական քաղաքական ուսուցման դպրոց: Այժմ մեր Կարմիր բանակի մասերը պետական քննություններ են տալիս: Այդ մասերը, հրամանատարների, քաղաշխատողների ղեկավարությամբ, կառավարությանը խոստում են տվել, որ այդ քննությունն իրենք կտան ոչ միայն լավ, այլև գերազանց: Այդ քննությունը տալու առաջին օրը հրամանատարների ու քաղաշխատողների մեծ մասն իրենց խոստումը կատարեց: (Ծափահարություններ):

Ընկե՛ր դեպուտատներ, կուսակցության ու կառավարության և ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի կոչով մեր Կարմիր բանակը, յեթե այդ անհրաժեշտ լինի, կկարողանա մարտական քննություն տալ նաև մարտի դաշտերում: (Ծափահարություններ):

Մենք պատրաստ ենք մեր սոցիալիստական հայրենիքի համար կռվել արիաբար, հմտորեն և կոմունիզմի լիակատար հաղթանակին հասնելու համար չխնայել մեր արյունն ու կյանքը: (Ծափահարություններ):



ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Ա. Պետրոսյանին:

Ա. Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ (Տ ե ր յ ա ն ի № 27 օ կ ր ու գ): Ընկե՛ր դեպուտատներ, Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովը Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննությանն է ներկայացրել աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը:

Սեսիայի քննությանը ներկայացրած՝ տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը փայլուն ապացույցն է այն բանի, թե ինչպես մեր սոցիալիստական պետությունն ապահովում է սոցիալիստական դեմոկրատիայի լիակատար իրականացումը, դեմոկրատիա, որ նվաճել են մեր յերկրի ժողովուրդները Լենինի—Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ և որը, որպես անխախտ օրենք, գրված է Ստալինյան մեծ Սահմանադրության մեջ:

Տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը, համաձայն Հայկական ԽՍՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի, մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացու համար հնարավորություն է ապահովում Սահմանադրությամբ նրան տրված իրավունքը՝ ընտրել աշխատավորների դեպուտատների խորհուրդներ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ: Դեմոկրատիայի այդպիսի իրագործումը հնարավոր է միայն մեզ մոտ, որտեղ ժողովուրդն ինքն է հանդիսանում իր մեծ բախտավորության տերն ու ստեղծողը, և դրա համար մեր ժողովուրդն իր մեծ շնորհակալությունն է հայտնում մեր կոմունիստական կուսակցությանը, մեր առաջնորդ ընկեր Ստալինին: (Ծափահարություններ):

Ընկե՛ր դեպուտատներ, տեղական խորհուրդների առաջիկա ընտրություններին Յերևանի օկրուգային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների թիվը շատ ավելի կմեծանա:

Մարդկանց այդ մեծ բանակը, որը աշխատավորները կառաջադրեն օկրուգային և տեղամասային ընտրական հանձնաժողովների համար, մենք պետք է կանոնավոր հրահանգենք, մենք պետք է օգնենք նրանց և ապահովենք նրանց կանոնավոր աշխատանքը:

Առաջիկա ընտրական կամպանիան պետք է է՛լ ավելի բարձրացնի աշխատավորների դեպուտատների խորհուրդների դերը, աշխուժացնի նրանց գործունեությունը: Աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունները հաջող անցկաց-

նելու համար պետք է այժմ իսկ ծավալենք նախընտրական աշխատանքը: Մասսայական-ագիտացիոն և կազմակերպական աշխատանքի կենտրոնը, ինչպես անցյալ ընտրական կամպանիաների ժամանակ, պիտի հանդիսանա ընտրական տեղամասը: Անհրաժեշտ է այժմ իսկ վերականգնել ագիտացիոն կետերը ու լայն ընթացք տալ ագիտացիոն աշխատանքին: Յեվ անհրաժեշտ է այժմ իսկ մտածել ընտրական աշխատանքի ամբողջ տեխնիկայի մասին, վորպեսզի ընտրության որերին ընտրական տեղամասերում ապահովվի կանոնավոր աշխատանքը:

Կուսակցական և խորհրդային կազմակերպությունները ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ հարստացել են կազմակերպական և քաղաքական աշխատանքի մեծ փորձով: Առաջիկա ընտրություններին այդ փորձը պետք է լիովին ոգտագործել և ընտրական կամպանիան պետք է տանել այնպես, ինչպես պահանջում են մեզանից կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և անձամբ ընկեր Ստալինը: (Ծափահարություններ):

Վոր աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունները կարող են լավ նախապատրաստվել ու լավ անցկացվել—դրա համար յերաշխիք է հանդիսանում աշխատավորների աննախընթաց ակտիվությունը, նրանց բարոյական-քաղաքական միասնությունը, նրանց անձնուրաց նվիրվածությունն ու սերը դեպի իրենց հայրենիքը, դեպի բոլշևիկյան կուսակցությունը, դեպի աշխատավորների առաջնորդ մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

Կեցցե՛ Ստալինյան մեծ Սահմանադրությունը:

Կեցցե՛ մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Դավթյանին:

Խ. Հ. ԴԱՎԹՅԱՆ (Ղամարլուի № 167 ոկրուգ): Ընկերնե՛ր, այսոր մենք զեկուցում լսեցինք այն որենքի մասին, վորը պետք է տեղերում անցկացնենք շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների ժամանակ: Յես միայն մի յերկու խոսքով ուզում եմ կանգ առնել մեր անելիքների մասին:

Ընկերնե՛ր, յես աշխատում եմ Ղամարլուի շրջանում, վորպես Դարղալու գյուղի գյուղխորհրդի նախագահ: Ընկերնե՛ր, մեր առաջ մեծ խնդիր է դրված, մենք ամենայն ճշտությամբ պետք է կատարենք կուսակցության և Կառավարության վորոշումը, այն



է՝ աշխատանքները պետք է այնպես կազմակերպենք, վոր մեզ առաջադրված խնդիրները կատարենք լրիվ:

Դրա համար մենք գյուղ վերադառնալուց հետո, առաջին հերթին, պետք է կազմակերպենք գյուղի ագիտացիոն աշխատանքը: Մենք պետք է ոկրուգների և տեղամասերի աշխատանքն այնպես կազմակերպենք, վոր ընտրությունները հաջող անցնեն: Գյուղխորհուրդների նախագահները պետք է ընտրական ցուցակները կազմեն կանոնավոր կերպով, վորպեսզի վոչ մեկը դուրս չմնա ցուցակից:

Յերկրորդ, պետք է վստահելի ընկերներ և ագիտատորներ տալ այդ աշխատանքը ղեկավարելու համար: Մենք մի մարդու պես բոլշևիկորեն պետք է կատարենք այդ աշխատանքը, այնպես, ինչպես կատարեցինք Միության և Հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունները:

Դարղալուի կոլտնտեսությունը 1938 թ. ունեցել է 2 միլիոն յեկամուտ, 1939 թ. այդ յեկամուտը յեղել է 2 միլ. 270 հազար, բամբակի բերքը յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 26 ցենտ., խաղող՝ 126 ցենտ., աշխորի արժեքը հասցրել ենք 23 ռուբլու, պետությանը հանձնել ենք 2000 տոնն խաղող և 350 տոնն բամբակ:

Մենք հուսով ենք, վոր ինչպիսի հաջողությամբ անցկացրինք Գերագույն Խորհրդի ընտրությունները, վորի ժամանակ կատարեցինք մեր բոլոր աշխատանքները և դրա հետ միասին պայքարեցինք բարձր բերքի համար, նույնպիսի հաջողությամբ էլ գերազանց կանցկացնենք և գյուղական խորհուրդների ընտրությունները, իսկ 1939 թ. պետական պարտավորությունները կկատարենք 100 տոկոսով:

Կեցցե՛ մեր բոլորիս արև մեծ Ստալինը. ուռա՛: (Բուռն ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Մարտիրոսյանին:

Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Միկոյանի № 198 ոկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, մենք այստեղ ձեզ հետ միասին լսեցինք զեկուցում Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագծի մասին:

Հայկական Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիային ներկայացված՝ տեղական խորհուրդների դեպուտատների ընտրությունների կանոնադրության այդ նախագիծը ներկայացնում է քաղաքական խոշորագույն նշանակություն ունեցող մի դոկումենտ,

վորը մշակված և ամբողջովին կառուցված է ԽՍՀՄ-ի Ստալինյան մեծ Սահմանադրության հիման վրա և ամբողջովին ապահովում է Հայկական ԽՍՀ Սահմանադրության սկզբունքների անշեղ կիրառումը ընտրությունների գործում:

Ես լիովին միանում և պաշտպանում եմ Որենսդրական Ենթադրությունների Հանձնաժողովի կողմից Գերագույն Խորհրդի Երրորդ սեսիայի քննությանը ներկայացված՝ տեղական խորհուրդների դեպուտատների ընտրությունների կանոնադրության նախագիծը:

Տեղական խորհուրդների դեպուտատների ընտրությունների կանոնադրության նախագիծը մի անգամ ևս ցույց է տալիս ամբողջ աշխարհին Խորհրդային պետության ընտրական սիստեմի՝ աշխարհում չտեսնված լայն դեմոկրատական սկզբունքները:

Մեր յերկրի մարդիկ կրկին ու կրկին անգամ զգում են խորհրդային ընտրական սիստեմի արմատական տարբերությունը բոլոր կապիտալիստական պետությունների ընտրական որենքներից:

Այնտեղ, արտասահմանում, արվում է ամեն բան, վորպեսզի ժողովրդական լայն մասսաները հեռու պահվեն պետական գործերի վրա վորևէ ազդեցություն ունենալուց: ԽՍՀՄ-ում սոցիալիստական պետության որենքն, իր բոլոր հոդվածներով, ապահովում է ընտրությունների որը 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիների իրական մասնակցությունը պետական իշխանության բոլոր որգանների կազմակերպմանը:

Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագծի 2-րդ հոդվածում ասված է՝

«Հայկական ԽՍՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրություններն ընդհանուր են. Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու աշխատավորների դեպուտատների խորհուրդներում, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք



դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքի զրկումով»:

Այդ իրավունքը, Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն նվաճումը, վոսկե տառերով գրի յե առնված ԽՍՀ Միության Հիմնական Որենքի՝ Ստալինյան պանծալի Սահմանադրության մեջ:

Լենինն ասում եր, վոր պրոլետարիատի դիկտատուրայի հետևանքը կլինի դեմոկրատիայի վիթխարի ընդլայնումը:

ԽՍՀՄ-ում Ստալինյան Սահմանադրությունն ամրապնդեց սոցիալիստական դեմոկրատիզմի հաղթանակը խորհրդային բոլոր քաղաքացիների համար:

Սոցիալիստական դեմոկրատիզմի հաղթանակն իր վառ արտահայտությունը գտավ խորհրդային ժողովրդի բարոյական-քաղաքական միասնության մեջ, վորն արտահայտվեց ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ:

Մեծ և հիանալի յեն 1937 թ. դեկտեմբերի 12-ին՝ Գերագույն Խորհրդի ընտրության որը, համաժողովրդական տոնի այդ որը ձեռք բերված նվաճումները: Այդ համաժողովրդական տոնի որը մեր նվաճումներն արտահայտվեցին կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկի բոլշևիկյան հաղթանակով:

Ընկե՛ր դեպուտատներ, այդ որը 90 միլլիոն ընտրողներ քվեարկեցին հոգուտ Լենինի—Ստալինի կուսակցության, հոգուտ մեր պանծալի Սահմանադրությունը կերտող, կոմունիզմի իմաստուն դրոշակակիր մեծ Ստալինի:

Կոմունիստների և անկուսակցականների բլոկը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ ցույց տվեց Հայաստանի աշխատավորության անսահման նվիրվածությունը խորհրդային իշխանությանը, կոմունիստական կուսակցությանը և նրա մեծահանճար առաջնորդ ընկեր Ստալինին:

Ամբողջ հայ ժողովուրդը, Խորհրդային Հայաստանի աշխատավորները մեծ սիրով ու նվիրվածությամբ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատության առաջին թեկնածու առաջադրեցին պրոլետարական հեղափոխության մեծագույն հանճար, յերջանիկ կյանքի Սահմանադրությունը ստեղծող, կոմունիզմի հաղթանակները կազմակերպող ու վոգեշնչող մեծ Ստալինին:

Ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի առաջա-

դրումը, վորպես Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատության թեկնածու, ամեն տեղ ու ամենուրեք, քաղաքներում և գյուղերում, վերածվեց դեպի կոմունիստական կուսակցությունը, սոցիալիստական հայրենիքը տածվող համաժողովրդական սիրո ու նվիրվածության հզոր ցույցի:

Հայաստանի աշխատավորությունը յերջանիկ է, վոր իր Գերագույն որգանում իր ծաղկող հայրենիքին նվիրված լավագույն զավակների, խորհրդային հայրենասերների հետ միասին ընտրեց իր գերագույն որգանում մեծ Ստալինին և նրա մարտական զինակիցներ ընկեր Մոլոտովին ու ընկեր Միկոյանին:

Խորհրդային Հայաստանի աշխատավորները գիտեն, վոր ընկեր Ստալինի անվան հետ են կապված իրենց ազատությունը և անկախությունը:

Կոմունիստների և անկուսակցականների բլոկը հաղթանակեց և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրության ժամանակ կոմունիստների և անկուսակցականների բլոկի օգտին ձայն տվին քվեարկությանը մասնակցողների ընդհանուր թվի 99,67 տոկոսը:

Ինչպես ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների, այնպես էլ միութենական և ավտոնոմ հանրապետությունների ընտրությունների ժամանակ ամբողջ աշխարհն ականատես յեղավ Խորհրդային Միության մեջ աշխարհիս ամենադեմոկրատիկ Ստալինյան Սահմանադրության հիման վրա կատարված ընտրություններին:

Ընկե՛ր դեպուտատներ, մինչև վերջը իրականացնել յերկրի քաղաքական կյանքի դեմոկրատիզացիան, նշանակում է՝ հոգատար լինել մասսաների նկատմամբ, ունկնդրել նրանց ձայնին, ծառայել նրանց:

Խորհրդային Սահմանադրությունը, ի տարբերություն կապիտալիստական ամբողջ աշխարհի սահմանադրություններից, իր 122-րդ հոդվածում սահմանել է կնոջ և տղամարդու լիակատար հավասարությունը: Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունք են վայելում տղամարդկանց հետ հավասարապես:

Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների կանոնադրության նախագծի 4-րդ հոդվածում ասված է.

> «Հայկական ԽՍՀ Սահմանադրության 112-րդ հոդվածի հիման վրա կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են տղամարդկանց հետ հավասար»:



Չի կարելի առանց հուզվելու կարդալ այս խոսքերը, յերբ մի հայացք ես գցում այն ուղու վրա, վորն անցել է խորհրդային կինը անցյալում, պայքար մղելով այդ մեծ իրավունքի համար, իր արժանապատվության համար:

Սակայն Ստալինյան Սահմանադրությունը չի սահմանափակվում նրանով, վոր ապահովում է կնոջ իրավական հավասարությունը տղամարդու հետ, մեր պանծալի Սահմանադրության 122-րդ հոդվածն ամուր, անսասան նյութական հիմք է ստեղծում այդ իրավական հավասարության համար:

Այդ հոդվածն ամբողջ մարդկության առջև հռչակում է՝

> «Կնոջը ԽՍՀՄ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում:
>
> Կանանց այդ իրավունքների իրականացման հնարավորությունն ապահովվում է կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կրթության ասպարեզում, մոր ու մանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղիության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկամսուրների և մանկապարտեզների լայն ցանցով»:

Այդպես չէ կնոջ դրությունը կապիտալիստական աշխարհում· կապիտալիզմը չկարողացավ և չի էլ կարող նույնիսկ ձևական իրավահավասարություն տալ կնոջը:

Միայն մեր Խորհրդային մեծ յերկրում, մարդկային պատմության մեջ առաջին անգամ կինն իրավունք, պատիվ, արժանապատվություն ձեռք բերեց: Խորհրդային Միության մեջ միլիոնավոր կանայք պատրաստ են կրծքով պաշտպանելու իրենց մեծ սոցիալիստական հայրենիքը, պայքար մղելու նրա հզորության համար, Լենինի—Ստալինի գործի համար, կոմունիզմի կառուցման գործի համար:

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ, մեր հասարակակարգը, հաղթանակած սոցիալիզմի հասարակակարգը, հանդիսանում է մասսաների կոմունիստական դաստիարակության սքանչելի դպրոց: Այնպես, ինչպես ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների ընտրությունների անմոռանալի օրերին, մասսայական քաղաքա-

կան աշխատանքի կենտրոնն էր հանդիսանում ընտրական տեղամասը, նույնը, դեռ ավելին, մենք պետք է կատարենք դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ, պետք է ավելի բարձր հիմքերի վրա դնենք ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը, վորովհետև բոլշևիկների ղեկավարության անպարտելիությունը նրանումն է, վոր մեր կուսակցությունը մշտապես ու սերտորեն կապված է աշխատավոր մասսաների հետ, վորովհետև մեր բոլոր հաղթանակների հիմքում դրված է Լենինի—Ստալինի կուսակցության անխզելի կապը բանվոր դասակարգի, ամբողջ խորհրդային ժողովրդի բազմամիլիոն մասսաների հետ:

Տեղական խորհուրդների ընտրությունների նախապատրաստական աշխատանքին ներգրավվում են քաղաքի և գյուղի միլիոնավոր աշխատավորները, նրանք աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրական հանձնաժողովների անդամներ են: Այդ բազմաթիվ բանակին պետք է ավելացնել նաև միլիոնավոր ագիտատորներին, պրոպագանդիստներին, վորոնք բոլշևիկյան խոսքը տանում են ժողովրդի մեջ, վորոնք իրենց քաղաքական աշխատանքով ապահովում են աշխատավորների լիովին մասնակցությունն ընտրություններին և ապահովում են կոմունիստների ու անկուսակցականների բլոկի հաղթանակը:

Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները պետք է անցկացնել լայնորեն, ներգրավելով առաջավոր անկուսակցական մարդկանց ամենալայն խավերը կազմակերպական ու ագիտացիոն աշխատանքների, դաստիարակելով և կոփելով այդ համաժողովրդական քաղաքական կամպանիայի միջոցով անկուսակցական ակտիվի նոր բանակ:

Ընկե՛ր դեպուտատներ, մեր սոցիալիստական հասարակությունը, ղեկավարվելով մեր կուսակցության XVIII պատմական համագումարի վորոշումներով և հետևելով ընկեր Ստալինի իմաստուն ցուցումներին, առաջ է գնում դեպի կոմունիզմի լուսաշող գագաթները:

Խորհրդային պետությունը լի յե ուժով ու յեռանդով: Մեր ժողովուրդն ամուր համախմբված է Լենինի—Ստալինի կուսակցության շուրջը, մեծ Ստալինի իմաստուն ղեկավարությամբ գնում է դեպի կոմունիզմի հոյակապ հաղթանակները:



Կեցցե՛ մեր հաղթանակների ցուցանիշը՝ մեր պանծալի Ստալինյան Սահմանադրությունը:

Կեցցե՛ հայ ժողովրդի ազատարար ու նրա մեծ բարեկամ, կոմունիզմի իմաստուն նավավար մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Պետրոսյանին:

Պ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ (Աշտարակի № 77 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունները ցույց տվին կոմունիստների և անկուսակցականների բլոկի փայլուն հաղթանակը: Խորհրդային ժողովուրդը, Գերագույն Խորհուրդների ընտրությունների օրերին, միահամուռ կերպով քվեարկեց կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին:

Մեր ամբողջ ժողովուրդը նվիրված է կոմունիզմի կառուցման գործին, Լենինի—Ստալինի գործին, մեր Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությանը: Մեր ժողովուրդն իր այդ նվիրվածությունը բազմիցս ցույց է տվել քաղաքացիական պատերազմի մարտերում, կոմունիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարում, միաձայն քվեարկելով կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին:

Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների այսօր քննարկվող կանոնադրության նախագիծը հիմնված է խորհրդային դեմոկրատիզմի սկզբունքների վրա: Նա բղխում է մեծ խարտիայից, աշխարհի ամենադեմոկրատիկ սահմանադրությունից—Ստալինյան Սահմանադրությունից:

Հիմնականում նա բղխում է Միության և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների կանոնադրությունից: Նա մեր հայրենիքի յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովում է կառավարման օրգանների համար ընտրելու և ընտրվելու իրավունք: Նա ապահովում է գաղտնի քվեարկությունը: Նա ապահովում է բոլոր ընտրողների մասնակցությունը աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրություններին:

Ընկե՛ր դեպուտատներ, յես կարծում եմ, վոր արտահայտած կլինեմ բոլոր դեպուտատների կարծիքը, առաջարկելով հաստատել Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Օրենսդրական Յենթա-

*դրությունների հանձնաժողովի կողմից ներկայացված՝ Հայկական ՍՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը:*

*Ամբողջ հայ ժողովրդի խնդիրն է՝ ուսումնասիրել այդ կանոնադրությունը, կուսակցական, պրոֆմիութենական և հասարակական կազմակերպությունների խնդիրն է՝ ամբողջ բնակչության մեջ, բոլոր ընտրողների մեջ աշխատանք կազմակերպել՝ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը ժողովրդականացնելու և պարզաբանելու ուղղությամբ:*

*Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ՍՍՀ աշխատավորները, Սովետական Միության բոլոր աշխատավորների հետ միասին, ցույց տվին իրենց նվիրվածությունը Լենինի—Ստալինի կուսակցությանը, իրենց նվիրվածությունը ամբողջ աշխարհի աշխատավորների առաջնորդ մեծ Ստալինին, իրենց նախընտրական ժողովներում առաջադրելով մեծ Ստալինի և նրա մերձավորագույն զինակիցների թեկնածությունը, ընտրություններին միահամուռ կերպով քվեարկելով կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին:*

*Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի ընտրություններին մասնակցել է մեր հանրապետության ընտրողների 99,6%-ը:*

*Ես կարծում եմ, ընկե՛ր դեպուտատներ, որ մենք ձեզ հետ միասին կհասնենք այն բանին, որպեսզի աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրություններին մասնակցեն մեր հանրապետության բոլոր ընտրողները գլխովին:* (Ծափահարություններ)։

*Որպեսզի ընտրություններին մասնակցի ամբողջ բնակչությունը գլխովին, մեր շրջանային, քաղաքային և գյուղական կազմակերպությունները պետք է լավագույն կերպով ու խնամքով կազմակերպեն ու նախապատրաստեն տեղական խորհուրդների ընտրությունները:*

*Դուք հիշում եք, ընկե՛ր դեպուտատներ, որ անցյալ ընտրություններին միքանի վայրերում ընտրությունների նախապատրաստական աշխատանքների խոչընդոտներից մեկը՝ ընտրողների ցուցակների անփույթ կազմած լինելն էր:*

*Աշխատավորների դեպուտատների առանձին խորհուրդների կողմից ընտրողների ցուցակները անփույթ կազմվելու պատճառով, իրենք իսկ բազմիցս հարկադրված չեղան ստուգելու ընտրողների կազմված ցուցակները:*

*Մեր խորհուրդների խնդիրն է՝ ընտրողների ցուցակները կազմել խնամքով և ճշտությամբ, որպեսզի ոչ մի ընտրող ցուցակներից դուրս չմնա:*

*Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային և գյուղական խորհուրդները ընտրողների ցուցակները կազմելու գործը պիտի կազմակերպեն այնպես, որպեսզի մինչև տեղական խորհուրդների ընտրությունները կատարվելու օրը ընտրողների ցուցակները սիստեմատիկորեն ստուգվեն և տեղամասային ընտրական հանձնաժողովներին հանձնվեն միանգամայն ճիշտ կազմված ընտրողների ցուցակներ:*

*Մեր շրջանային և քաղաքային խորհուրդները ընտրական օկրուգների կազմակերպմանը, ընտրական տեղամասերը ճշտելուն պետք է ձեռնարկեն այսօր մեր կողմից ընդունված կանոնադրության համապատասխան: Այդ նույնպես խոշոր և լուրջ աշխատանք է պահանջում աշխատավորների դեպուտատների խորհուրդներից:*

*Շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ապարատները պետք է իրենց աշխատանքները լավագույն կերպով վերակառուցեն, նրանք իրենց աշխատանքում պետք է ապահովեն օպերատիվություն ու պարզորոշություն, թույլ չտալով թափթփվածություն և անճշտություններ:*

*Նրանք պետք է ճիշտ հիմքերի վրա դնեն ընտրողների ցուցակներում չեղած անճշտությունների մասին հայտարարությունների քննությունը, իրենց բնակավայրը փոխած ընտրողներին «քվեարկության իրավունքի վկայականներ» տալը:*

*Մեր կուսակցական, պրոֆմիութենական և հասարակական կազմակերպությունները հսկայական աշխատանքներ ունեն կատարելու օկրուգային և տեղամասային ընտրական հանձնաժողովների համար ներկայացուցիչներ առաջադրելու ուղղությամբ, որոնք, ինչպես նախատեսում է կանոնադրության նախագիծը, լինելու յեն բավականաչափ մեծ թվով:*

*Մեր կուսակցական, պրոֆմիութենական և հասարակական կազմակերպություններն աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների համար պիտի առաջադրեն լավերից լավագույններին, մեր հայրենիքին անհունորեն նվիրվածներին, աշխատանքին սոցիալիստական վերաբերմունքի օրինակներ ցույց տվողներին, այն է՝ արդյունաբերության մեր հիանալի ստախա-*

նովականներին, Հաղթական, սոցիալիստական գյուղատնտեսության լավագույն մարդկանց, մեր խորհրդային ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներին, մեր Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի անվեհեր մարտիկներին ու հրամանատարներին:

Ընկե՛ր դեպուտատներ, Հայ ժողովուրդը աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների օրը կվերածի համաժողովրդական տոնի օրի, նա մի անգամ ևս ցույց կտա իր անսահման նվիրվածությունը Լենինի—Ստալինի կուսակցությանը, իր սերը հարազատ Ստալինին:

Կեցցե՛ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը:

Կեցցե՛ մեր հարազատ ու սիրելի առաջնորդ մեծ Ստալինը:

(Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Ծիգանյանին:

Բ. Ա. ԾԻԳԱՆՅԱՆ (Կայարանի № 8 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի քննությանը ներկայացված՝ Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը կառուցված է միանգամայն համապատասխան Խորհրդային Միության Հիմնական Օրենքին՝ Ստալինյան Սահմանադրությանը և Հայկական ԽՍՀ Սահմանադրությանը:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը քաղաքական հսկայական նշանակություն ունեցող փաստաթուղթ է: Նա մի անգամ ևս ամբողջ աշխարհին ցույց է տալիս մեր ընտրական սիստեմի իսկական սոցիալիստական դեմոկրատիզմը:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրություններն ե՛լ ավելի կբարձրացնեն աշխատավոր մասսաների ակտիվությունը՝ Ստալինյան երրորդ հնգամյա պլանի կատարման համար մղվող պայքարում, պլանի, վոր տանում է դեպի ժողովրդական տնտեսության, մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկեցության ու կուլտուրայի հետագա աճումը:

Ունենալով ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների մեծ փորձը, խորհրդային և կուսակցական տեղական կազմակերպությունները պետք է իրենց բոլոր ուժերը լարեն, վորպեսզի աշխատավորների դեպուտատնե-



րի տեղական խորհուրդների առաջիկա ընտրություններն ընթանան ե՛լ ավելի կազմակերպված, առանց ընտրությունների կանոնադրության ամենափոքրիկ խախտումների:

Կանոնադրության յուրաքանչյուր հոդվածում արտահայտված է ստալինյան հոգատարությունը դեպի մարդը, վորպես աշխարհում ամենաթանկագին կապիտալը: Աշխարհում այդպիսի ազատ ընտրություններ վոչ մի երկրում չկան:

Կապիտալիստական բոլոր երկրներում գոյություն ունեն նստակեցության վերաբերյալ սահմանափակումներ, կրթական, գույքային և այլ ցենզեր: Ընկեր Ստալինը բնութագրելով ԽՍՀՄ ընտրական սիստեմն, ասաց՝

«Վո՛չ թե գույքային դրությունը, վո՛չ թե ազգային ծագումը, վո՛չ թե սեռը, վո՛չ թե պաշտոնեական դրությունը, այլ յուրաքանչյուր քաղաքացու անձնական ընդունակություններն ու անձնական աշխատանքն են վորոշում նրա դրությունը հասարակության մեջ»:

Ընտրությունների կանոնադրությունը հաստատվելուն պես, իսկույն ևեթ սկսվելու յե ընտրական կամպանիայի նախապատրաստման մեծ ու լուրջ աշխատանքը: Պետք է նկատի ունենալ, վոր առաջիկա ընտրությունները կլինեն ավելի բարդ, քան միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունները:

Ընտրությունների այս բարդությունը բացատրվում է, թեկուզ, նրանով, վոր աշխատավորների տեղական խորհուրդների համար մենք պետք է ընտրենք բավականաչափ շատ ավելի դեպուտատներ, քան ընտրվել եյին միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների համար:

Առաջիկա ընտրական կամպանիան մենք պետք է անցկացնենք կոմունիստների և անկուսակցականների սերտ միությամբ՝ նրանց հետ բլոկ կազմած, վորովհետև կուսակցության ուժը, ինչպես սովորեցնում է մեզ ընկեր Ստալինը, մասսաների հետ նրա ունեցած կապն է, վորովհետև բոլշևիկյան ղեկավարության ուժն ու անպարտելիությունը կայանում է մասսաների հետ ունեցած կապի մշտական ամրացման և նրա ձայնին լսելու պատրաստակամության մեջ:

Հենց կոմունիստների և անկուսակցականների կապը, վորն իր այնքան վառ արտահայտությունը գտավ կոմունիստների ու անկուսակցականների ստալինյան բլոկի մեջ, մեզ համար ապահովեց ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի և միութենական ու

ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների փայլուն հաջողությունը։

Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունները մեզ համար կլինեն լուրջ քաղաքական քննություն, լուրջ ստուգումն այն բանի, թե մենք ինչպես ենք կարողանում բնակչության մեջ կազմակերպական ու քաղաքական աշխատանք տանել։ Այդ քննությունը մենք պիտի բռնենք և պատվով կբռնենք։

Մենք այս ընտրությունները պետք է անցկացնենք այնպես, ինչպես վոր ասաց խորհրդային կառավարության նախագահ ընկեր Մոլոտովը,

> «Կրեմլի աստղերի կարմիր լույսը ե՛լ ավելի պայծառ փայլի ԽՍՀՄ աշխատավորների և ամբողջ աշխարհի ճնշվածների համար և վորպեսզի այդ ընտրությունների համար կուսակցությունն ու ընկեր Ստալինն ասեն մի խոսք՝ «ԼԱ՛Վ Է»»։

Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների խորհուրդների առաջիկա ընտրությունների կապակցությամբ մենք պետք է բարձրացնենք շրջանային, քաղաքային, գյուղական խորհուրդների աշխատանքը, բարելավենք սեկցիաների և ձեռնարկություններում դեպուտատական խմբերի աշխատանքը։

Պիտի հիշել ընկեր Ստալինի այն ցուցումը, թե աշխատավորները խորհրդային օրգանների և նրանց ղեկավարների աշխատանքի մասին ամենից առաջ դատելու չեն նրանով, թե նրանք ինչպես են կատարել ընտրողների նակազները։

Ստալինյան հնգամյակի տարիներում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, շնորհիվ ընկեր Ստալինի անձնական հոգատարության, աճել ու դաստիարակվել են խորհրդային նոր կադրեր, վորոնք դուրս են յեկել ժողովրդի ծոցից, վորոնք ընդունակ են իրենց յերկիրը կառավարելու։ Նրանցից լավագույնները կընտրվեն աշխատավորների դեպուտատների խորհուրդներում։

Առաջիկա ընտրական կամպանիան ե՛լ ավելի կբարձրացնի մասսաների ակտիվությունը՝ կատարելու համար ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի և Ստալինյան յերրորդ հնգամյակի առաջադրած խնդիրները։

Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների խորհուրդների առաջիկա ընտրություններն ամբողջ աշխարհի առաջ ե՛լ ավելի մեծ ուժով կցուցադրեն բազմամիլիոն



խորհրդային ժողովրդի սերտ համախմբվածությունը Լենինի—Ստալինի մեծ, անպարտելի դրոշի շուրջը։

Այս ընտրությունները մեր մեծ ժողովրդին ե՛լ ավելի ամուր կհամախմբեն խորհրդային իշխանության շուրջը, ամբողջ աշխատավոր մարդկության սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը։ (Ծափահարություններ)։

Կեցցե՛ Ստալինյան մեծ Սահմանադրությունը։

Կեցցե՛ Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամությունը։

Կեցցե՛ ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինը։ (Ծափահարություններ)։

ՆԱԽԱԳԱՀ։ *Խոսքը տրվում է դեպուտատ Ղազարյանին։*

Ս. Խ. ՂԱԶԱՐՅԱՆ (*Աղհամզալուի № 171 ոկրուգ*)։ Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը, վորը ներկայացված է Որենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից մեր Հանրապետության Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննությանը, ամբողջովին կառուցված է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմանադրության սկզբունքների հիման վրա և լրիվին համապատասխանում է Ստալինյան Սահմանադրության վոգուն ու նրա հոյակապ խնդիրներին։

Ընտրությունների ներկա կանոնադրությունը իրականում ապահովում է Ստալինյան Սահմանադրության բոլոր սկզբունքների կենսագործումը, վորին համապատասխան մեր յերկրում ընտրությունները կատարվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ։

Ընտրությունների կանոնադրության նախագիծն իր առաջին հոդվածից մինչև վերջին հոդվածն ուղղված է մի նպատակի՝ ապահովել աշխատավոր լայն մասսաների մասնակցությունը պետական կառավարման գործին։ Կանոնադրության նախագիծն արտացոլում է ստալինյան հոգատարությունը դեպի մարդը, դեպի ժողովուրդը, լայն դեմոկրատական կարգերի ամենուրեք կենսագործումն՝ ընտրությունների շրջանում։

Կանոնադրության նախագիծը լրիվին ապահովում է բոլոր քաղաքացիների ընտրական իրավունքները, ինչպես այդ մատնանշված է Ստալինյան Սահմանադրության մեջ։ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրու-

թյան համապատասխան հոդվածները փայլուն կերպով ակնայում են այդ:

Այդ ամենը վոսկե տառերով է արձանագրված մեր Սահմանադրության մեջ՝

«Հոդված 110․ Դեպուտատների ընտրություններն ընդհանուր են․ Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով»:

«Հոդված 111․ Դեպուտատների ընտրությունները հավասար են․ յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն, բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով»:

«Հոդված 112․ Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ հավասար»:

Ընկե՛ր դեպուտատներ, ընտրական այնպիսի սիստեմ, վորն ամբողջովին կառուցված է լայն դեմոկրատիայի սկզբունքների հիման վրա, վորը լրիվին ապահովում է մարդու իրավունքները, բոլոր աշխատավորներին ակտիվ կերպով մասնակից է դարձնում պետության կառավարման գործին, այդպիսի սիստեմ հատուկ է միայն Խորհուրդների յերկրին, վորտեղ իսկապես վոչնչացված են շահագործողները, վորտեղ մարդն իրոք ստացել է աշխատանքի իրավունք, կրթության իրավունք, հանգստի իրավունք, վորտեղ չկան հասարակության բարձր և ցածր դասեր, վորտեղ բոլոր աշխատավորները հավասար իրավունքներ են վայելում:

Բուրժուական և վոչ մի յերկիր չունի և չի կարող ունենալ դեմոկրատական այնպիսի կարգեր, ընտրական այնպիսի լայն սիստեմ, ինչպիսին մեզ մոտ է:

Այդ կապակցությամբ յես կուզեյի նշել միայն մի փաստ․ այդ այն է, վոր մեր իրականության մեջ կինը Ստալինյան Սահմանադրությամբ ունի տղամարդուն հավասար իրավունքներ տնտեսական ու քաղաքական կյանքում և յերկրի կառավարման մեջ: Սակայն կինն այնտեղ, կապիտալիզմի յերկրներում, յենթակա յե շահագործման և զրկանքների: Կապիտալիզմը նրանից խլել է վոչ միայն քաղաքական իրավունքները, այլ նույնիսկ այն,



ինչ վոր տվել է բնությունը: Կինն այնտեղ, ինչպես և միլիոնավոր աշխատավորները, վոչ միայն զուրկ է ընտրելու և ընտրվելու իրավունքից, այլև իր մայրական իրավունքից, ընտանիք կազմելու իրավունքից: Կինը չի կարող ազատ լինել կապիտալիզմի յերկրներում, քանի դեռ չի վոչնչացել ինքը կապիտալիզմը:

Մեր հանրապետության աշխատավորների դեպուտատների քաղաքային, շրջանային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը փայլուն կերպով ցույց է տալիս, թե ինչպես մեր հզոր յերկրի ժողովուրդները, Լենինի—Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ, իրականացնում են դեմոկրատիայի սկզբունքները: Այդ կանոնադրությունն ապացույց է այն բանի, թե ինչպես մեր բազմամիլիոն ժողովուրդը, լցված անհուն սիրով ու նվիրվածությամբ դեպի իր հարազատ Լենինի—Ստալինի կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը, կառուցում է աշխարհիս ամենալայն, ամենադեմոկրատական հասարակակարգը, վորը մեր ժողովուրդը նվաճել է մահու և կյանքի կռիվ մղելով բոլոր շահագործողների դեմ, վոչնչացնելով շահագործումը և մեր յերկրում նրա առաջացման հնարավորությունը: Մեր ժողովրդի քաղաքական միասնությունը, նրա հզոր կամքը փայլուն կերպով արտահայտվեցին Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ:

Ընկե՛ր դեպուտատներ, ձեզ հայտնի յե, վոր 1937 թ. դեկտեմբերի 12-ի և 1938 թ. հունիսի 12-ի նշանակալից որերին, յերբ մենք ընտրում եյինք Խորհրդային հզոր պետության Գերագույն Խորհուրդը և մեր ծաղկող հանրապետության Գերագույն Խորհուրդը, կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկը անվիճելի հաղթանակ տարավ: 92 միլիոն ընտրողներ քվեարկեցին կոմունիստների և անկուսակցականների բլոկի ոգտին, քվեարկեցին մեծ Ստալինի ոգտին: Այն վիթխարի աշխատանքը, վոր մենք կատարեցինք այդ որերին, մի հսկայական դպրոց հանդիսացավ մեր ամբողջ ժողովրդի համար՝ նրա հետագա ընտրությունների ժամանակաշրջանում:

Յեվ ահա այն հարուստ փորձը, վոր մենք կուտակել ենք ԽՍՀ Միության և մեր հանրապետության Գերագույն Խորհուրդների ընտրության շրջանում, ամբողջ ծավալով և ավելի լայն, վիթխարի մասշտաբով պետք է ոգտագործենք տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունների ժամանակ:

Սեփական ներկայացված՝ ընտրությունների կանոնադրության

նախագծից պարզ յերևում է, վոր աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների գործը լուրջ և պատասխանատու գործ է, ավելին՝ նա բարդ է, քան մինչև այժմ կատարված բոլոր ընտրությունները. ուստի հասկանալի յե, թե վորքան եներգիա, ինչպիսի խոշոր բացատրական ու կազմակերպական աշխատանք է պահանջվում մեզանից՝ այդ գործը հաջողությամբ ավարտելու համար:

Ամենքին պետք է հայտնի լինի, վոր աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների ժամանակ մենք գործ ենք ունենալու ավելի մեծ թվով մարդկանց հետ, ավելի մեծ ծավալ ունեցող մասսայական ու բացատրական աշխատանքի հետ: Մեր կուսակցության կենտրոնական որգան «Правда»-ն ժամանակին մեզ նախազգուշացրել է այդ աշխատանքի վիթխարի ծավալի մասին, ուստի մենք պարտավոր ենք գործի դնել մեր բոլոր միջոցներն ու հնարավորությունները՝ այդ աշխատանքները մինչև վերջը հասցնելու համար:

Վերցնենք թեկուզ մեր շրջանը, Ղամարլուն. աշխատավորների դեպուտատների շրջանային և գյուղական խորհուրդների դեպուտատների ընտրությունները անցկացնելու համար մենք պետք է կազմակերպենք մոտավորապես 370 ոկրուգ՝ աշխատավորների դեպուտատների գյուղական խորհուրդների ընտրությունների համար, մոտավորապես 35 ոկրուգ՝ աշխատավորների դեպուտատների շրջանային խորհուրդների դեպուտատների ընտրությունների համար, 400-ից ավելի ընտրական հանձնաժողով՝ աշխատավորների դեպուտատների շրջանային և գյուղական խորհուրդների ընտրությունները ղեկավարելու համար և մոտավորապես 45 ընտրական տեղամաս: Այսպես, ուրեմն, կազմակերպվելու յե, ընդհանուր առմամբ, մոտ 470 շրջանային, գյուղական, ոկրուգային և տեղամասային ընտրական հանձնաժողով, վորոնց մեջ ներգրավվելու յե 2400—2500 մարդ. դրան ավելացրած մոտավորապես 400 դեպուտատների թեկնածուներ և 500—600 ագիտատորներ ու վստահելի անձեր, կստացվի մի պատկառելի թիվ, վորը ինքնստինքյան վկայում է այդ աշխատանքների մեծության մասին:

Այստեղից պետք է հետևություն անել, ընկե՛ր դեպուտատներ, վոր ներկա ընտրական կամպանիան մենք պարտավոր ենք և պետք է անցկացնենք կոմունիստների ու անկուսակցականների ստալինյան բլոկի խիստ համագործակցության պայմաններում, վորովհետև կուսակցության ուժը, ինչպես մեզ սովորեցնում է



մեր առաջնորդը, մասսաների հետ ունեցած կապի մեջ է, այդ մասսաներին գլխովին պետության կառավարման գործին ակտիվ մասնակից դարձնելու մեջ է:

Ստալինյան Սահմանադրությունը մատնանշում է, վոր ամբողջ իշխանությունը մեր Միության մեջ պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների դեպուտատների խորհուրդների: Այդ նշանակում է, վոր առաջիկա ընտրական կամպանիան անցկացնելիս մենք պարտավոր ենք աչքի առաջ ունենալ, վոր մեր կազմակերպվածությունից է կախված աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների համար գործունյա, հեղինակավոր և արտադրության մեջ առաջավոր, Լենինի—Ստալինի գործին նվիրված մարդկանց ընտրելը:

Ընկե՛ր դեպուտատներ, յես ամբողջովին համաձայն եմ Որենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի ներկայացրած՝ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծն ընդունելուն, վորովհետև նա ամբողջովին կառուցված է մեր Սահմանադրությանը համապատասխան: Մենք համոզված ենք, վոր առաջիկա ընտրությունները կավարտվեն հաղթանակով, վորովհետև ընտրությունները կանցնեն Լենինի—Ստալինի կուսակցության ամենորյա հոգատարության, ժողովրդական մասսաների բուռն և ակտիվ մասնակցության պայմաններում, վորովհետև մեզ առաջնորդում և հաղթանակից հաղթանակ է տանում մեր հայր, մեր մեծ ուսուցիչ մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Հարությունյանին:

Մ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Բերդի № 213 ոկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, Համկոմկուսի XVIII համագումարում տված իր զեկուցման մեջ ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը բացառիկ խորությամբ և մեծ ուժով ընդգծեց սոցիալիստական պետության դերը՝ սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանում և նշեց բանվոր դասակարգի դիկտատուրան է՛լ ավելի ամրապնդելու խնդիրները:

Ստալինյան դեմոկրատիկ Սահմանադրության կենսագործումը պահանջում է խորհրդային իշխանության որգանների աշխատանքի արմատական վերակառուցում: Այդ վերակառուցման հիմքում պետք է դրվեն XVIII համագումարի վորոշումները և ընկեր Ստալինի զեկուցման համաժողովրդական պրոպագանդան,

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնգամյակի պլանների կատարման խնդիրները:

Այդ պահանջում է մինչև վերջը հասցնել յերկրի քաղաքական կյանքի դեմոկրատիզացիան, հոգատար լինել մասսաների նկատմամբ, ունկնդրել նրանց ձայնին և ծառայել նրանց: Այդ նշանաբանով էլ, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մայիսյան պլենումի վորոշումների հիման վրա, առաջիկայում անց են կացվելու աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների դեպուտատների ընտրությունները:

Ընկե՛ր դեպուտատներ, ստալինյան առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում մեր յերկրում ստեղծվեց ժամանակակից տեխնիկայով զինված հզոր ինդուստրիա, վորը բազա հանդիսացավ սոցիալիստական գյուղատնտեսության մեքենայացման համար: Ի կենսագործումն մեծ Ստալինի ցուցումների՝ տեխնիկայի տիրապետման մասին, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ աճեցին տասնյակ-հազարավոր նոր կադրեր, վորոնք, նոր տեխնիկայով զինված, ղեկավարում են մեր արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը, վորի շնորհիվ մեր արդյունաբերությունն իր զարգացման տեմպով առաջին տեղն է գրավում աշխարհում: Այդ ամենի արդյունքն է հանդիսանում այն, վոր ընկեր Ստալինի գլխավորությամբ մեր յերկրում իրականացված է սոցիալիզմի լիակատար կառուցումը, և մենք պայմաններ ստեղծեցինք սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու համար:

Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի քննությանը ներկայացված՝ Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը, վորի մասին զեկուցեց դեպուտատ ընկ. Արաջյանը, ամբողջությամբ համապատասխանում է ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրության վոգուն և արտահայտում է մեր մեծ յերկրի յերջանիկ ժողովրդի կամքը:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները մեծ խթան կհանդիսանան՝ մոբիլիզացիայի յենթարկելու մեր աշխատավորության ստեղծագործ ուժերը, է՛լ ավելի լայնորեն ծավալելու սոցմրցակցությունն ու ստախանովյան շարժումը, պատվով կատարելու Ստալինյան Յերրորդ հնգամյակի պլանները:



Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները բոլշևիկորեն նախապատրաստելու և անցկացնելու գործում մեր առաջին խնդիրն է՝ լայն ոգտագործել այն մեծ ու հարուստ փորձը, վոր մենք ձեռք ենք բերել ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ: Յերկրորդ խնդիրն է՝ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների աշխատանքին ներգրավել կուսակցական և անկուսակցական լայն մասսաներին, է՛լ ավելի բարձր աստիճանի վրա դնելով ընտրությունների աշխատանքը և, բոլշևիկյան լայն ագիտացիայի միջոցով, ընտրողների սեփականությունը դարձնել ընտրությունների կանոնադրության այն նախագիծը, վորը ներկայացված է ներկա Սեսիայի հաստատմանը:

Ընկե՛ր դեպուտատներ, ամբողջ հայ ժողովուրդը, մեր յերկրի ամբողջ ժողովրդի հետ միասին, բոլշևիկների հզոր կուսակցության ու ընկեր Ստալինի գլխավորությամբ, ԽՍՀՄ-ի և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ քվեարկեց կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկի ոգտին: Այդ նույն որինակով հայ ժողովուրդը կապահովի նաև աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունները և ամրակուռ շարքերով համախմբված բոլշևիկների կուսակցության ու նրա լենինյան-ստալինյան Կենտրոնական կոմիտեյի շուրջը, մեծ Ստալինի գլխավորությամբ՝ առաջ կգնա դեպի կոմունիզմի նորանոր հաղթանակները: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Մուրադյանին:

Ա. Կ. ՄՈՒՐԱԴՅԱՆ (Խանածախի № 119 ոկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, ՀԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը, վորը ներկայացված է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիային ի քննություն և ի հաստատություն, ամբողջովին բխում է Ստալինյան Սահմանադրության վոգուց, մի Սահմանադրության, վորն ամենաառաջավորն է մարդկության պատմության մեջ, ամենադեմոկրատականն ամբողջ աշխարհում, վորը ստեղծված է առաջավոր մարդկության հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինի ձեռքով:

Բուրժուազիան նույնպես ունի իր սահմանադրությունը և ընտրական սիստեմը. բուրժուական սահմանադրությունը պաշտ-

պանում է պրոլետարիատի և վողջ աշխատավոր մարդկության կեղեքիչների շահերը, բուրժուազիայի և կալվածատերերի, ձրիակերների, հափշտակիչների շահերը, վորոնք սկսել են նոր, յերկրորդ համաշխարհային պատերազմը, վորոնք Հաբեշստանը, Իսպանիան, Չինաստանը և այլ գաղութային ու կիսագաղութային յերկրները վերածել են մարդկային սպանդանոցների, վորոնք գնդակահարում են հարյուր-հազարավոր առաջավոր մարդկանց՝ ազատության ու դեմոկրատիայի համար պայքարողներին:

Խորհրդային նոր Սահմանադրությունը, Ստալինյան Սահմանադրությունը պաշտպանում է բանվոր դասակարգի, գյուղացիության, ինտելիգենցիայի և ամբողջ խորհրդային ժողովրդի շահերը, նա ամրապնդում է սոցիալիստական շինարարության գործում այն նվաճումները, վոր ձեռք է բերել խորհրդային աշխատավորությունը տնտեսության, քաղաքականության, արվեստի և կուլտուրայի բնագավառներում, նա ամրապնդում է սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում:

Սոցիալիզմի հաղթանակը հնարավորություն տվեց խորհրդային իշխանությանն անցնելու ընտրական սիստեմի հետագա դեմոկրատացմանը՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության սկզբունքի հիման վրա: Հենց այդ վողով էլ խմբագրված է ներկա Սեսիայի քննությանը ներկայացված տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության առաջին հոդվածը:

Ստալինյան մեծ Սահմանադրությունից բղխող Հայկական Սահմանադրության 110-րդ հոդվածն ասում է.

«Դեպուտատների ընտրություններն ընդհանուր են. Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասսայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով»:

Սահմանադրության այս հոդվածը, վորը մտցված է տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության 2-րդ հոդվածի մեջ, ամբողջ աշխարհի աշխատավորությանը ցույց է տալիս, վոր միայն սոցիալիստական իրավակարգում կարող է



հասնել մարդկությունն իր լիակատար իրավունքներին՝ ստանալ ազատություն, բարօրություն և յերջանիկ կյանք:

Միջազգային դրության ներկա պայմաններում, յերբ ագրեսորներն իրենց գազանային ժանիքներն են սրել Խորհրդային Միության դեմ, մեր յերկիրը, նրա բազմամիլիոն հայրենասերները, նրա անպարտելի Կարմիր Բանակը, Խորհրդային Միության մարշալ ընկեր Վորոշիլովի ղեկավարությամբ, կոմունիզմի մեծ տորատեգ մեծ Ստալինի գլխավորությամբ, պահպանում է խաղաղության գործը, հանդիսանում է խաղաղության հենարանն ամբողջ աշխարհում:

Ընկե՛ր դեպուտատներ, ԽՍՀՄ քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների դեպուտատների խորհուրդները, վորոնք աճել ու ամրապնդվել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետևանքով:

Այժմ, յերբ մեր առաջ դրված է աշխատավորների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների խնդիրը, մեզանից պահանջվում է կազմակերպական աշխատանքի մեծ հմտություն, անհրաժեշտ է ծավալել բոլշևիկյան լայն ագիտացիա և մասսայական աշխատանք՝ ընտրությունները հաջողությամբ ավարտելու համար:

ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացում ասված է.

«Նոր Սահմանադրությունը դրա հետ մեկտեղ ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիների վրա դնում է լուրջ պարտականություններ. կատարել օրենքները, պահպանել աշխատանքի դիսցիպլինան, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները, պահպանել ու ամրապնդել հասարակական սոցիալիստական սեփականությունը, պաշտպանել սոցիալիստական հայրենիքը»:

«Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտականությունն է»:

Մենք պետք է այնպես կազմակերպենք գործը, վոր խորհուրդների համար ընտրվեն ազնիվ մարդիկ, վոր նրանք օգնեն ու սովորեցնեն խորհրդային քաղաքացիներին՝ ճշտությամբ կատարելու վերոհիշյալ պարտականությունները: Այս գործում մենք ունենք միութենական և մեր հանրապետության Գերագույն Խորհուրդների ընտրությունների հարուստ փորձը, յերբ ընտրությունները վերածվել եյին համաժողովրդական տոնի՝ ամենա-

րեք ծածանվում էյին կարմիր դրոշակները, մեր աշխատավորությունը խնդության ու բերկրանքի մեջ էր, ժողովուրդը միահամուռ կերպով ձայն էր տալիս կոմունիստների և անկուսակցականների բլոկին:

Ընկե՛ր դեպուտատներ, մեր մեծագույն հաջողությունները զայրացնում են մեր թշնամիներին: Վերջին յերկու տարիների ընթացքում յապոնական սամուրայները և նրանց հրահրող ագրեսորները մեր սոցիալիստական հայրենիքի սահմանները խախտելու և մեր սրբազան հողը տրորելու մի շարք փորձեր կատարեցին. սակայն, ի պատասխան դրան, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի կողմից նրանք արժանի դաս ստացան:

Մեր փառապանծ Կարմիր Բանակը ցույց տվեց թշնամուն խորհրդային մարդու նվիրվածությունն ու հերոսությունը, խորհրդային զենքի ուժը:

Կեցցե՛ մեր անպարտելի Կարմիր Բանակը և նրա մեծ մարշալ ընկեր Վորոշիլովը:

Կեցցե՛ մեզ դեպի նորանոր հաղթանակներ առաջնորդող, կոմունիզմի հմուտ նավավար, ամբողջ աշխարհի աշխատավորության սիրելի մեծ Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Հովհաննիսյանին:

Գ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Ֆանտանի № 75 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, մեր կուսակցության և կառավարության ամենօրյա հոգատարությունը բանվոր դասակարգի, գյուղացիության և բոլոր աշխատավորության նկատմամբ, վորի շնորհիվ օր-օրի ամրապնդվում է մեր յերկիրը, բուռն կերպով աճում է մեր տնտեսությունը, գիտությունը, տեխնիկան, գեղարվեստը, կուլտուրան, այս ամենը լիակատար վստահություն է ստեղծել աշխատավորության լայն խավերի մեջ դեպի մեր կուսակցությունը:

Մեր կուսակցությունը, իր գոյության ընթացքում, գործով ապացուցեց, թե դեպի ո՛ւր պետք է տանել աշխատավոր մասսաներին՝ նրանց յերջանիկ կյանքի հասցնելու համար: Այդ իսկ պատճառով աշխատավոր լայն մասսաները հավատում են կուսակցությանը, գնում են կուսակցության հետևից. այդ իսկ պատճառով Ստալինյան Սահմանադրությամբ ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիների համար իրավունք է ապահովված միավորվելու, կազմելու կոմունիստական կուսակցության՝ պայքարելու հանուն լավագույն ապագայի և լիակատար կոմունիստական կարգերի հաստատման:



Ստալինյան Սահմանադրությունը նշում է, վոր աշխատավորներն ունեն միայն մեկ ճանապարհ—այդ՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակ տանող ճանապարհն է:

ԽՍՀՄ-ի և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրությունները փայլուն կերպով ցույց տվին վողջ աշխարհին մեր ժողովրդի համախմբվածությունը բոլշևիկյան կուսակցության, նրա ստալինյան Կենտրոնական կոմիտեյի և ընկեր Ստալինի շուրջը:

Ժողովրդի հետ բոլշևիկյան կուսակցության ունեցած անխորտակելի կապի փայլուն ցուցադրումը հանդիսացան Միության և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրությունները, վորոնք ավարտվեցին կոմունիստների և անկուսակցականների բլոկի փայլուն հաղթությամբ:

Կուսակցության XVIII համագումարում ընկեր Ստալինը խնդիր դրեց՝ մինչև վերջին իրականացնել յերկրի քաղաքական կյանքի դեմոկրատիզացիան, իսկ այդ նշանակում է՝ հոգատար լինել մասսաների նկատմամբ, ունկնդրել նրանց ձայնին, ծառայել նրանց:

Այդպես չէ դրությունը կապիտալիստական յերկրներում: Այնտեղ ամեն միջոց գործ են դնում ժողովրդական լայն մասսաներին հեռու պահելու պետության կառավարմանը մասնակցելուց և զրկում են կառավարման վրա վորևէ ազդեցություն ունենալու հնարավորությունից, վոտնահարելով աշխատավորության տարրական-քաղաքական իրավունքները: Ժամանակակից բոլոր «դեմոկրատական» և վոչ-դեմոկրատական բուրժուական պետություններում պետության կառավարումն իրականացվում է վոչ թե ժողովրդի կողմից ընտրված դեպուտատների միջոցով, այլ բուրժուական պետական ապարատի չինովնիկների միջոցով:

Ֆաշիստական պետություններում իշխանության տեղական մարմինները վերացված են: Իտալիայում իշխանության տեղական օրգաններին փոխարինում են վոստիկանապետներն ու կառավարության նշանակած կոմիսարները, իսկ ցարական Ռուսաստանում տեղական օրգաններն էյին կազմում ցարական կառավարության կողմից նշանակված նահանգապետները, քյոխվաները, ժանդարմերիան և այլն:

Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը միշտ էլ բուրժուական դեմոկրատիան համարել են անհետևողական, կիսատ, խաբեբա-

*թյուն ու կեղծավորություն: Լենինը, բնութագրելով բուրժուական բոլոր դեկլարացիաների նշանակությունը, մատնանշել է, վոր ինչ ձևերի տակ էլ թաքնված լինի հանրապետությունը, թեկուզ և ամենադեմոկրատական հանրապետությունը, բայց յեթե նա բուրժուական է, յեթե նրա մեջ պահպանվել է հողի, գործարանների ու ֆաբրիկաների մասնավոր սեփականությունը և մասնավոր կապիտալը, վարձու ստրկության ճիրաններում է պահում ամբողջ հասարակությունը, այսինքն՝ յեթե նրա մեջ չի կատարվում այն, ինչի մասին խոսում է մեր կուսակցության ծրագիրը և խորհրդային Սահմանադրությունը, ապա այդ պետությունը մի գործիք է, վորի միջոցով հասարակության մի դասակարգ շահագործում է մյուս դասակարգին:*

*Ընկեր Ստալինը, ամերիկյան ժուռնալիստ Ռոյ Հովարդի հետ ունեցած իր զրույցի ժամանակ, բացառիկ հստակությամբ բնորոշեց մեր հասարակության եյությունն ու բնույթը: Նա ասաց.*

> *«Յես դժվարանում եմ պատկերացնել, թե անձնական ինչպիսի «ազատություն» կարող է ունենալ այն գործազուրկը, վորը սոված ման է գալիս և իր աշխատանքի կիրառումը չի գտնում: Իսկական ազատություն կա միայն այնտեղ, վորտեղ վոչնչացված է շահագործումը, վորտեղ չկա մարդկանցից վոմանց ճնշելը մյուսների կողմից, վորտեղ չկա գործազրկություն և աղքատություն, վորտեղ մարդը չի դողում այն բանի համար, թե վաղը կարող է կորցնել աշխատանքը, բնակարանը, հացը: Միմիայն այդպիսի հասարակության մեջ հնարավոր է իսկական և վոչ թե թղթե, անձնական ու ամեն տեսակ ազատություն»:*

*Մեզ մոտ հաղթանակների հիմքում դրված է Լենինի—Ստալինի կուսակցության անխզելի կապը բանվոր դասակարգի, ամբողջ խորհրդային ժողովրդի բազմամիլիոն մասսաների հետ: Կոմունիզմի հոյակապ շենքը մեր յերկրում կառուցում է ամբողջ ժողովուրդը համախումբ: Այն հաղթական ուղին, վորն անցել է մեր հայրենիքը խորհրդային իշխանության գոյության տարիներին, ցույց է տալիս, վոր կոմունիզմի գաղափարը, Լենինի—Ստալինի կուսակցության ծրագիրը, դարձել է ամբողջ ժողովրդի հարազատ գործը: Վողջ աշխատավոր ժողովուրդն արիաբար պայքարում է հանուն կոմունիզմի անմահ գաղափարների իրականացման:*

*Խորհրդային Միության կառավարման տեղական որգանները*



*վոչ մի նմանություն չունեն ցարական Ռուսաստանի և կապիտալիստական բուրժուական այլ պետությունների տեղական որգանների հետ: Մեր տեղական որգանները հանդիսանում են պետական իշխանության որգաններ: Նրանք ղեկավարում են իրենց յենթակա մարմինների գործունեյությունը, տեղական տնտեսությունը և կուլտուրական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն և այլն:*

*Ընկե՛ր դեպուտատներ, առաջիկա ընտրությունների տարբերությունը նախորդ ընտրություններից այն է, վոր այս ընտրությունների ընթացքում կպահանջվի ավելի մեծ յեռանդ, կազմակերպական աշխատանքի ավելի լայն ծավալ, քան նախորդ ընտրություններին, քանի վոր մեկ որում ընտրվելու յեն անհամեմատ ավելի մեծ թվով դեպուտատներ:*

*Խնդիրն այն է, վոր ներկայումս ծավալվող նախընտրական աշխատանքի պրոցեսում քաղաքական ակտիվ աշխատանքի ներգրավենք նոր, միլիոնավոր աշխատավորների, մեծացնենք անկուսակցական ակտիվի բանակը, վորը յեռանդուն մասնակցում է կուսակցության քաղաքականությունն իրականացնելու համար մղվող պայքարին:*

*Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրություններն ունեն քաղաքական և պետական խոշոր նշանակություն:*

*Կուսակցական կազմակերպություններն ու տեղական խորհուրդներն այժմվանից պետք է ծավալեն բոլշևիկյան ագիտացիան, պետք է զբաղվեն տեղական խորհուրդների աշխատանքում նկատված բացերն ու թերությունները, խորհրդային դեմոկրատիայի աղավաղման փաստերը, բյուրոկրատական յերևույթները վերացնելու գործով:*

*Գյուղխորհուրդները, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի որգաններ, նոր թափ պետք է հաղորդեն իրենց աշխատանքներին, պետք է հանդիսանան Ստալինյան Սահմանադրության սկզբունքների լավագույն կենսագործողները, գյուղի կուլտուրական շինարարության, նրա բարեկարգման, քաղաքական, մասսայական աշխատանքների լավագույն որգանները:*

*Առաջիկա ընտրություններին աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդները կամրապնդվեն լավագույն, նվիրված մարդկանցով, վորոնք անշեղորեն պետք է կենսագործեն Ստալինյան Սահմանադրության սկզբունքները:*

*Լայնորեն ծավալելով բոլշևիկյան ագիտացիան, Լենինի—*

Ստալինի կուսակցության դրոշի տակ մենք պետք է ապահովենք լայն մասսաների քաղաքական ակտիվությունն ու արտադրական էնտուզիազմի նոր, ավելի բարձր վերելքն աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունները, կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկի հիման վրա, հաջողությամբ ավարտելու համար:

Կեցցե՛ կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկը:

Կեցցե՛ Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի անպարտելի դրոշը:

Կեցցե՛ մեր հաջողությունների կազմակերպիչ ու ոգեշնչող, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Սրանով Սեսիայի յերկրորդ նիստը փակվում է: Հայտարարում եմ ընդմիջում մինչև վաղը ժամը 10-ը:



# ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 2-ին)

ՆԱԽԱԳԱՀ: Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Սեսիայի նիստը հայտարարում եմ բացված:

Շարունակում ենք «Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության մասին» վիճաբանությունները: Խոսքը տրվում է դեպուտատ Մակարյանին:

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ (Սանդուխի № 101 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, մոտ ժամանակներս Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորները, ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդի հետ միասին, Ստալինյան Սահմանադրության հիման վրա, կատարելու յեն Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունները:

Սրանից մի տարի առաջ՝ 1938 թ. հունիսի 12-ին, աշխարհի ամենադեմոկրատիկ Սահմանադրության հիման վրա, Հայկական ԽՍՀ աշխատավորները, միացած կոմունիստների և անկուսակցականների հաղթական բլոկով, ընտրեցին հանրապետության գերագույն օրգանը՝ Հանրապետության Գերագույն Խորհուրդը:

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունները մի ավելորդ անգամ ապացուցեցին մեր յերկրի ազատագրված աշխատավորության համախմբվածությունը կոմունիստական կուսակցության շուրջը, աշխարհում ամենադեմոկրատական Սահմանադրությունն ստեղծող մեր հայր, ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը:

Պատմությունը դեռևս չի տեսել այնպիսի դեմոկրատական ընտրություն, ինչպիսին կատարվում է մեզ մոտ՝ սոցիալիստական հասարակության յերկրում:

Ընտրական կանոնադրության 60-րդ հոդվածում ասված է.

«Թեկնածուներ առաջադրելու իրավունքն իրականացնում են ինչպես աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների հանրապետական օրգանները, այնպես էլ նրանց շրջանային օրգանները, նմանապես և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ ձեռնարկություններում և հիմնարկություններում, կարմիր-բանակայիններինը՝ զորամասերում, ինչպես և գյուղացիների ընդհանուր ժողովները՝ կոլտնտեսություններում, խորհտնտեսությունների բանվորներինն ու ծառայողներինը՝ խորհտնտեսություններում»:

Այսպիսով, Հայկական ՍՍՀ տեղական օրգանների ընտրությունների կանոնադրության նախագիծը մեր երկրի աշխատավորության համար լիակատար իրավունք է ապահովում սեփական օրգանների համար ընտրելու և ընտրվելու գործում:

Սեսիային ի հաստատություն ներկայացված ընտրական կանոնադրության նախագիծն ամբողջովին բխում է Ստալինյան Սահմանադրության հիմունքներից, լիովին ապահովում է մեր երկրի աշխատավորության լրիվ մասնակցությունն աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությանը: Կանոնադրության նախագծի 1-ին հոդվածում ասված է՝ «Հայկական ՍՍՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի հիման վրա, աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների դեպուտատների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»:

Հակառակ բուրժուական երկրների սահմանադրության, Ստալինյան Սահմանադրության հիման վրա կատարվող ընտրությունները գույքային և կրթական ցենզ չեն սահմանում և ազգային խտրություն չեն դնում:

ՍՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայնի իրավունք և մասնակցում է քվեարկությանը բոլորի հետ հավասար իրավունքներով, ասված է կանոնադրության նախագծում: Համաձայն կանոնադրության նախագծի, Հայկական ՍՍՀ-ում շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների համար ընտրվելու յեն մոտավորապես 12 հազար դեպուտատ և պետության կառավարմանը մասնակից է դառնալու մի հսկա բանակ:

Ահա թե որն է խորհրդային ժողովրդի, Խորհրդային պետության ուժն ու հզորությունը, նրա անպարտելիությունը:



Ընկե՛ր դեպուտատներ, կապիտալիստական շրջապատման պայմաններում կոմունիստական հասարակության կառուցումը մեզանից պահանջում է է՛լ ավելի ամրացնել Խորհրդային պետության ուժն ու հզորությունը: Ընկեր Ստալինը, բնորոշելով Խորհրդային Միության ներքին դրությունը, ասաց, որ այժմ յերկրի ներսում մեր պետության հիմնական խնդիրն է՝ խաղաղ տնտեսական, կուլտուրական և դաստիարակչական աշխատանք կատարել. սրանից էլ բխում են խորհրդային տեղական օրգանների խնդիրները յերկրի սոցիալիստական շինարարության և մասսաներին կոմունիստական ոգով դաստիարակելու գործում:

Ստալինյան Սահմանադրության 97-րդ հոդվածը պարզ կերպով բնորոշում է խորհրդային տեղական օրգանների խնդիրները, այն է՝ պահպանել խորհրդային քաղաքացիների իրավունքները, ղեկավարել տեղական կուլտուրական ու տնտեսական աշխատանքը, ապահովել կառավարության որոշումների անշեղ կատարումը: Այստեղից էլ բխում է մեր պարտականությունը՝ լարված աշխատանք կատարել տեղական խորհրդային օրգանների ընտրության ժամանակ: Մեզ, դեպուտատներիս վրա մեծ պարտականություն է դրված՝ տեղամասերի համար շենքեր պատրաստելու, ընտրական կանոնադրությունը մասսայականացնելու գործում:

Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունները պետք է անցկացվեն տեղական խորհուրդների աշխատանքում յեղած բացերի ու թերությունների խիստ քննադատության և ինքնաքննադատության նշանաբանով: Յեղբայրական հանրապետություններում արդեն տեղի յեն ունենում շրջանային, քաղաքային և գյուղական խորհուրդների դեպուտատների հաշվետվությունները, իսկ մեզ մոտ այդ բացակայում է դեռ: Ովքեր ցանկանում են բոլշևիկյան քննադատությամբ անցկացնել տեղական խորհուրդների ընտրությունները, է՛լ ավելի բարձրացնել մասսաների քաղաքական ակտիվությունն ընտրությունների ժամանակ, այժմվանից պետք է կազմակերպեն դեպուտատների հաշվետվությունները ընտրողների առաջ:

Ընկե՛ր դեպուտատներ, ընտրությունների ժամանակ մենք յերբեք չպետք է մոռանանք, որ շրջապատված ենք կապիտալիստական յերկրներով, որ նրանք իրենց լրտեսները կուղարկեն մեր յերկիրը նաև ընտրությունների ժամանակ՝ իրենց քայքայիչ աշխատանքը կատարելու համար: Մեր տեղական կուսակցական,

խորհրդային կազմակերպությունները, մեր ամբողջ ժողովուրդը պետք է ե՛լ ավելի բարձրացնի իր հեղափոխական հարձակողական զգոնությունը՝ թշնամուն հայտաբերելու և ջախջախելու համար, ինչպիսի դիմակի տակ էլ թաքնված լինի նա:

Ընտրությունների ընթացքում մասսաների ակտիվությունը պետք է կապել մեր տնտեսական պլանների կատարման և գերակատարման հետ:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո բուրժուական տեսաբանները գտնում էին, որ բանվոր դասակարգը չի կարող յերկիրը կառավարել, պետությունը կառավարել: Իրականությունը ցույց տվեց միանգամայն հակառակ պատկեր: Բանվոր դասակարգը կարողացավ ոչ միայն յերկիր կառավարել, այլև յերկիրը հասցնել արվեստի, կուլտուրայի, տնտեսության զարգացման այնպիսի բարձունքների, որպիսիք չի տեսել ոչ մի կապիտալիստական յերկիր:

Խորհրդային տեղական օրգանների ընտրությունների ժամանակ պետք է վստահ կերպով առաջ քաշել պետական կառավարման օրգանների մեջ բանվորներին, կոլտնտեսականներին, ինտելիգենցիային, որոնք աճել և կոփվել են սոցիալիստական շինարարության մեջ: Մենք այդ հաջողությամբ կլուծենք, որովհետև մեր յերկրի աշխատավորությունն աճում և զարգանում է աշխարհիս ամենամեծ մարդու, մեր հաղթանակների կազմակերպիչ, ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինի ղեկավարությամբ: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Դանիելյանին:

Ա. Բ. ԴԱՆԻԵԼՅԱՆ (Աբովյանի № 31 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի հերթական Յերրորդ սեսիան ընդունում է Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը:

Առաջիկա ընտրությունները հանդիսանալու յեն հերթական քաղաքական կամպանիա, համաժողովրդական տոն, սոցիալիզմի մեծ հաղթանակների տոնը: Կապիտալիզմի յերկրներում ընտրական օրենքի ամբողջ ներքին իմաստն այն է, որ ժողովրդական լայն մասսաներին հետ պահեն պետական գործերին որևէ մասնակցություն ունենալուց: Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, սոցիալիզմի յերկրում, մեր՝ Ստալինյան, մինչև վերջը մարդասիրական Սահմանադրության յուրաքանչյուր կետը, յուրաքանչյուր հոդվածն ապահովում է ընտրությունների օրերին 18 տարին լրացրած



ամեն մի քաղաքացու մասնակցությունն իր պետական կառավարման բոլոր օրգանների ստեղծմանը: Խորհրդային քաղաքացին իր պետական կառավարման օրգաններն ստեղծում է ազատ, դեմոկրատական ընտրությունների միջոցով: Մեր յերկրում կոմունիզմի հոյակապ շենքը կառուցում է ամբողջ ժողովուրդը:

«Դեռ յերբեք աշխարհում չեն յեղել այդպիսի իսկական ազատ ու իսկական դեմոկրատիկ ընտրություններ, յերբեք,—ասում է ընկեր Ստալինը:—Պատմությունը մի ուրիշ այդպիսի օրինակ չգիտե: Բանն այն չէ, որ մեզանում ընտրությունները կլինեն ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի, թեև այդ բանն ինքնին մեծ նշանակություն ունի: Բանն այն է, որ մեզանում ընդհանուր ընտրությունները կանցկացվեն որպես առավել ազատ և առավել դեմոկրատիկ ընտրություններ՝ աշխարհի որևէ այլ յերկրի ընտրությունների համեմատությամբ»:

Ընկեր Ստալինի այդ խոսքերը, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ ուրախալի փաստ դարձան, յերբ ամբողջ ժողովուրդը փայլուն կերպով ցուցադրեց իր անխորտակելի կապը կոմունիստական կուսակցության հետ, իր անսահման վստահությունը դեպի կոմունիստների և անկուսակցականների բլոկը Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ —այդ քաղաքական խոշոր հաղթանակ է:

Ընկե՛ր դեպուտատներ, տեղական խորհուրդների հերթական ընտրությունները նույնքան խոշոր նշանակություն ունեն մեր ամբողջ կյանքի համար: Տեղական խորհուրդները պետական իշխանության առաջին օղակն են, որի հետ առաջին հերթին շփվում են աշխատավորները: Ահա թե ինչու անհրաժեշտ է, որպեսզի աշխատավորների տեղական խորհուրդների ընտրությունների օրենքը ծանոթ լինի բոլոր աշխատավորներին, դառնա ամբողջ ժողովրդի սեփականությունը:

Առաջիկայում բացատրական հսկայական աշխատանք պետք է կատարենք մասսայի մեջ՝ սկսած կոլեկտիվներից, որոնց հետ մեզանից յուրաքանչյուրը կապված է: Պետք է մոբիլիզացիայի յենթարկել բոլոր ուժերը՝ այդ բացատրական աշխատանքների հաջող անցկացման և առավելագույն արդյունքների հասնելու համար:

Հիշելով Լենինի պատգամները՝ կուսակցության և խորհրդային իշխանության շուրջը համախմբել բազմամիլիոն անկուսակցական ժողովրդական մասսաներին, մեր ժողովուրդն առաջիկա

ընտրությունները կդնա ինչպես հերթական հաղթանակի: Հերթական կամպանիան պիտի ընթանա ավելի կազմակերպված, ավելի համախմբված, ավելի փայլուն, վորովհետև մենք արդեն ունենք Գերագույն Խորհուրդների փայլուն կերպով անցկացված յերկու ընտրությունների փորձը, ունենք կուսակցության XVIII համագումարի վորոշումները:

Կասկածից վեր է, վոր առաջիկա ընտրություններին ամբողջ խորհրդային ժողովուրդը կքվեարկի կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկի օգտին և դրանով իսկ մի անգամ ևս կցուցադրի իր արտակարգ քաղաքական-բարոյական ուժը, իր համախմբվածությունը Լենինի—Ստալինի կուսակցության շուրջը և իր անսահման սերը՝ դեպի նոր, լուսավոր կյանք ստեղծողը, դեպի իր բարեկամը, դեպի ընկեր Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Իսրայելյանին:

Ս. Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ (Մերձքաղաքային № 41 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության XVIII համագումարը տվեց ԽՍՀՄ սոցիալիզմի հաղթանակի փայլուն հանրագումարը, նշեց անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և աստիճանաբար սոցիալիզմից կոմունիզմին անցնելու հոյակապ ծրագիրը:

Այդ վիթխարի ծրագրի իրականացման համար ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում տված իր պատմական զեկուցման մեջ ընկեր Ստալինը հանճարեղ կերպով զարգացրեց Մարքսի—Էնգելսի—Լենինի թեորիան պետության մասին և բացառիկ խորությամբ ու պարզությամբ բնորոշեց սոցիալիստական պետության հետագա ամրացման ու զարգացման խնդիրները:

Լուծել այդ խնդիրը—նշանակում է ե՛լ ավելի ամրացնել բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության ուժն ու հզորությունը; ամրացնել աշխատավորների դեպուտատների քաղաքի ու գյուղի խորհուրդների իշխանությունը:

ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի մայիսյան պլենումը վորոշեց այս տարի կատարել աշխատավորության դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունները:

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից Գերագույն Խորհրդի այս Սեսիայի քննությանն ու հաստատությանը ներկայացված ընտրությունների կանոնադրության նախագիծը բղխում է Ստալինյան Սահմանադրության հիմնական սկզբունքներից:



Ընկե՛ր դեպուտատներ, աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը քաղաքական ահագին նշանակություն ունեցող փաստաթուղթ է, այդ իսկ պատճառով յես կարծում եմ, վոր արտահայտած կլինեմ բոլոր դեպուտատների կարծիքը, յեթե ասեմ, վոր ընտրությունների կանոնադրության ներկայացված նախագիծը պետք է ամբողջովին հաստատվի Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Սեսիայի կողմից:

Քաղաքային, շրջանային և գյուղական կազմակերպությունների պատվավոր պարտականությունն է՝ բոլշևիկորեն նախապատրաստել ու անցկացնել առաջիկա ընտրությունները:

ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրություններից մեծ փորձ ունենալով, խորհրդային ու կուսակցական տեղական կազմակերպությունները պետք է լարեն իրենց բոլոր ուժերը, վորպեսզի աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրություններն անցնեն ե՛լ ավելի կազմակերպված կերպով:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների առաջիկա ընտրություններն ե՛լ ավելի կբարձրացնեն աշխատավոր մասսաների ակտիվությունն ստալինյան յերրորդ հնգամյակի պլանի կատարման համար մղվող պայքարում:

Ընդսմին պետք է նկատի ունենալ, վոր աշխատավորների դեպուտատների խորհուրդների տեղական ընտրություններն ավելի բարդ են, քան նախորդ ընտրությունները: Կազմակերպական աշխատանքների ծավալը շատ ավելի լայն կլինի, քան առաջ:

Առաջիկա ընտրություններին պետք է ամբողջությամբ օգտագործել այն նոր, տասնյակ-հազարավոր մարդկանց՝ կուսակցական և վոչ-կուսակցական բոլշևիկներին, վորոնք ընտրական կամպանիայի պրոցեսում առաջ են քաշվել ու ակտիվորեն մասնակցել են վորպես ընտրական հանձնաժողովի անդամներ, ագիտատորներ, վստահելի անձեր:

Ընտրությունների կանոնադրությունը հաստատվելուց հետո մենք անմիջապես պետք է սկսենք մի մեծ աշխատանք, վորովհետև տեղական խորհուրդների ընտրությունների հաջողությունը կախված է նախընտրական աշխատանքը ճշտությամբ անցկացնե-

կուց—ընտրական օկրուգներ, տեղամասեր ստեղծել, ընտրական հանձնաժողովներ ընտրել, շենքեր պատրաստել:

Լենինականը պետք է ընտրի մոտավորապես 194 դեպուտատ: Այդ կապակցությամբ ավելանում են օկրուգները, ընտրական հանձնաժողովներն ու նրանց անդամների թիվը:

Ընտրությունների ժամանակ ուշադրության կենտրոնը ընտրական տեղամասերն են:

Ագիտ-մասսայական աշխատանքի գծով անհրաժեշտ է առանձնացնել ագիտատորներ, կազմակերպել սեմինարներ, ագիտացիոն կետեր: Բայց դրանք դեռ առաջին քայլերն են: Աշխատանքը պետք է այնպես կատարել, որ մեր խորհրդում չանցնի ոչ մի թշնամի, ոչ մի խաբեբա, յերկերեսանի:

Աշխատանքը մենք պետք է կազմակերպենք այնպես, որ մեր խորհուրդներում ընտրվեն ամենալավագույն, ամենաառաջավոր մարդիկ:

Ընկեր Ստալինը և կուսակցությունը մեզ սովորեցնում են, որ բանը ոչ միայն այն է, որ լավ որոշումներ ընդունենք, դա միայն գործի սկիզբն է, գործի հաջողությունը կախված է կազմակերպական և քաղաքական աշխատանքից:

Աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրություններն է՛լ ավելի կամրապնդեն խորհուրդները, կամրապնդեն մասսաների հետ նրանց ունեցած կապը, կբարձրացնեն նրանց դերը կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում: Խորհուրդների ընտրությունների կապակցությամբ մենք պետք է բարձրացնենք քաղաքային և շրջանային խորհուրդների աշխատանքը, բարելավենք սեկցիաների աշխատանքը և այլն:

Մեզ մոտ, Լենինականում ձեռնարկությունների, հիմնարկների բանվորների ու ծառայողների ժողովներում և բնակչության մեջ պետք է անցկացվեն դեպուտատների հաշվետվություններ և քաղխորհրդի բաժնի վարիչների հաշվետվություններ: Սեսիայի որոշումները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն կուսակցական, խորհրդային, պրոֆմիութենական և հասարակական բոլոր կազմակերպություններին: Մեր, դեպուտատներիս առաջ խնդիր է դրված՝ բնակչության մեջ ընտրությունների կանոնադրության շուրջը բացատրական լայն աշխատանք ծավալել այնպես, որ այդ կանոնադրությունը հասցնենք յուրաքանչյուր աշխատավորի գիտակցությանը: Լիովին վստահ ենք, որ խորհրդային ժողովուրդը, մեր հանրապետության աշխատավորները, միահամուռ կերպով կընդունեն ու հավանություն կտան



ընտրությունների կանոնադրությանը և ամեն ինչ կանեն, որպեսզի այդ կանոնադրությունը կենսագործվի:

Աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունները մեզ համար քաղաքական լուրջ քննություն կլինեն. լուրջ ստուգումն այն բանի, թե մենք ինչպես ենք կարողանում բնակչության մեջ կազմակերպական և քաղաքական աշխատանք տանել: Այդ քննությունը մենք պիտի բռնե՛նք ու կբռնե՛նք պատվով:

Ընկե՛ր դեպուտատներ, ընտրությունների նախապատրաստման խոշոր աշխատանքը պետք է զուգորդվի կուսակցության ու կառավարության բոլոր տնտեսա-քաղաքական ձեռնարկումների հաջող կատարման հետ:

Հայաստանի աշխատավորները, խորհրդային ամբողջ ժողովրդի հետ միասին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրության օրերին ցույց տվին բանվոր դասակարգի, գյուղացիության և ինտելիգենցիայի բարոյական-քաղաքական միասնությունը: Ընտրությունների օրերը մտան պատմության մեջ որպես լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության փառավոր հաղթանակի օրեր:

Հայ ժողովուրդն անհուն սիրով ու վոգևորությամբ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի առաջին դեպուտատ ընտրեց ամբողջ աշխարհի աշխատավորների առաջնորդ մեծ Ստալինին:

Աշխատավորների դեպուտատների խորհուրդների առաջիկա ընտրություններն է՛լ ավելի մեծ ուժով ամբողջ աշխարհի առաջ կցուցադրեն բազմամիլիոն խորհրդային ժողովրդի համախմբվածությունը Լենինի—Ստալինի մեծ, անպարտելի դրոշի շուրջը: Այս ընտրությունները մեր մեծ ժողովրդին է՛լ ավելի ամուր կերպով կհամախմբեն խորհրդային իշխանության և բոլշևիկյան կուսակցության շուրջը, աշխատավոր մարդկության սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: *Խոսքը տրվում է դեպուտատ Բայրամովին:*

ԲԱՅՐԱՄՈՎ ԿԱԶԱՑ ՆԻԱՍ ԿՈՒԼԻ ՈՂԼԻ (*Ջուլֆ № 60 օկրուգ*): Ընկե՛ր դեպուտատներ, համաձայն Հայկական ԽՍՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի, աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների համար դեպուտատներն ընտրվում են ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության հիման վրա:

Համաձայն Հայկական ԽՍՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի, դեպուտատների ընտրություններն ընդհանուր են: Բացի

խելագարներից և դատարանի վճռով ընտրական իրավունքից զրկվածներից, 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները, անկախ ցեղից, ազգությունից, դավանանքից, կրթական ցենզից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից—իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին, ինչպես նաև ընտրվելու:

Դրա համար անհրաժեշտ է ընտրողների մեջ ծավալել մասսայական-պրոպագանդիստական աշխատանք:

Մինչև տեղական խորհուրդների ընտրությունների սկսվելը անհրաժեշտ է ընտրական տեղամասեր կազմակերպել և ապահովել դրանք անհրաժեշտ հարմարություններով:

Ստալինյան Սահմանադրությունից բխող ընտրությունների կանոնադրության նախագիծն արտահայտում է կոլտնտեսային մասսաների կամքը: Ներկա ընտրությունները խթան կհանդիսանան, վորպեսզի կոլտնտեսություններն ավելի ևս ամրանան և հարյուրավոր կոլտնտեսականներ առաջ քաշվեն:

Մեր կոլտնտեսական մասսաները, Լենինի—Ստալինի կուսակցության և ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ, բանվոր դասակարգի հետ միասին, ակտիվ կերպով մասնակցում են սոցիալիզմի կառուցման գործին: Դրա կենդանի ապացույցը ԽՍՀՄ և ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրություններն են:

Մեր, Ազիզբեկովի շրջանի աշխատավոր մասսաները ինչպես ԽՍՀՄ և ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրությունների շըրջանում, այնպես էլ աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրություններին ակտիվ կերպով կմասնակցեն և այդ աշխատանքը կավարտեն ստալինաբար:

Ընկե՛ր դեպուտատներ, յես առաջարկում եմ ընդունել Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը, վորը ներկայացված է մեր Սեսիային ի հաստատություն: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Գուսարովին:

Ի. Ա. ԳՈՒՍԱՐՈՎ (Ղանլիջայի № 126 օկրուգ): Ընկե՛ր դեպուտատներ, Խորհուրդների VIII արտակարգ համագումարում Սահմանադրության նախագծի մասին ընկեր Ստալինի պատմական զեկուցման պահից յերկրում տեղի յեն ունեցել տընտեսական ու քաղաքական խոշոր փոփոխություններ:



Մեր գյուղատնտեսությունը, մեր արդյունաբերությունը խոշոր չափով աճել են:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրությունները ցույց տվին խորհրդային ժողովրդի բարոյական-քաղաքական միասնության աճումը: Միայն հաղթանակած սոցիալիզմի յերկրում, միայն այն յերկրում, վորտեղ չկա մարդու շահագործում մարդու ձեռքով, վորտեղ չկա գործազրկություն, վորտեղ բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան միացած են միանական ձգտումներով, միասնական ցանկություններով, մի յերկրում, վորտեղ հաղթանակից հաղթանակ է առաջնորդում մեծ Ստալինը, միայն այդպիսի յերկրում են հնարավոր իսկական դեմոկրատական համաժողովրդական ընտրությունները:

Ընկե՛ր դեպուտատներ, Սեսիայի կողմից քննվող՝ Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը ներկայացնում է իսկական համաժողովըրդական, սոցիալիստական դեմոկրատիզմի հետագա ծաղկումը: Դրա փայլուն ապացույցն է կանոնադրության 2-րդ հոդվածը, վորտեղ ասված է, վոր Հայկական ԽՍՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրություններն ընդհանուր են, Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասսայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթության ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու աշխատավորների դեպուտատների խորհուրդներում, բացի խելագարներից, և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով:

Շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների առաջիկա ընտրությունները կլինեն Ստալինյան Սահմանադրության հիման վրա պետական իշխանության մեր բոլոր օրգանների վերակառուցման յեզրափակիչ ետապը. դա բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի իսկական համաժողովրդական տոնն է:

Առաջիկա ընտրությունների նախապատրաստումն ու անցկացումը մեզանից կպահանջի ընտրողների մեջ, մասնավորապես սահմանամերձ զոնայում, տանել ավելի լայն բացատրական աշ-

խատանք, քան Գերագույն Խորհուրդների անցյալ ընտրությունների։ Իսկ այդ նշանակում է ագիտատորների կոլեկտիվի ընտրության ու պատրաստման մի ծանր աշխատանք, վորը մենք պիտի պատվով կատարենք։

Ընկե՛ր դեպուտատներ, մենք, կուսակցության կամքով, կարգված ենք անծայրածիր սոցիալիստական հայրենիքի կարմիր սահմանների պաշտպան։ Այդ պատվավոր պահպանությունը մենք պատվով ենք կատարում։

Մենք, սահմանապահներս, ամբողջ հայ ժողովրդի հետ միասին, ակտիվ կերպով կմասնակցենք աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրություններին։

Այժմվանից արդեն մեր ագիտատորները կարմիր-բանակայինների և սահմանամերձ գյուղերի բնակչության մեջ բացատրական մեծ աշխատանք են կատարում առաջիկա ընտրությունների շուրջը։

Տեղական խորհուրդների առաջիկա ընտրությունները նոր վերելք կառաջացնեն խորհրդային ժողովրդի մեջ, հարյուր-հազարավոր աշխատավորներ կներգրավվեն պետական ակտիվ աշխատանքի, ասպարեզ կհանեն Լենինի—Ստալինի տիպի հազարավոր նոր պետական հիանալի գործիչներ։

Ընկե՛ր դեպուտատներ, մեր յերկիրը միաձույլ է և ուժեղ, այդ է վկայում մեր հաղթանակը դիվանագիտական ֆրոնտում, վորը արտահայտվեց Գերմանիայի հետ չհարձակվելու պայմանագիր կնքելով. բայց այդ բանը մեզ չպիտի հանգստացնի, մենք պիտի պատրաստ լինենք ամեն մի րոպե հետ մղելու թշնամուն. ջարդենք նրան իր սեփական տերիտորիայում, ջարդենք այնպես, ինչպես ջարդեցինք Խասանի մոտ և ասացինք՝ «Խասանի մոտ ջարդեցինք ձեր կողերը, ջարդեցինք, ջարդեցինք և ասացինք՝ դեհ առայժմս»։

Պատմությունը ցույց է տալիս, վոր հայ ժողովուրդն իր անկախության համար հաճախ է պայքարել ոտարերկրյա արշավանքների դեմ և այդ պայքարում հաղթող է դուրս յեկել։ Այդ յեղել է հեռավոր պատմական անցյալում։

Այժմ էլ, յերբ կուսակցությունը պահանջի, յերբ ընկեր Ստալինը պահանջի, մենք, սահմանապահներս, ամբողջ ժողովրդի հետ, հայ ժողովրդի հետ միասին, ջախջախիչ հարված կհասցնենք չափ ու սահմանն անցած թշնամուն, վորտեղից էլ վոր նա յերևան գա։

Կեցցե՛ Ստալինյան Սահմանադրությունը։



Կեցցե՛ Առաջին դեպուտատ, համաշխարհային պրոլետարիատի ղեկավար մեծ Ստալինը։ (Ծափահարություններ)։

ՆԱԽԱԳԱՀ։ Խոսքը տրվում է դեպուտատ Մովսիսյանին։

Ա. Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆ (Ղափանի № 180 ոկրուգ)։ Ընկե՛ր դեպուտատներ, պատմական խոշոր հաղթանակների շարքում, վորպիսիք մեր սոցիալիստական յերկիրը, խորհրդային ժողովուրդը ձեռք է բերել Լենինի—Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ, ամբողջ առաջադեմ մարդկության հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ, Ստալինյան Սահմանադրությունն անշուշտ համաշխարհային պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ է։

Մեր Սահմանադրության մեջ, ինչպես հայելու մեջ, արտացոլված են և որենսդրական կարգով ամրապնդված են այն բոլոր նվաճումները, վորոնք ձեռք ենք բերել մենք ինչպես սոցիալիստական արդյունաբերության, գյուղատնտեսության ու կուլտուրայի ասպարեզներում, նույնպես և պետական ապարատի ամրապնդման ու խորհրդային դեմոկրատիայի ընդարձակման ասպարեզներում, վորն արտահայտվեց մեր յերկրում ընտրական նոր սիստեմի ստեղծմամբ։

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության 135-րդ հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրություններն ընդհանուր են. Խորհրդային Միության բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասսայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեյությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու աշխատավորների դեպուտատների խորհուրդներում, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով։

Մարդկության զարգացման պատմությունը նման ընտրական սիստեմ չգիտե։ Նման ընտրական սիստեմ գոյություն չի ունեցել և գոյություն ունենալ չի կարող վոչ մի կապիտալիստական յերկրում, վորտեղ դեմոկրատիան ծառայում է մի խումբ կապիտալիստ-շահագործողներին, վորտեղ աշխատավոր բնակչության լայն մասսաները զուրկ են մարդկային, նույնիսկ ամենատարրական, իրավունքներից։ Այդպիսի սիստեմ կարող էր նվաճվել միայն կապիտալիստական հասարակակարգի ջախջախման և անդասակարգ սոցիալիստական հասարակության հաջող կառուցման

հետևանքով մեր յերկրում, վորտեղ բոլոր ազգությունների բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի, կանանց և կարմիր—բանակայինների ամենալայն մասսաները հավասար իրավունքներով մասնակցում են յերկրի քաղաքական ու տնտեսական կյանքին:

Այդ հաջողությունները խորհրդային ժողովուրդը ձեռք ե բերել շնորհիվ իր համախմբվածությանը մեր կուսակցության, նրա Կենտրոնական կոմիտեյի և սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը: Այդ հաջողությունները մենք ձեռք ենք բերել մեր յերկրում յերջանիկ և ուրախ կյանք ստեղծելու համար, ամեն տեսակ հակահեղափոխական տարրերի դեմ հաջող պայքար մղելով:

Ընկե՛ր դեպուտատներ, Յերրորդ սեսիայի կողմից այսոր քննարկվող՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը, վորն առաջարկված ե Որենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից և կազմված ե Հայկական ԽՍՀ Սահմանադրության հիման վրա,—հանդիսանում ե խորհրդային դեմոկրատիայի ե՛լ ավելի ընդարձակման և մեր յերկրի քաղաքական ու տնտեսական հզորության ե՛լ ավելի ամրապնդման փաստը․ ուստի, ամբողջովին միանալով նախորդ դեպուտատների կարծիքին, առաջարկում եմ հաստատել Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների առաջադրված կանոնադրության նախագիծը:

ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների նախորդ ընտրությունները հաջող անցկացնելով՝ խորհրդային ընտրողները, կոմունիստների և անկուսակցականների բլոկով, ամբողջ աշխարհին ցույց տվին իրենց նվիրվածությունը մեր մեծ կուսակցությանը, իրենց նվիրվածությունն ու անսահման սերը հարազատ Ստալինին: Ընտրությունների ընթացքում կուսակցական և հասարակական կազմակերպությունները ցույց տվին ագիտացիոն և կազմակերպական աշխատանքի բոլշևիկյան վոճի որինակներ: Սակայն այդ հաջողությունները և այդ աշխատանքում ձեռք բերված փորձը վոչ մի դեպքում մեզ չպետք ե հանգստացնի: Առաջիկա ընտրությունները կուսակցական և հասարակական բոլոր կազմակերպություններից և առաջին հերթին մեզնից՝ դե-



պուտատներից, պահանջում են վոչ միայն ե՛լ ավելի մեծ ուշադրություն դարձնել, ե՛լ ավելի ուժեղացնել ագիտացիոն և կազմակերպական տեխնիկական աշխատանքը, այլև աշխատավորների դեպուտատների խորհուրդների համար առաջադրել ամենանվիրված և ընդունակ ընկերներ, վորոնք կարողանան հաջողությամբ կատարել կուսակցության և կառավարության բոլոր դիրեկտիվները: Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդները հանդիսանում են պետական կառավարման այնպիսի որգաններ, վորոնք իրենց պրակտիկ աշխատանքում անմիջաբար կապված են ընտրողների և ամբողջ բնակչության հետ, ուստի և անհրաժեշտ ե, վոր խորհուրդների դեպուտատներն ավելի շատ զբաղվեն աշխատավորների համար վճռական նշանակություն ունեցող՝ բնակչության կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու, առողջապահության, կոմունալ, լուսավորության և այլ հարցերով:

ՀամԿ(բ)Կ XVIII պատմական համագումարը, քննարկելով ժողովրդական տնտեսության Ստալինյան յերրորդ հնգամյակի պլանը, վորպես մեր արդյունաբերության հիմնական խնդիրներից մեկը, մեր առաջ հարց դրեց հասցնել պղնձի ձուլումն այնպիսի չափի, վոր լիովին բավարարվեն ժողովրդական տնտեսության և յերկրի պաշտպանության աճող կարիքները: Այս պատվավոր և պատասխանատու խնդիրը Ղափանի շրջանի դեպուտատներին, կուսակցական և հասարակական կազմակերպություններին ե՛լ ավելի յե պարտավորեցնում ավելի յեռանդուն կերպով զբաղվելու առաջիկա ընտրությունների նախապատրաստությամբ, ե՛լ ավելի կազմակերպված ու համախմբված անցկացնել ընտրությունները, սիստեմատիկաբար ոգնություն ցույց տալով նոր ընտրված դեպուտատներին նրանց պրակտիկ աշխատանքում, կազմակերպել պղնձի արդյունաբերության աշխատանքը, նպատակ դնելով ե՛լ ավելի բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, կատարել և գերակատարել արտադրական ծրագրերը, ծավալել ստախանովյան շարժումը, դրանով իսկ ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ կուսակցության XVIII համագումարի և անձամբ ընկեր Ստալինի կողմից դրված խնդիրները լիովին իրագործելու համար: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: *Խոսքը տրվում ե դեպուտատ Մանուկյանին:*

Գ. Թ. ՄԱՆՈՒԿՅԱՆ (*Սարիատի* № 184 *ոկրուգ*): Ընկե՛ր դեպուտատներ, այսոր մեր Սեսիային ի քննություն ե ներկայացված շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային

*խորհուրդների ընտրությունների կանոնադրության նախագիծը: Կանոնադրության մեջ ամփոփված են մեր փառապանծ յերկրի յերջանիկ մարդկանց իրավունքները՝ խորհուրդների ընտրության գործում: Կապիտալիստական վոչ մի յերկիր չի տեսել ու չի տեսնի այս տեսակ մասսայական դեմոկրատական ընտրություններ: Մեր յերկիրը, իր բազմամիլիոն ժողովրդով, քննություն բռնեց միութենական և հանրապետական Գերագույն Խորհուրդների ընտրությունների ժամանակ և նա գիտե գնահատել ու ճանաչել բանվոր դասակարգի գործին նվիրված մարդկանց, վորոնք պետք է ազնվորեն ծառայեն ժողովրդին:*

*Ագիտացիայի մեծ նշանակությունը մեր առաջ խնդիր է դնում՝ այժմվանից իսկ տեղերում վերակառուցել ագիտ-կոլեկտիվների աշխատանքը, ներգրավել նոր ագիտատորներ, նրանց հետ նախապատրաստել վստահելի անձեր՝ ոկրուգային ու տեղամասային հանձնաժողովների համար:*

*Բոլոր միջոցները պետք է գործադրել՝ կարճ ժամանակամիջոցում անգրագիտությունը վերացնելու համար, նպատակ դնելով քվեատուփերի մոտ գնալ վորպես գրագետ:*

*Պետք է ասել, վոր շրջանային ու հանրապետական մամուլը բավարար չի աշխատում և բավականաչափ ուշադրություն չի նվիրում ընտրությունների նախապատրաստման աշխատանքին, մինչդեռ նրա ոգնությունը տեղերում չափազանց կարևոր է:*

*Ընկե՛ր դեպուտատներ, մեր ագիտացիայի գործը մենք պետք է այնպես կազմակերպենք, վոր ե՛լ ավելի ծավալվի սոցիալիստական մրցակցությունն ու ստախանովյան շարժումը և ապահովվի կուսակցության ու կառավարության վորոշումների անշեղ կենսագործումը:*

*Ահա մեր առաջ կանգնած հիմնական խնդիրները: Համոզված ենք, վոր այս բոլորը մենք կկատարենք անշեղ կերպով:*

*Կոմունիստների ու անկուսակցականների բլոկը, ինչպես նախորդ ընտրությունների ժամանակ, դուրս կգա հաղթանակով, վորովհետև այդ բլոկը ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը, նրա հմուտ նավավար մեծ Ստալինը:* (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: *Խոսքը տրվում է Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Հովսեփյանին:*

Լ. Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ (*Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ*): *Ընկե՛ր դեպուտատներ, հեռագրական գործակալության յերեկ ստացված տեղեկությունների*



*համաձայն, միջազգային դրությունը վոչ թե դեպի լավն է գնում, ընդհակառակը՝ ավելի յե բարդանում և այդ կապակցությամբ մի շարք կապիտալիստական յերկրների միջև գոյություն ունեցող հակասությունները ավելի յեն սրվում:*

*Ընկերնե՛ր, յեթե պատմական մի փոքրիկ ակնարկ գցենք վերջին տարիներս տեղի ունեցած իրադարձությունների վրա, կտեսնենք, վոր իմպերիալիստական առաջին պատերազմից հետո կապիտալիստական յերկրները բաժանվեցին յերկու խմբի՝ հաղթողների—ի դեմս Անգլիայի ու Ֆրանսիայի, և հաղթվածների—ի դեմս Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի: Հաղթված յերկրները այժմ իրենց առաջ խնդիր են դնում վերաբաժանել աշխարհը. մասնավորապես Գերմանիան, վորի վզին եր փաթաթած Վերսալի դաշնագիրը, այժմ վորպես հաղթված յերկիր, իր առաջ խնդիր է դնում՝ վերականգնել Վերսալի պայմանագրով իր կորցրած արտոնությունները:*

*Իտալիայի ագրեսիան* 1936 *թվին Հաբեշստանի նկատմամբ, Յապոնիայի իմպերիալիստական քաղաքականությունը Մանջուրիայի նկատմամբ, Յապոնիայի վերջին յերկու տարիների ընթացքում Չինաստանի նկատմամբ վարած միլիտարիստական քաղաքականությունը ցույց են տալիս, վոր միջազգային դրությունը գտնվում է ավելի լարված վիճակում: Այս բարդ, խճճված դրության մեջ Խորհրդային Միությունը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կանգնած է խաղաղության քաղաքականության պահպանման հողի վրա:*

*Խորհրդային մեծ յերկիրը մի անսպառ հզոր ուժ է ներկայացնում խաղաղության համար մղվող պայքարում: Իր այդ ուժը Խորհրդային Միությունն անշեղորեն ուղղում է ժողովուրդների միջև խաղաղությունը հաստատելու նպատակին:*

*ԽՍՀՄ-ն մինչև հիմա վարել է, վարում է և վարելու յե բոլոր յերկրների միջև խաղաղությունն ու բարեկամությունը ամրապնդելու քաղաքականություն, վորը համապատասխանում է Լենինի—Ստալինի կուսակցության սկզբունքներին:*

*Ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ* XVIII *համագումարում այսպես ձևակերպեց խաղաղության խորհրդային արտաքին քաղաքականության խնդիրները. «Մենք կողմնակից ենք խաղաղության և գործարար կապերի ամրապնդման բոլոր յերկրների հետ, մենք կանգնած ենք և կանգնած կլինենք այդ դիրքի վրա, քանի այդ յերկրները նույնպիսի հարաբերություններ կպահպանեն Խորհրդ-*

դային Միության հետ, քանի նրանք չեն փորձի խախտել մեր յերկրի շահերը»:

Ընկեր Ստալինի այդ պատմական ցուցումների համաձայն, ԽՍՀՄ-ն ապրիլ ամսից սկսած բանակցություններ եր վարում Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների հետ՝ փոխադարձ ոգնության պայմանագիր կնքելու շուրջը: Բայց փաստերը ցույց տվին, վոր Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարություններն այդ բանակցությունները վարում են ձևականորեն, ցանկանում են վիժեցնել այն և պատերազմի ներքաշել Խորհրդային Միությանը:

Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների այդ յերկերեսանի քաղաքականությունն այն ե, վոր նրանք մի կողմից բանակցություններ եյին վարում ԽՍՀՄ-ի հետ փոխադարձ ոգնության պայմանագիր կնքելու շուրջը, իսկ մյուս կողմից Խորհրդային Միություն եյին ուղարկում յերկրորդական ու յերրորդական անձնավորություններ, վորոնք չեյին լիազորված իրենց կառավարությունների կողմից վորևե պայմանագիր կնքելու համար:

Մոսկվայում, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների զինվորական միսիաների հետ տեղի ունեցած վերջին բանակցությունների ընթացքում, ընկեր Վորոշիլովը հայտարարեց, վոր Խորհրդային Միությունը պատրաստ ե իր զորքերն ուղարկել Լեհաստան, ագրեսորների դեմ կռվելու համար: Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների թելադրանքով Լեհաստանը հայտարարեց, թե նա Խորհրդային Միության ոգնության կարիք չի զգում և յերբեք թույլ չի տա Կարմիր Բանակին Լեհաստան մտնել: Ահա այն քաղաքականությունը, վորը վարում են Անգլիայի և Ֆրանսիայի իշխող շրջանները:

Ընկե՛ր դեպուտատներ, նկատի ունենալով, վոր մի կողմից Անգլիայի ու Ֆրանսիայի և մյուս կողմից ԽՍՀՄ-ի միջև փոխադարձ ոգնության պայմանագիր կնքելը ձախողվեց, Խորհրդային Միությունը, վորը վարում ե խաղաղասիրական քաղաքականություն, յելնելով մեր յերկրի 170 միլիոն ժողովրդի կամքից ու մեր պետության շահերից, ս/թ. ոգոստոսի 23-ին Գերմանիայի կառավարության հետ ստորագրեց չհարձակվելու պայմանագիր:

Այժմ անհրաժեշտ եմ համարում յերկու խոսքով կանգ առնել այն փոխադարձ հարաբերությունների վրա, վորոնք առաջացան Խորհրդային Միության և Գերմանիայի միջև:

Ընկեր Մոլոտովը այս տարվա ոգոստոսի 31-ին ԽՍՀՄ Գե-



րագույն Խորհրդի Արտակարգ սեսիայում իր տված զեկուցման մեջ, կանգ առնելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքված չհարձակվելու պայմանագրի միջազգային նշանակության վրա, նշեց հետևյալը.

«Չհարձակվելու խորհրդային-գերմանական պայմանագրի գլխավոր նշանակությունն այն ե, վոր Յեվրոպայի յերկու ամենամեծ պետություններ համաձայնության են յեկել, վորպեսզի վերջ դնեն իրենց միջև յեղած թշնամությանը, վերացնեն պատերազմի սպառնալիքը և միմյանց հետ խաղաղ ապրեն: Դրանով իսկ Յեվրոպայում հնարավոր ռազմական ընդհարումների դաշտը նեղվում ե: Յեթե նույնիսկ չհաջողվի խուսափել ռազմական ընդհարումներից Յեվրոպայում, ապա այդ պատերազմական գործողությունների մասշտաբն այժմ կսահմանափակվի: Իրերի այդպիսի դրությունից դժգոհ կարող են լինել Յեվրոպայում ընդհանուր պատերազմի հրձիգները միայն, նրանք, ովքեր խաղաղասիրության դիմակի տակ ուզում են համայեվրոպական պատերազմական հրդեհ բոցավառել»:

Ընկեր Մոլոտովի այս յեզրակացությունից յերևում ե, վոր չհարձակվելու խորհրդային-գերմանական պայմանագիրն ամբողջովին բխում ե մեր յերկու յերկրների ժողովուրդների շահերից և մենք միշտ պատրաստ ենք նման պայմանագրեր կնքելու նաև մյուս յերկրների հետ՝ բոլոր յերկրներում անդորրություն և խաղաղություն հաստատելու նպատակով:

Ընկերնե՛ր, մեզ մոտ շատ միամիտ մարդիկ ասում են՝ ի՞նչպես կարող ե Խորհրդային Միությունը պայմանագիր կնքել ֆաշիստական Գերմանիայի հետ: Այդ մարդիկ բոլորովին մոռանում են, վոր Գերմանիայի և Խորհրդային Միության կառավարությունները հավասարապես շահագրգռված են բարի-դրացիական խաղաղ փոխհարաբերություններ ստեղծելու, վորովհետև առաջին իմպերիալիստական պատերազմի «պատմությունը ցույց ե տվել, վոր թշնամանքը և պատերազմները մեր յերկրի ու Գերմանիայի միջև յեղել են վոչ թե հոգուտ, այլ ի վնաս մեր յերկրների» (Մոլոտով): Դրա համար ել յերեկվա թշնամիներն այժմ դարձել են բարի հարևաններ խաղաղությունը արևելյան Յեվրոպայում հաստատելու համար:

ԽՍՀՄ-ի և Գերմանիայի վարած խաղաղասիրական քաղաքականությունը վոչ միայն բխում ե այդ յերկու յերկրների ժողովուրդների շահերից, այլև համապատասխանում ե Յեվրոպայի բոլոր ժողովուրդների շահերին:

Ընկե՛ր դեպուտատներ, մենք պայմանագիր կնքեցինք Գերմանիայի հետ վոչ թե նրա համար, վոր չենք ցանկանում Անգլիայի, Ֆրանսիայի և Լեհաստանի հետ խաղաղության գործն ամրացնել, այլ նրա համար, վոր Ֆրանսիան, Անգլիան և Լեհաստանը ձախողեցին այդ համաձայնությունը և մենք կնքեցինք Գերմանիայի հետ մի պայմանագիր, վորը բղխում է մեր կուսակցության XVIII համագումարում ընկեր Ստալինի տված ցուցումներից: Անգլիայի, Ֆրանսիայի և Լեհաստանի դիվանագետները, չհասկանալով խաղաղասիրական քաղաքականությունը, ցանկանում են ուրիշի ձեռքերով կրակից շագանակ հանել, ուրիշի ձեռքերով արյուն թափել և ուրիշի ձեռքերով հաղթություն տանել, բայց Խորհրդային Միությունը, հասկանալով այդ ամենը, հայտարարեց, թե մենք յերբեք թույլ չենք տա, վոր Խորհրդային Միությունը մազաչափ անգամ տուժի:

Ընկերներ, չնայած միջազգային այս իրադրությանը, մենք կարողացանք մեր յերկրում ապահովել 2-րդ հնգամյակի վիթխարի խնդիրների իրագործումը և անցել ենք 3-րդ հնգամյակի պլանների իրականացմանը՝ մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: (Ծափահարություններ):

Ընկե՛ր դեպուտատներ, յերեկոյան հեռագրերից հայտնի դարձավ, վոր արդեն Լեհաստանի և Գերմանիայի սահմանում պատերազմական գործողություններ են սկսվել այդ յերկու յերկրների միջև: Դուք գիտեք, վոր այդ յերկու յերկրների միջև գոյություն ունեցող հակասությունները վերջին շրջանում սրվել են և նրանք իրենց լուծումը կարող են ստանալ միայն զենքի ուժով. իրականում այդպես էլ յեղավ:

Այժմ մեր հիմնական խնդիրն է՝ է՛լ ավելի բարձրացնել մեր զգաստությունը, կրկնապատկել մեր յեռանդը 3-րդ հնգամյակի հոյակապ խնդիրներն իրականացնելու և մեր յերկրի պաշտպանությունն ամրապնդելու համար:

Կեցցե՛ մեր պանծալի Կարմիր Բանակը և նրա ղեկավար ընկեր Վորոշիլովը:

Կեցցե՛ մեր կուսակցությունը և մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը: (Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ: Խոսքը տրվում է դեպուտատ Ղևոնդյանին:

Ս. Ա. ՂԵՎՈՆԴՅԱՆ (Այգեստանի օկրուգ, Ղամարլույի շրջան): Ընկե՛ր դեպուտատներ, Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների՝ ներկայացված կանոնադրության նախագիծն ամբողջովին և լիովին յելնում է Ստալինյան Սահմանադրության հիմնական սկզբունքներից:



Ընտրությունների կանոնադրության յերկրորդ հոդվածում ասված է. «Հայկական ԽՍՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրություններն ընդհանուր են: Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել է, անկախ ռասսայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու աշխատավորների դեպուտատների խորհուրդներում, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկման»:

Նախագիծն ապահովում է սոցիալիստական դեմոկրատիզմի, ընդհանուր, հավասար, ուղղակի գաղտնի քվեարկությամբ ընտրական իրավունքի սկզբունքի պրակտիկ իրականացումը:

Ներկայացված նախագծի մեջ լրիվ կերպով շարադրված են քաղաքացիների ընտրական բոլոր իրավունքները, և յես կարծում եմ, վոր բոլոր դեպուտատների կարծիքը կարտահայտեմ, յեթե ասեմ, վոր ընտրությունների՝ Որենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կողմից ներկայացված այս նախագիծը պետք է ամբողջովին հաստատի Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Սեսիան:

ՀամԿ(բ)Կ XV համագումարում կուսակցության Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ ընկեր Ստալինն ասում էր.

«Ի՞նչն է մեր պետական ապարատի ուժը: Այն, վոր նա իշխանությունը խորհուրդների միջոցով կապում է բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների հետ: Այն, վոր խորհուրդները կառավարման դպրոց են տասնյակ ու հարյուր-հազարավոր բանվորների ու գյուղացիների համար: Այն, վոր պետական ապարատը չի պատվարվում միլիոնավոր ժողովրդական մասսաներից, այլ միաձուլվում է նրանց հետ անթիվ քանակությամբ մասսայական կազմակերպությունների, ամեն տեսակ հանձնաժողովների, սեկցիաների, խորհրդակցությունների, պատվիրակային ժողովների և այլնի միջոցով, վորոնք շրջապատում են խորհուրդներն ու այդպիսով հենարան ծառայում իշխանության մարմինների համար: Ինչո՞ւմն է մեր պետական ապարատի թուլու-

թյունը: Բյուրոկրատական տարրերի առկայությունը նրա մեջ, վորոնք փչացնում ու խեղաթյուրում են նրա աշխատանքը: Վորպեսզի նրա միջից արտաքսեն բյուրոկրատիզմը,—իսկ արտաքսել այն չի կարելի մեկ-երկու տարում,—հարկավոր է սիստեմատիկորեն բարելավել պետական ապարատը, մասսաներին մոտեցնել այն, բանվոր դասակարգի գործին նվիրված նոր մարդկանց հաշվին նորացնել այն...»:

Ստալինյան յերկու հնգամյակների ծրագիրը հաջողությամբ կատարելու արդյունքը յեղավ այն, վոր մեր յերկիրը սոցիալիստական հզոր տերություն դարձավ:

Սոցիալիզմը մտավ կենցաղի մեջ, մեր ժողովրդի ամենօրյա կյանքի մեջ: Սոցիալիզմի հաղթանակներն ե՛լ ավելի ամրացրին մեր խորհուրդների դերը և նրանց հսկայական բարձրության հասցրին:

Ընտրական այն օրենքը, վոր պետք է մենք հաստատենք, բացառիկ կարևոր նշանակություն ունի: Աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը պետք է արտացոլի առաջիկա ընտրությունների առանձնահատկությունը, յերբ ընտրողները միաժամանակ միքանի բյուլետեններով կքվեարկեն:

Բավարարո՞ւմ է արդյոք այդ պահանջներին Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության այն նախագիծը, վոր ներկայացնում է Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովը: Անշուշտ, նախագիծը բավարարում է այդ պահանջներին:

Կանոնադրության մեջ խոսվում է վոչ միայն խորհրդային ընտրական սիստեմի այն հիմնական սկզբունքների մասին, վոր սահմանել է Ստալինյան Սահմանադրությունը, այլև մանրամասն ցույց է տրվում, թե ինչպես են կազմվում ընտրողների ցուցակները, ինչպես են կազմվում ընտրական օկրուգները և ընտրական տեղամասերը, սահմանվում են ընտրական հանձնաժողովների իրավունքներն ու պարտականությունները, քվեարկման կարգը, ձայների հաշվումը և այլն:

Միանգամայն ճիշտ եմ համարում Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի կանոնադրության 74-րդ հոդվածում գրված այն առաջարկը, թե աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների



ընտրությունները կատարվում են մեկ, Հայկական ԽՍՀ համար ընդհանուր, օրվա ընթացքում:

Յես համաձայն եմ նաև Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի այն առաջարկին, վոր վերաբերում է ընտրական օկրուգների նորմաներին՝ Հայկական ԽՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիման վրա: Ըստ այդ առաջարկի, վոր բերված է կանոնադրության նախագծում, 12·000-ից մինչև 100·000 բնակչություն ունեցող քաղաքներում կազմակերպվում է մեկ ընտրական օկրուգ յուրաքանչյուր 350 հոգուն, վորով մինչև 12·000 բնակչություն ունեցող քաղաքներում կազմվում է 35 ընտրական օկրուգ: Յերևան քաղաքում կազմակերպվում է յուրաքանչյուր 600 հոգուն մեկ ընտրական օկրուգ:

Առաջիկա ընտրությունները բացառիկ նշանակություն են ստանում: Առաջիկա ընտրությունների չափերը և դրանց քաղաքական նշանակությունն իսկապես վոր հոյակապ են: Այս ընտրական կամպանիան իր թափով ամենամեծ քաղաքական կամպանիան է, դա գերազանցում է խորհրդային իշխանության գոյության օրով մեր ունեցած բոլոր կամպանիաներից: Այստեղից բխում է, վոր պետք է վիթխարի մասսայական-քաղաքական, ագիտացիոն աշխատանք տարվի՝ տեղերում դեպուտատների ընտրություններն ապահովելու համար:

Ընկեր Ստալինը Մոսկվայի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում արտասանած ճառում ասում էր. «Առաջիկա ընտրությունները սոսկ ընտրություններ չեն, ընկերնե՛ր: Դա իրոք մեր բանվորների, մեր գյուղացիների, մեր ինտելիգենցիայի համաժողովրդական տոնն է: Դեռ յերբեք աշխարհում չեն յեղել այդպիսի իսկական ազատ և իսկական դեմոկրատիկ ընտրություններ, յերբե՛ք: Պատմությունը մի ուրիշ այդպիսի օրինակ չգիտե: Բանն այն չէ, վոր մեզանում ընտրությունները կլինեն ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի, թեև այդ բանն ինքնին մեծ նշանակություն ունի: Բանն այն է, վոր մեզանում ընդհանուր ընտրությունները կանցկացվեն վորպես առավել ազատ և առավել դեմոկրատիկ ընտրություններ՝ աշխարհի վորևէ այլ յերկրի ընտրությունների համեմատությամբ»:

Աշխատավորների դեպուտատների ընտրությունների նախապատրաստումը կազմակերպված կերպով անցկացնելու համար անհրաժեշտ է աշխատավորների մեջ ագիտացիոն-մասսայական լայն աշխատանք ծավալել: Աշխատավորների դեպուտատների

ընտրությունների այն կանոնադրությունը, որ մենք ձեզ հետ
այստեղ կընդունենք, պետք է մեր ագիտատորների միջոցով
հասցվի յուրաքանչյուր բանվորին, կոլտնտեսականին, ինտելի-
գենտին: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և Հայկ. ԽՍՀ Գերագույն
Խորհրդի դեպուտատների ընտրությունների ժամանակաշրջանում
ագիտացիոն աշխատանքին մասնակից դարձվեցին ավելի քան 5
հազար ագիտատորներ, որոնք իրենց առաջադրված խնդիրը
լավ չկատարեցին: Այստեղից բխում է, որ դեպուտատների
շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների
առաջիկա ընտրություններն ապահովելու համար պետք է վերո-
հիշյալ թիվը յեռապատկվի, քառապատկվի, գործի կանչվեն մաս-
սաների մեջ բոլշևիկյան խոսքը փոխադրել կարողացող լավա-
գույն ագիտատորներ: Այժմ հենց պիտի սկսել օկրուգային և տե-
ղական ընտրական տեղամասերի որոշման, ագիտատորներ նշա-
նակելու, բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում, կոլ-
տնտեսություններում, ուսումնական հաստատություններում
ագիտատորների և ագիտկոլեկտիվների կարճատև դասընթացներ
կազմակերպելու նախապատրաստական աշխատանքները:

Առաջիկա ընտրություններին մեր ագիտացիոն-պրոպագան-
դիստական ամբողջ աշխատանքը կանցկացնենք տնտեսական-քաղա-
քական այն խնդիրների կատարման անկյան տակ, որ առաջա-
դրել են բոլոր աշխատավորներին կուսակցությունն ու կառավա-
րությունը: Ե՛լ ավելի լայնորեն ու ակտիվորեն աշխատենք բոլ-
շևիկների XVIII կուսհամագումարի որոշումներն իրականացնե-
լու համար, Ստալինյան յերրորդ հնգամյակի պլանները և 1939
թվի պլանները ժողովրդատնտեսության բոլոր բնագավառներում
կատարելու և գերակատարելու համար: Ե՛լ ավելի ամրապնդենք
մեր յերկրի պաշտպանունակությունը, անխոնջ պատրաստենք
մեր աշխատավորներին յերկրի պաշտպանության համար:

Տեղական, շրջանային, գյուղական բոլոր խորհուրդները
ընտրությունների նախապատրաստությունն անցկացնելիս պետք
է իրենց առաջադրեն Կենտկոմի և ԽՍՀՄ ԺԿԽ «Կոլտնտեսու-
թյունների հանրային հողերը շռայլելուց պահպանելու միջոցա-
ռումների մասին» որոշումը լրիվ իրագործելու խնդիրը: Իր
ժամանակին և առանց կորուստների հավաքել բերքը, պայքարել
գյուղատնտեսական պրոդուկտների մթերումները հաջող անց-
կացնելու համար, պայքարել, որ կոլտնտեսություններն իր ժա-
մանակին և լրիվ կատարեն իրենց պարտավորությունները պե-
տության հանդեպ և օրինակելի անցկացնեն անասունի ձմեռումը:



Առաջիկա ընտրություններին պատրաստվելով, է՛լ ավելի
բարձրացնենք բոլոր աշխատավորների զգոնությունը, է՛լ ավելի
սերտ համախմբենք մեր ժողովուրդը Լենինի—Ստալինի մեծ կու-
սակցության շուրջը, որը խորհրդային ժողովրդի համար յեր-
ջանիկ, ուրախ կյանք է ապահովում:

Կեցցե՛ խորհրդային Սահմանադրությունը:

Կեցցե՛ Լենինի—Ստալինի կուսակցությունը:

Կեցցե՛ սոցիալիզմի մեծ հաղթանակների ներշնչող մեր հա-
րազատ հայր և ուսուցիչ մեծ Ստալինը: (Ծափահարություն-
ներ):

ՆԱԽԱԳԱՀ: Ընկե՛ր դեպուտատներ, առաջարկություն կա
վիճաբանությունները դադարեցնելու մասին: Քվեարկում եմ. ով
կողմնակից է վիճաբանությունների դադարեցմանը, խնդրում եմ
ձեռք բարձրացնել: Խնդրում եմ թողնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ
է ձեռնպահ: Չկա:

Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանա-
յին, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտ-
րությունների կանոնադրության նախագծի վերաբերյալ վիճաբա-
նությունները դադարեցնելու առաջարկությունն ընդունված է
միաձայն:

Անցնում ենք զեկուցողի յեզրափակման խոսքին:

Հոդված 36. Քաղաքային և Քաղաքային-ռայոնական ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են—Քաղաքային ընտրական հանձնաժողովը հանրապետության յենթակա քաղաքներում՝ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, շրջաններին յենթակա քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի կողմից: Ռայոնական ընտրական հանձնաժողովը քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհրդի կողմից—նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի և 6—10 անդամի կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ:

Հոդված 37. Քաղաքային, Քաղաքային-ռայոնական ընտրական հանձնաժողովը՝

ա) հսկում է, վոր քաղաքի և ռայոնի տերիտորիայում քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի ընտրությունների ընթացքում ընտրությունների ներկա Կանոնադրությունն անշեղ կատարվի.

բ) քննում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ գանգատները.

գ) հսկում է ընտրական ցուցակները ժամանակին կազմելուն և բոլոր ընտրողներին այդ մասին իրազեկ դարձնելուն.

դ) հսկում է, վոր աշխատավորների դեպուտատների Խորհրդի համապատասխան գործադիր կոմիտեն ընտրական տեղամասերը ժամանակին կազմակերպի, և սահմանում է ռայոնի ընտրական տեղամասերի հերթական համարները.

ե) պատրաստում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի ընտրությունների

ընտրական բյուլետենները՝ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով.

դ) ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի դեպուտատ ընտրվածներին.

ե) աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրությունների վերաբերյալ գործավարությունը:

Հոդված 38. Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական օկրուգում ստեղծվում է Օկրուգային ընտրական հանձնաժողով:

Հոդված 39. Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի ընտրությունների օկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից՝ Նախագահի, Նախագահի տեղակալի, քարտուղարի և 2—4 անդամի կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 50 օր առաջ:

Հոդված 40. Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի ընտրությունների օկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-ռայոնական Խորհրդի դեպուտատների այն թեկնածուներին, վորոնք առաջադրվել են Հայկական ԽՍՀ Սահմանադրության և ընտրությունների ներկա Կանոնադրության պահանջների պահպանմամբ.

բ) տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ.

գ) վորոշում է ընտրությունների արդյունքներն օկրուգում.

դ) դեպուտատ ընտրվածին վկայական է տալիս ընտրվելու մասին.

յե) Քաղաքային, Քաղաքային-ռայոնական ընտրական հանձնաժողովին է հանձնում ընտրությունների վերաբերյալ գործավարությունը:



ԳԼՈՒԽ V

## ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 41. Աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգները կազմում են աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդները:

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի հիման վրա, ընտրական օկրուգները կազմվում են հետևյալ նորմաներով.

1000 հոգուց ավելի բնակչություն ունեցող գյուղական և ավանային Խորհուրդների տերիտորիայում բնակչության յուրաքանչյուր 100 հոգու համար կազմվում է մեկ ընտրական օկրուգ, սակայն 25 օկրուգից վոչ ավելի. մինչև 1000 հոգի բնակչություն ունեցող գյուղերում և ավաններում կազմվում է 9 ընտրական օկրուգ:

Հոդված 42. Աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգների ցուցակները հրապարակում են աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդների գործադիր կոմիտեները վոչ ուշ, քան ընտրություններից 55 օր առաջ:

Հոդված 43. Յուրաքանչյուր գյուղխորհրդում և ավանում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողով:

Հոդված 44. Գյուղական ու Ավանային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների կողմից՝ Նախագահի, Նախագահի տեղակալի, քարտուղարի և 2—4 անդամի կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 55 օր առաջ:

Հոդված 45. Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողովը՝

ա) հսկում է, վոր գյուղխորհրդի տերիտորիայում գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների ընթացքում ընտրությունների ներկա Կանոնադրությունն անշեղ. կատարվի.

բ) քննություն է անում աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ գանգատները.

գ) պատրաստում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի ընտրությունների ընտրական բյուլետենները Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով և տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է ընտրական բյուլետեններ.

դ) ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի դեպուտատ ընտրվածներին.

ե) աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրությունների վերաբերյալ գործավարությունը:

Հոդված 46. Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական օկրուգումստեղծվում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողով:

Հոդված 47. Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհուրդների ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի կողմից՝ նախագահի, քարտուղարի և մեկ անդամի կազմով, ոչ ուշ, քան ընտրություններից 50 օր առաջ:

Հոդված 48. Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) ցուցակագրում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային խորհրդի այն թեկնածուներին, որոնք առաջադրվել են Հայկական ՍՍՀ Սահմանադրության և ընտրությունների ներկա Կանոնադրության պահանջների պահպանմամբ.

բ) վորոշում է ընտրությունների արդյունքներն օկրուգում.

գ) դեպուտատ ընտրվածին վկայական է տալիս ընտրվելու մասին.

դ) Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողովին է



ներկայացնում ընտրությունների վերաբերյալ գործավարությունը:

ԳԼՈՒԽ VI

## ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ ՅԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 49. Ընտրական բյուլետեններն ընդունելու և ձայները հաշվելու համար քաղաքների, ավանների և գյուղական խորհուրդների տերիտորիաները բաժանվում են ընտրական տեղամասերի, վորոնք ընդհանուր են աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների համար:

Հոդված 50. Ընտրական տեղամասերը կազմում են—քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային խորհուրդները, ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների ռայոնական՝ խորհուրդները, գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային խորհուրդները:

Հոդված 51. Ընտրական տեղամասերը կազմվում են ոչ ուշ, քան ընտրություններից 50 օր առաջ:

Հոդված 52. 2000-ից ոչ ավելի բնակիչ ունեցող գյուղխորհրդի տերիտորիան, վորպես կանոն, կազմում է մեկ ընտրական տեղամաս. յուրաքանչյուր գյուղում, վորն ունի 500-ից սկսած, բայց 2000-ից ոչ ավելի բնակիչ, կազմակերպվում է առանձին ընտրական տեղամաս:

2000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղխորհրդի և գյուղական բնակավայրի տերիտորիան ընտրական տեղամասերի յե բաժանվում այն հաշվով, վոր 1500-ից մինչև 2500 բնակչին ընկնի մեկ ընտրական տեղամաս:

500-ից պակաս, բայց 300 հոգուց ոչ քիչ բնակչություն ունեցող գյուղերում կամ գյուղախմբերում, յեթե նրանց հեռավորությունը ընտրական տեղամասի կենտրոնից 10 կիլոմետրից ավելի յե, կարող են կազմվել առանձին ընտրական տեղամասեր:

Այն շրջաններում, վորտեղ գերակշռում են մանր բնակավայրերը, թույլատրվում է կազմակերպել 300-ից պակաս, բայց 50-ից ոչ քիչ բնակչություն ունեցող ընտրական տեղամասեր:

Հոդված 53. 2000-ից ավելի բնակչություն ունեցող քաղաքները և ավաններն ընտրական տեղամասերի յեն բաժանվում այն

հաշվով, որ մեկ ընտրական տեղամասին ընկնի 1500-ից մինչև 2500 հոգի բնակչություն:

Հոդված 54. Զինվորական մասերը և զորական միավորումները կազմում են առանձին ընտրական տեղամասեր 50-ից ոչ պակաս և 1500-ից ոչ ավելի ընտրողներով:

Հոդված 55. 50 հոգուց ոչ պակաս ընտրողներ ունեցող հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին և հաշմանդամների տներին կից կազմվում են առանձին ընտրական տեղամասեր:

Միքանի կորպուսից բաղկացած հիվանդանոցներում թույլատրվում է առանձին կորպուսներին կից կազմել ընտրական տեղամասեր, յեթե նրանցից յուրաքանչյուրում կան 50 հոգուց ոչ պակաս ընտրողներ:

Հիվանդանոցներում և այլ բուժհիմնարկներում, վորտեղ առանձին ընտրական տեղամասեր չեն կազմակերպվում, թույլատրվում է ընտրական բյուլետեններն ընդունել հենց հիվանդանոցներում և բուժհիմնարկներում՝ ընտրական հանձնաժողովների առանձնացված անդամների կողմից: Այդպիսի դեպքերում հիվանդանոցներին տրվում են առանձին ընտրական քվեատուփեր:

Հոդված 56. Յուրաքանչյուր ընտրական տեղամասում ստեղծվում է Տեղամասային ընտրական հանձնաժողով, վորն ընդհանուր է աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների համար:

Հոդված 57. Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են—քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների ռայոնական Խորհուրդների կողմից. գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների կողմից՝ նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի և 6—10 անդամի կազմով, վոչ ուշ, քան ընտրություններից 45 օր առաջ:

Հոդված 58. Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

ա) ընդունում է ընտրական տեղամասի ընտրական բյուլետենները.

բ) հաշվում է աշխատավորների դեպուտատների շրջանային,



քաղաքային, գյուղական և ավանային Խորհրդի դեպուտատության յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայները.

գ) հանձնում է քվեարկության արձանագրությունը համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովին, իսկ ամբողջ գործավարությունը՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ շրջանային Խորհրդին:

## ԳԼՈՒԽ VII

## ԴԵՊՈՒՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 59. Հայկական ԽՍՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի հիման վրա, ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական օկրուգների:

Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների՝ կոմունիստական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, կոոպերատիվների, յերիտասարդական կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների և օրենքով սահմանված կարգով գրանցված այլ կազմակերպությունների համար:

Հոդված 60. Թեկնածուներ առաջադրելու իրավունքն իրականացնում են ինչպես աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների հանրապետական օրգանները, այնպես էլ նրանց շրջանային օրգանները, նմանապես և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ ձեռնարկություններում ու հիմնարկություններում, կարմիր-բանակայիններինը՝ զորամասերում, ինչպես և գյուղացիների ընդհանուր ժողովները՝ կոլտնտեսություններում, խորհտնտեսությունների բանվորներինն ու ծառայողներինը՝ խորհտնտեսություններում:

Հոդված 61. Դեպուտատության թեկնածուները չեն կարող Օկրուգային, ինչպես նաև Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ լինել այն օկրուգում, վորտեղ նրանք առաջադրված են վորպես դեպուտատության թեկնածու:

Հոդված 62. Վոչ ուշ, քան ընտրություններից 35 օր առաջ, աշխատավորների այն բոլոր հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները, վորոնք առաջադրել են աշխատա-

վորների դեպուտատների շրջանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուներ, պարտավոր են դեպուտատության թեկնածուներին գրանցել համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովում:

Հոդված 63․ Վոչ ուշ, քան ընտրություններից 20 օր առաջ, աշխատավորների այն բոլոր հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները, վորոնք աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդների, քաղաքային-ռայոնական Խորհուրդների, գյուղական և ավանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուներ են առաջադրել, պարտավոր են դեպուտատության թեկնածուներին գրանցել համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովում:

Հոդված 64․ Օկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել դեպուտատության այն բոլոր թեկնածուներին, վորոնց առաջադրել են աշխատավորների հասարակական կազմակերպությունները և ընկերությունները, պահպանելով Հայկական ԽՍՀ Սահմանադրության և ընտրությունների ներկա Կանոնադրության պահանջները:

Հոդված 65․ Աշխատավորների հասարակական կազմակերպությունը կամ ընկերությունը, վոր դեպուտատության թեկնածուներ է առաջադրել, պարտավոր է համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը․

ա) դեպուտատության թեկնածու առաջադրող ժողովի կամ նիստի արձանագրությունը, վորը պետք է ստորագրած լինեն նախագահության անդամները և վորտեղ մատնանշված պետք է լինի նրանց տարիքը, բնակավայրը, թեկնածու առաջադրող կազմակերպության անունը, մատնանշված պետք է լինի դեպուտատության թեկնածու առաջադրող ժողովի կամ նիստի տեղը, ժամանակը և ժողովին մասնակցողների թիվը, ընդվորում արձանագրության մեջ պետք է մատնանշված լինի դեպուտատության թեկնածուի ազգանունը, անունը և հայրանունը, նրա տարիքը, բնակավայրը, կուսակցականությունը, զբաղմունքը․

բ) դեպուտատության թեկնածուի հայտարարությունն այն մասին, վոր ինքը համաձայն է յեղել քվեարկվելու իրեն առաջադրող կազմակերպության կողմից տվյալ ընտրական օկրուգում:

Հոդված 66․ Աշխատավորների դեպուտատների Խորհրդի դե-



պուտատության թեկնածուն կարող է միևնույն Խորհրդի համար
քվեարկվել միայն մեկ օկրուգում:
Հոդված 67․ Աշխատավորների դեպուտատների շրջանային,
քաղաքային, քաղաքային-ռայոնական, գյուղական և ավանային
Խորհրդի ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժո-
ղովի հրաժարումը դեպուտատության թեկնածուին գրանցելուց՝
կարող է բողոքարկվել յերկու օրվա ընթացքում համապատաս-
խան շրջանային, քաղաքային, քաղաքային-ռայոնական, գյուղա-
կան և ավանային ընտրական հանձնաժողովում, վորի վճիռը
վերջնական է:
Հոդված 68․ Աշխատավորների դեպուտատների շրջանային
Խորհրդի դեպուտատության յուրաքանչյուր գրանցված թեկնա-
ծուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը,
կուսակցականությունը և թեկնածուին առաջադրող հասարակա-
կան կազմակերպության անունը համապատասխան Օկրուգային
ընտրական հանձնաժողովը հրապարակում է վոչ ուշ, քան ընտ-
րություններից 30 օր առաջ:
Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքային-
ռայոնական, գյուղական և ավանային Խորհուրդների Օկրուգա-
յին ընտրական հանձնաժողովների գրանցած դեպուտատության
թեկնածուների վերաբերյալ տվյալները համապատասխան Քա-
ղաքային, Քաղաքային-ռայոնական, Գյուղական և Ավանային
ընտրական հանձնաժողովը հրապարակում է վոչ ուշ, քան ընտ-
րություններից 15 օր առաջ:
Հոդված 69․ Աշխատավորների դեպուտատների Խորհուրդնե-
րի դեպուտատության բոլոր գրանցված թեկնածուները պետք է
անպայման մտցվեն ընտրական բյուլետենների մեջ:
Հոդված 70․ Աշխատավորների դեպուտատների շրջանային,
քաղաքային և քաղաքային-ռայոնական Խորհուրդների ընտրու-
թյունների Օկրուգային ընտրական հանձնաժողովները, ինչպես
նաև Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովները,
պարտավոր են բոլոր Տեղամասային ընտրական հանձնաժողովնե-
րին ուղարկել ընտրական բյուլետենները վոչ ուշ, քան ընտրու-
թյուններից 10 օր առաջ:
Հոդված 71․ Ընտրական բյուլետենները տպագրվում են հա-
մապատասխան ընտրական օկրուգի բնակչության լեզվով:
Հոդված 72․ Ընտրական բյուլետենները տպագրվում են Հայ-
կական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած

ձևով և այնպիսի քանակությամբ, վոր բոլոր ընտրողներն ապահովվեն ընտրական բյուլետեններով։

Հոդված 73. Յուրաքանչյուր կազմակերպություն, վոր առաջադրել է համապատասխան ընտրական հանձնաժողովում գրանցված թեկնածու, ինչպես և Հայկական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացու, իրավունք է ապահովվում՝ անարգել ագիտացիա մղելու այդ թեկնածուի օգտին ժողովներում, մամուլում և այլ յեղանակներով, համաձայն Հայկական ԽՍՀ Սահմանադրության 100–րդ հոդվածի։

ԳԼՈՒԽ VIII

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԸ

Հոդված 74. Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, քաղաքային–ռայոնական, գյուղական ու ավանային Խորհուրդների ընտրությունները կատարվում են մեկ օրվա ընթացքում, վորն ընդհանուր է Հայկական ԽՍՀ համար։

Հոդված 75. Ընտրությունների օրը սահմանում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը վոչ ուշ, քան ընտրությունների ժամկետից 2 ամիս առաջ։ Ընտրությունները կատարվում են վոչ աշխատանքային օրը։

Հոդված 76. Ընտրություններին նախորդող վերջին 15 օրվա ընթացքում ամեն օր Տեղամասային ընտրական հանձնաժողովը հրապարակման կամ վորևէ այլ միջոցով ընտրողներին լայնորեն հաղորդում է ընտրությունների օրվա և ընտրությունների տեղի մասին։

ԳԼՈՒԽ IX

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 77. Ընտրողներն իրենց ձայները տալիս են ընտրությունների օրը, առավոտյան ժամը 6–ից մինչև գիշերվա ժամը 12–ը տեղական ժամանակով։

Հոդված 78. Ընտրությունների օրը առավոտյան ժամը 6–ին, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ, ստուգում է քվեատուփերը և ընտրողների՝ սահմանված ձևով կազմված ցուցակի առկայությունը, վորից հետո փակում ու հանձնաժողովի կնիքով կնքում է քվեատուփերը և ընտրողներին հրավիրում է անցնել քվեարկության։



կնիքների ու քվեատուփերի նմուշները սահմանում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը։

Հոդված 79. Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, այդ նպատակով ներկայանալով քվեարկության համար հատկացված շենքը, ընդվորում ընտրողներն իրենց ձայները տալիս են՝ ընտրական բյուլետեններն ընտրական քվեատուփերի մեջ գցելով։

Հոդված 80. Ընտրությունների շենքում բյուլետենները լրացնելու համար հատկացվում է հատուկ սենյակ, վորտեղ քվեարկության ժամանակ արգելվում է, քվեարկողներից բացի, վորևէ մեկի, այդ թվում նաև Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությունը. բյուլետենները լրացնելու համար սենյակը միաժամանակ միքանի ընտրող թողնելիս, այդ սենյակում պետք է սարքել միջնորմներ կամ շիրմաներ՝ միաժամանակ ներս թողնվող ընտրողների թվի համեմատ։

Հոդված 81. Ընտրական շենքը յեկած ընտրողը Տեղամասային հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին ներկայացնում է կա՛մ անձնագիրը, կա՛մ կոլտնտեսային գրքույկը, կա՛մ արհմիութենական տոմսը, կա՛մ վորևէ այլ անձնական վկայական և, ընտրողների ցուցակով ստուգվելուց ու ընտրողների ցուցակում նշվելուց հետո, ստանում է սահմանված ձևի ընտրական բյուլետեն։

Հոդված 82. Այն անձերի համար, վորոնք ընտրությունների շենքն են ներկայացել «քվեարկության իրավունքի վկայականով», համաձայն ընտրությունների ներկա Կանոնադրության 20–րդ հոդվածի, Տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է հատուկ ցուցակ, վորը կցվում է ընտրողների ցուցակին։

Հոդված 83. Ընտրական բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում ընտրողը յուրաքանչյուր ընտրական բյուլետենում թողնում է այն թեկնածուի ազգանունը, վորին ձայն է տալիս ինքը, ջնջելով մյուսներինը. դրանից հետո ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը, և ընտրական բյուլետենները գցում է քվեատուփի մեջ։

Հոդված 84. Այն ընտրողները, վորոնք անգրագիտության կամ վորևէ ֆիզիկական թերության պատճառով հնարավորություն չունեն ինքնուրույն կերպով լրացնելու ընտրական բյուլետենները, իրավունք ունեն ընտրական բյուլետենների լրացման սենյակը հրավիրել վորևէ այլ ընտրողի՝ ընտրական բյուլետենները լրացնելու համար։

Հոդված 85. Քվեարկության ժամանակ ընտրական շենքում ընտրական ագիտացիա չի թույլատրվում:

Հոդված 86. Ընտրական շենքի կարգապահության պատասխանատվությունը կրում է Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, և նրա կարգադրությունները բոլոր ներկա գտնվողների համար պարտադիր են:

Հոդված 87. Ընտրությունների օրվա գիշերը ժամը 12-ին Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությունը հայտարարում է ավարտված, և հանձնաժողովը սկսում է բանալ քվետուփերը:

## ԳԼՈՒԽ X

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հոդված 88. Այն շենքում, վորտեղ Տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, ձայները հաշվելու ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեն աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ դրա համար հատկապես լիազորված ներկայացուցիչները, ինչպես և մամուլի ներկայացուցիչները:

Հոդված 89. Տեղամասային ընտրական հանձնաժողովը բանալով քվետուփը, բյուլետենները հաշվում է ըստ օկրուգների, տրված բյուլետենների թիվը համեմատում է քվեարկությանը մասնակցած անձերի թվի հետ (բյուլետեններն ստանալիս՝ ընտրողների ցուցակում կատարած նշումների հիման վրա) և ստուգման արդյունքները մտցնում է քվեարկության արձանագրության մեջ՝ ըստ յուրաքանչյուր ընտրական օկրուգի:

Հոդված 90. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ, հրապարակում է քվեարկության արդյունքներն ըստ յուրաքանչյուր բյուլետենի:

Հոդված 91. Վավերական չեն համարվում այն բյուլետենները, վորոնց մեջ քվեարկության ժամանակ թողնված է մեկից ավելի թեկնածու, ինչպես և չսահմանված նմուշի ու գույնի բյուլետենները:

Հոդված 92. Ընտրական բյուլետենների վավերական լինելու վերաբերյալ տարակուսանք ծագելու դեպքում հարցը լուծում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ քվեարկության միջոցով, և այդ մասին նշվում է արձանագրության մեջ:



Հոդված 93. Տեղամասային ընտրական հանձնաժողովը Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով յուրաքանչյուր ընտրական օկրուգի համար կազմում է քվեարկության արձանագրություն՝ յերկու օրինակից, վոր ստորագրում են Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում՝ անպայման նախագահն ու քարտուղարը:

Հոդված 94. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արձանագրության մեջ պետք է նշված լինի՝

ա) քվեարկությունն սկսվելու և վերջանալու ժամանակը.

բ) ընտրողների թիվն ըստ ընտրական տեղամասի և ըստ օկրուգների.

գ) ընտրողների ցուցակով ձայն տված ընտրողների թիվը.

դ) «քվեարկության իրավունքի վկայականներով» ձայն տված ընտրողների թիվը.

ե) տրված բյուլետենների թիվն ըստ ընտրական տեղամասի և ըստ օկրուգի.

զ) Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրված հայտարարությունների և բողոքների հակիրճ բովանդակությունը և Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները.

է) քվեարկության արդյունքներն ըստ յուրաքանչյուր թեկնածուի:

Հոդված 95. Ձայների հաշվումը վերջացնելուց և քվեարկության արձանագրությունը կազմելուց հետո Տեղամասային հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հրապարակում է քվեարկության արդյունքները՝ ըստ յուրաքանչյուր օկրուգի:

Հոդված 96. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկության արձանագրության մի օրինակը սուրհանդակի միջոցով, 24 ժամվա ընթացքում, ուղարկվում է համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովին:

Հոդված 97. Բոլոր ընտրական բյուլետենները (վավերականներն առանձին և անվավեր ճանաչվածներն առանձին) պետք է կնքվեն Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով, և քվեարկության արձանագրությունների յերկրորդ օրինակների ու կնիքի հետ միասին Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից պահպանության հանձնվեն քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդներին, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների

դեպուտատների ռայոնական Խորհուրդներին, գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդներին:

Հոդված 98. Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների վրա պարտականություն է դրվում պահպանելու ընտրական բյուլետենները մինչև յուրաքանչյուր օկրուգի դեպուտատների մանդատների հաստատումը աշխատավորների դեպուտատների համապատասխան Խորհրդի կողմից:

Հոդված 99. Աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, քաղաքային-ռայոնական, գյուղական ու ավանային Խորհրդի Օկրուգային ընտրական հանձնաժողովները վորոշում են ընտրությունների արդյունքներն ըստ օկրուգի՝ Տեղամասային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

Հոդված 100. Այն շենքում, վորտեղ Օկրուգային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, ձայները հաշվելիս ներկա գտնվելու իրավունք ունեն աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ դրա համար հատկապես լիազորված ներկայացուցիչները, ինչպես և մամուլի ներկայացուցիչները:

Հոդված 101. Օկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևի քվեարկության արձանագրություն՝ յերկու օրինակից, վորը ստորագրում են Օկրուգային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, վորոնց թվում անպայման նախագահը և քարտուղարը:

Հոդված 102. Օկրուգային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է նշված լինի.

ա) ընտրողների ընդհանուր թիվն օկրուգում.

բ) քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) դեպուտատության յուրաքանչյուր թեկնածուի օգտին տրված ձայների թիվը.

դ) Օկրուգային ընտրական հանձնաժողովին տրված հայտարարությունների ու բողոքների համառոտ բովանդակությունը և Օկրուգային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները:

Հոդված 103. Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների ընտրությունների ընտրական հանձնաժողովների նիստերը



համարվում են վավերական, յեթե ներկա յե լինում հանձնաժո-
ղովի ընդհանուր կազմի կեսից ավելին:

Հոդված 104. Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցե-
րը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ. ձայների
հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռականություն է
տալիս:

Հոդված 105. Ձայների հաշվումը վերջացնելուց վոչ ուշ քան
24 ժամ հետո Օկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը
պարտավոր է կնքված արձանագրությունը սուրհանդակի միջո-
ցով ուղարկել համապատասխան Շրջանային, Քաղաքային, Գյու-
ղական ու ավանային ընտրական հանձնաժողովին:

Հոդված 106. Աշխատավորների դեպուտատների Խորհրդի
դեպուտատության այն թեկնածուն, վորն ստացել է ձայների
բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ օկրուգում տրված և
վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համար-
վում է ընտրված:

Հոդված 107. Արձանագրությունն ստորագրելուց հետո Օկ-
րուգային ընտրական հանձնաժողովի նախագահը հրապարակում
է ընտրությունների արդյունքները և դեպուտատության ընտր-
ված թեկնածուին վկայական է տալիս ընտրված լինելու մասին:
Ընտրված լինելու վկայականի ձևը սահմանում է Հայկական ԽՍՀ
Գերագույն Խորհրդի Նախագահությունը:

Հոդված 108. Յեթե օկրուգի թեկնածուներից վոչ մեկը չի
ստացել ձայների բացարձակ մեծամասնություն, համապատաս-
խան Օկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին առան-
ձին նշում է արձանագրության մեջ և հայտնում է Շրջանային,
Քաղաքային, Քաղաքային-ռայոնական, Գյուղական ու Ավանային
ընտրական հանձնաժողովին և միաժամանակ հայտարարում է
վերաքվեարկություն այն յերկու թեկնածուների, վորոնք ձայ-
ների ամենամեծ թիվն են ստացել, ինչպես և նշանակում է
վերաքվեարկության օրը, վոչ ուշ, քան ընտրությունների առա-
ջին օրից յերկու շաբաթ հետո:

Հոդված 109. Յեթե օկրուգում տրված ձայների թիվը պա-
կաս է ավյալ օկրուգում քվեարկության իրավունք ունեցող ընտ-
րողների կեսից, օկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մա-
սին առանձին նշում է արձանագրության մեջ և անհապաղ հայտ-
նում է համապատասխան Շրջանային, Քաղաքային, Քաղաքային-
ռայոնական, Գյուղական ու Ավանային ընտրական հանձնաժո-
ղովին, ընդվորում այս դեպքում Շրջանային, Քաղաքային, Քա-

*ղաքային–ռայոնական, Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն, վոչ ուշ քան առաջին ընտրությունից յերկու շաբաթ հետո:*

Հոդված 110. *Դեպուտատության թեկնածուների վերաքվեարկությունը, ինչպես նաև վոչ–վավերական ճանաչվածների փոխարեն նորերի ընտրությունները, կատարվում են առաջին ընտրությունների համար կազմված ընտրողների ցուցակներով և լիովին համապատասխան ընտրությունների ներկա կանոնադրության:*

## ԳԼՈՒԽ XI

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 111. *Ամեն վոք, ով բռնության, խաբելու, սպառնալիքի կամ կաշառքի միջոցով արգելք կհանդիսանա Հայկական ԽՍՀ քաղաքացուն իրագործելու Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Խորհուրդների դեպուտատներ ընտրելու և ընտրվելու իրավունքը, պատժվում է մինչև յերկու տարի ազատազրկումով:*

Հոդված 112. *Խորհրդի այն պաշտոնատար անձը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վոր կեղծել է ընտրական փաստաթղթերը, կամ գիտավորյալ կերպով սխալ հաշվել ձայները— պատժվում է մինչև յերեք տարի ազատազրկումով:*

*Ի ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահի՝* Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղարի՝* Ռ. ԴՅԱՆՋԵՅԱՆ

2 *սեպտեմբերի* 1939 *թ.*
*քաղ. Յերևան:*



## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) 116–ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

*Մի շարք շրջանների տարախոշորացման կապակցությամբ, փոփոխություն մտցնել Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների համար Հայկական ԽՍՀ Սահմանադրության* 116–*րդ հոդվածով սահմանված ներկայացուցչության նորմաների մեջ:*

*Այդ կապակցությամբ Հայկական ԽՍՀ Սահմանադրության* 116–*րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Հոդված 116. *Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական ոկրուգների, հետևյալ նորմաներով՝*

*Շրջանային խորհուրդները—մեկ դեպուտատ* 1000 *բնակչից. մինչև* 25000 *բնակիչ ունեցող շրջանում ընտրվում է* 25 *դեպուտատ.* 60000–*ից ավելի բնակիչ ունեցող շրջանում ընտրվում է* 60 *դեպուտատից վոչ ավելի:*

*Քաղաքային խորհուրդները և ռայոնական խորհուրդները քաղաքներում—նայած քաղաքի կամ քաղաքային ռայոնի մեծությանը—մեկ դեպուտատ վոչ պակաս, քան* 350 *բնակչից և վոչ ավելի, քան* 1000 *բնակչից. մինչև* 12000 *բնակիչ ունեցող քաղաքում և քաղաքային ռայոնում ընտրվում է* 35 *դեպուտատ:*

*Գյուղական և ավանային խորհուրդները—մեկ դեպուտատ* 100 *բնակչից. մինչև* 1000 *բնակիչ ունեցող գյուղական և ավանային խորհրդի համար ընտրվում է* 9 *դեպուտատ, իսկ* 2500–*ից ավելի բնակչությամբ՝* 25 *դեպուտատից վոչ ավելի.*

*Աշխատավորների դեպուտատների յուրաքանչյուր շրջանա–*

յին, քաղաքային, գյուղական և ավանային խորհրդի ընտրական նորմաները սահմանվում են «Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրությամբ», սույն հոդվածում նշված ընտրական նորմաների սահմաններում»:

Ի ստ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Նախագահ՝ Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
Ի ստ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Քարտուղար՝ Ռ. ԳՅԱՆՋԵՅԱՆ

2 սեպտեմբերի 1939 թ.
քաղ. Երևան:



## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ) 19-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՑԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը վորոշում է՝

Երևանի նոր գյուղական շրջան կազմվելու կապակցությամբ փոփոխել Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Օրենքի) 19-րդ հոդվածը և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝

Ազիզբեկովի, Ալագյազի, Ալավերդու, Ախտայի, Աղինի, Ամասիայի, Աշտարակի, Ապարանի, Արթիկի, Բասարգեչարի, Գորիսի, Դիլիջանի, Դյուզքենդի, Երևանի, Զանգիբասարի, Թալինի, Իջևանի, Կալինինոյի, Կիրովականի, Կոտայքի, Կրասնոսելսկի, Հոկտեմբերյանի, Ղամարլուի, Ղարաբաղլարի, Ղափանի, Ղուկասյանի, Մարտունու, Մեղրու, Միկոյանի, Նոյեմբերյանի, Նոր-Բայազետի, Շամշադինի, Սևանի, Սիսիանի, Սպիտակի, Ստեփանավանի, Վաղարշապատի ու Վեդու շրջաններից և շրջանների կազմի մեջ չմտնող Երևան ու Լենինական քաղաքներից, վորոնք առանձնացված են վորպես ինքնուրույն վարչական միավորներ և անմիջականորեն յենթարկվում են Հանրապետական որգաններին»:

Ի ստ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Նախագահ՝ Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
Ի ստ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Քարտուղար՝ Ռ. ԳՅԱՆՋԵՅԱՆ

2 սեպտեմբերի 1939 թ.
քաղ. Երևան:

յին, քաղաքային, գյուղական և ավանային խորհրդի ընտրական նորմաները սահմանվում են «Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրությամբ», սույն հոդվածում նշված ընտրական նորմաների սահմաններում»:

Ի տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Նախագահի՝ Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
Ի տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Քարտուղարի՝ Ռ. ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 սեպտեմբերի 1939 թ.
քաղ. Յերևան:



## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) 19-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը վորոշում է՝

Յերևանի նոր գյուղական շրջան կազմվելու կապակցությամբ փոփոխել Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Որենքի) 19-րդ հոդվածը և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝

Ազիզբեկովի, Ալագյազի, Ալավերդու, Ախտայի, Աղինի, Ամասիայի, Աշտարակի, Ապարանի, Արթիկի, Բասարգեչարի, Գորիսի, Դիլիջանի, Դուզքենդի, Յերևանի, Զանգիբասարի, Թալինի, Իջևանի, Կալինինոյի, Կիրովականի, Կոտայքի, Կրասնոսելսկի, Հոկտեմբերյանի, Ղամարլուի, Ղարաբաղլարի, Ղափանի, Ղուկասյանի, Մարտունու, Մեղրու, Միկոյանի, Նոյեմբերյանի, Նոր-Բայազետի, Շամշադինի, Սևանի, Սիսիանի, Սպիտակի, Ստեփանավանի, Վաղարշապատի ու Վեդու շրջաններից և շրջանների կազմի մեջ չմտնող Յերևան ու Լենինական քաղաքներից, վորոնք առանձնացված են վորպես ինքնուրույն վարչական միավորներ և անմիջականորեն յենթարկվում են Հանրապետական որգաններին»:

Ի տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Նախագահի՝ Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
Ի տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության
Քարտուղարի՝ Ռ. ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 սեպտեմբերի 1939 թ.
քաղ. Յերևան:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ) 47–ՐԴ ՅԵՎ 53–ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

*Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի* 1939 *թ. սեպտեմբերի* 2–*ի՝ Հայկական ԽՍՀ Թեթև արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատը բաժանելու օրենքին համապատասխան, փոփոխել Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Օրենքի)* 47–*րդ ու* 53–*րդ հոդվածները և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝*

*«Հոդված* 47*. Հայկական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կազմով՝*

*Հայկական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ,*

*Հայկական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի տեղակալներ,*

*Հայկական ԽՍՀ Պետական Պլանային Հանձնաժողովի Նախագահ,*

*Հայկական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարներ՝*

*Սննդի արդյունաբերության,*
*Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության,*
*Թեթև արդյունաբերության,*
*Տեքստիլ արդյունաբերության,*
*Անտառային արդյունաբերության,*
*Հողագործության,*
*Ֆինանսների,*
*Առևտրի,*
*Ներքին գործերի,*
*Արդարադատության,*



*Առողջապահության,*
*Լուսավորության,*
*Տեղական արդյունաբերության,*
*Կոմունալ տնտեսության,*
*Սոցիալական ապահովության,*
*Ավտոմոբիլային տրանսպորտի,*

*Արվեստի Գործերի Վարչության Պետ,*

*Ընդհանուր-միութենական ժողովրդական կոմիսարիատների լիազորներ»:*

*«Հոդված* 53*. Հայկական ԽՍՀ միութենական-հանրապետական ժողովրդական Կոմիսարիատների թվին են պատկանում Հայկական ԽՍՀ հետևյալ ժողովրդական կոմիսարիատները.*

*Սննդի արդյունաբերության,*
*Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության,*
*Թեթև արդյունաբերության,*
*Տեքստիլ արդյունաբերության,*
*Անտառային արդյունաբերության,*
*Հողագործության,*
*Ֆինանսների,*
*Առևտրի,*
*Ներքին Գործերի,*
*Արդարադատության,*
*Առողջապահության»:*

*Ի. տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահի՝* Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի. տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղարի՝* Ռ. ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 *սեպտեմբերի* **1939** *թ.*
*քաղ. Յերևան:*

## ՆՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

*Հաստատել Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության 1939 թ. հուլիսի 29-ի հրամանագիրը՝ Հայաստանի մի շարք շրջաններում նոր գյուղական խորհուրդներ կազմելու մասին:*

*Ի. տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահի՝* Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի. տ. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղարի՝* Ռ. ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 *սեպտեմբերի* 1939 *թ.*
*քաղ. Յերևան:*



## ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՈԼՈՏՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ՌԱՅՈՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

*Հաստատել Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագիրը Յերևան քաղաքի սահմաններում Մոլոտովյան քաղաքային նոր ռայոն կազմելու մասին:*

*Ի. ո. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահի՝* Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի. ո. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղարի՝* Ռ. ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 *սեպտեմբերի* 1939 *թ.*
*քաղ. Յերևան:*

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂԹ- ՎԸՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱ- ՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

*Հաստատել Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագիրը «Հայկական ԽՍՀ Թեթև արդյունաբերության Ժողովրդական կոմիսարիատը բաժանելու մասին»:*

*Ի. ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝* Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի. ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղար՝* Ռ. ԳՅԱՆՋԵՅԱՆ

2 *սեպտեմբերի* **1939** *թ.*
*քաղ. Երևան:*



## ՅԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

1. *Կազմակերպել նոր գյուղական շրջան՝ կենտրոնը համարելով Յերևան քաղաքը:*

2. *Յերևանի նոր շրջանի տերիտորիայի մեջ մտցնել՝*

*ա. Յերևանի մերձքաղաքային գոտուց՝ Վերին Ջրրախի գյուղխորհուրդը (Վերին Ջրրախ, Ներքին Ջրրախ, Ներքին Շենգավիթ գյուղերը), Նոր Կողբի գյուղխորհուրդը, Նոր Արեշ, Նոր Կյանք, Սովետաշեն, Նոր Սեբաստիա և Նոր Մալաթիա ավանները, Նորք արվարձանը, Հայկոոպերվարբեսաի խորհտնտեսությունը, «Արարատ» տրեստի 1-ին խորհտնտեսությունը, Դալմայի XVIII համագումարի անվան կոլտնտեսությունը, Ներքգործժողկոմատի և ուղղիչ աշխատանքային գաղութի խորհտնտեսությունները, Փորձնական Զոնալ կայանը և Արմֆանի բուսաբանական այգին:*

*բ. Ղամարլուի շրջանից՝ Շորբուլաղ գյուղը.*

*գ. Կոտայքի շրջանից՝ Ջրվեժի և Ավանի գյուղխորհուրդները.*

*դ. Զանգիբասարի շրջանից՝ Նորագավիթ գյուղխորհուրդը:*

*Ի. ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝* Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի. ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղար՝* Ռ. ԳՅԱՆՋԵՅԱՆ

2 *սեպտեմբերի* **1939** *թ.*
*քաղ. Երևան:*

## ԸՆԿ․ Ա․ Գ․ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

*Ընկ․* Արկադի Գերասիմի Մինասյանին *հաստատել Հայկական ԽՍՀ Պետական Պլանային Հանձնաժողովի Նախագահ։*

*Ի ա․ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության*
*Նախագահ՝* Հ․ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի ա․ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության*
*Քարտուղար՝* Ռ․ ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 *սեպտեմբերի* 1939 *թ․*
*քաղ․ Յերևան։*



## ԸՆԿ․ ԸՆԿ․ Հ․ Ա․ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՅԵՎ Գ․ Հ․ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը* վորոշում է՝

*Հաստատել Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերը հետևյալ նշանակումների մասին՝*

*Ընկեր* Հակոբ Արտաշեսի Հակոբյանին—*Հայկական ԽՍՀ Թեթև արդյունաբերության Ժողովրդական Կոմիսար։*

*Ընկեր* Գուրգեն Հակոբի Հովհաննիսյանին—*Հայկական ԽՍՀ Տեղական արդյունաբերության Ժողովրդական Կոմիսար։*

*Ի ա․ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության*
*Նախագահ՝* Հ․ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

*Ի ա․ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության*
*Քարտուղար՝* Ռ․ ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 *սեպտեմբերի* 1939 *թ․*
*քաղ․ Յերևան։*

## ԸՆԿ. Բ. Գ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼԻԱԶՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը վորոշում է՝

Հաստատել Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագիրը՝ ընկ. Բագրատ Գեվորգի Նալբանդյանին ԽՍՀ Միության Կապի Ժողովրդական կոմիսարիատի Հայկական ԽՍՀ Լիազոր նշանակելու մասին:

Ի ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահի՝ Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

Ի ա. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղարի՝ Ռ. ԳՅԱՆՋԵՑՅԱՆ

2 սեպտեմբերի 1939 թ.
քաղ. Ցերևան:

им. А. Мясникова



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 1-ի առավոտյան)

Եջ


Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Ցերրորդ սեսիայի բացումը . . . 5
Հայկական ԽՍՀ Ցերրորդ սեսիայի օրակարգի հաստատումը . . . . 5
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Օրենսդրական ենթադրությունների Հանձնաժողովի նախագահ՝ դեպուտատ Հ. Թ. Արաքյանի զեկուցումը 6
Դեպուտատ Ս. Ա. Թումյանի ճառը . . . . . . . . . . 17
Դեպուտատ Գ. Ա. Ստեփանյանի ճառը . . . . . . . . . 21
Դեպուտատ Գ. Հ. Սիմոնյանի ճառը . . . . . . . . . 23
Դեպուտատ Ա. Հ. Սավադյանի ճառը . . . . . . . . . 26
Դեպուտատ Ռ. Տ. Աբրահամյանի ճառը . . . . . . . . 30
Դեպուտատ Արասով Իբիշ Վալի օղլիի ճառը . . . . . . . 33
Դեպուտատ Լ. Մ. Մելքոնյանի ճառը . . . . . . . . . 36
Դեպուտատ Ա. Ս. Ցեղխազարյանի ճառը . . . . . . . . 38
Դեպուտատ Ռ. Ե. Ազիզբեկյանի ճառը . . . . . . . . . 43


### ՑԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 1-ի յերեկոյան)


Դեպուտատ Ե. Ա. Աստվածատրյանի ճառը . . . . . . . . 48
Դեպուտատ Դ. Ֆ. Մոկշանովի ճառը . . . . . . . . . 52
Դեպուտատ Ա. Դ. Պետրոսյանի ճառը . . . . . . . . . 55
Դեպուտատ Խ. Հ. Դավթյանի ճառը . . . . . . . . . 56
Դեպուտատ Հ. Հ. Մարտիրոսյանի ճառը . . . . . . . . 57
Դեպուտատ Պ. Ս. Պետրոսյանի ճառը . . . . . . . . . 63
Դեպուտատ Ե. Ա. Շիգանյանի ճառը . . . . . . . . . 66
Դեպուտատ Ս. Խ. Ղազարյանի ճառը . . . . . . . . . 69
Դեպուտատ Մ. Ս. Հարությունյանի ճառը . . . . . . . . 73
Դեպուտատ Ա. Կ. Մուրադյանի ճառը . . . . . . . . . 75
Դեպուտատ Գ. Ա. Հովհաննիսյանի ճառը . . . . . . . . 78


### ՑԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 2-ի առավոտյան)


Դեպուտատ Ա. Ա. Մակարյանի ճառը . . . . . . . . . 83
Դեպուտատ Ա. Ե. Դանիելյանի ճառը . . . . . . . . . 86
Դեպուտատ Ս. Ա. Իսրայելյանի ճառը . . . . . . . . . 88

Էջ

Դեպուտատ Բայրամով Կաչայ Նեսո Կուլի օղլիի ճառը . . . . . . . 91
Դեպուտատ Ի. Ա. Գուսարովի ճառը . . . . . . . . . . . . . 92
Դեպուտատ Ա. Մ. Մովսիսյանի ճառը . . . . . . . . . . . . 95
Դեպուտատ Ա. Թ. Մանուկյանի ճառը . . . . . . . . . . . . 97
Հայկական ԽՍՀ ԺԿԽ Նախագահի տեղակալ ընկ. Լ. Գ. Հովսեփյանի ճառը 98
Դեպուտատ Գ. Ա. Ղևոնդյանի ճառը . . . . . . . . . . . . 102
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Օրենսդրական Յենթադրությունների Հանձնաժողովի նախագահ՝ դեպուտատ Հ. Թ. Արուշյանի յեզրափակման խոսքը . . . . . . . . . . . . . . 107
«Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրության» հաստատումը . . . . . . . . . . . 108
Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Օրենքի) 116-րդ հոդվածը փոփոխելու և լրացնելու նախագծի հաստատումը . . . . . 120
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության քարտուղար՝ դեպուտատ Հ. Ա. Գալուստյանի զեկուցումը Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերկրորդ և Յերրորդ սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում Նախագահության ընդունած և Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի հաստատմանը յենթակա հրամանագրերի մասին 122
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Յերրորդ սեսիայի փակումը . . 126

Հավելվածներ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների կանոնադրությունը» հաստատելու մասին . . . . . . . . . . . 129
Կանոնադրություն Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային խորհուրդների ընտրությունների . . . . . . . . . . . . . . . . 130
Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Օրենքի) 116-րդ հոդվածը փոփոխելու և լրացնելու մասին . . . . . . . . . . 153
Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Օրենքի) 19-րդ հոդվածը փոփոխելու և լրացնելու մասին . . . . . . . . . . . . 155
Հայկական ԽՍՀ Սահմանադրության (Հիմնական Օրենքի) 47-րդ և 53-րդ հոդվածները փոփոխելու և լրացնելու մասին . . . . . . . . 156
Նոր գյուղական խորհուրդներ կազմելու վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերը հաստատելու մասին . . . . . . . . . . . . . . . . . . . 158
Յերևան քաղաքի սահմաններում Մոլոտովյան քաղաքային նոր ռայոն կազմելու վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագիրը հաստատելու մասին . . . . . . 159
Հայկական ԽՍՀ Թեթև արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատը բաժանելու վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագիրը հաստատելու մասին . . . . . . 160
Յերևանի նոր շրջան կազմելու մասին . . . . . . . . . . . . 161



Էջ

Ընկ. Ա. Գ. Մինասյանին Հայկական ԽՍՀ Պետական Պլանային Հանձնաժողովի նախագահ նշանակելու վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագիրը հաստատելու մասին . . . . . . . . . . . . . . . . . . . . 162
Ընկ. ընկ. Հ. Ա. Հակոբյանին և Գ. Հ. Հովհաննիսյանին Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարներ նշանակելու վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերը հաստատելու մասին . . . . . . . . . . . . . . . . . . 163
Ընկ. Բ. Գ. Նալբանդյանին ԽՍՀ Միության կապի ժողովրդական կոմիսարիատի Հայկական ԽՍՀ Լիազոր նշանակելու վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագիրը հաստատելու մասին . . . . . . . . . . . . . . . . . 164

Խմբագրեցին Գուլուստյան Հ. և Ալեքսանյան Տ.
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեչյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

---

Գլավլիտի լիազոր, Վ. 1119, հրատ. № 783
Պատվեր № 33, տիրաժ 4000
Թղթի չափսը 62×94 $1/_{16}$ (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
$10^1/_2$ տպ. մամուլ, $5^1/_4$ թերթ թուղթ։
Հանձնվել է արտադրության 29/I 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 25/III 1940 թ.
Գինը 6 ռ., կազմը 3 ռ.

---

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
Երևան, Ալլավերդյան № 65

13

8

ՀՀ Ազգային գրադարան
NL0198149